



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1453

03 AUG 2009

2(075)

F-745

# ԶԵՐՆԱՐԿ

## ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

Բ. ՏԱՐԻ

ԿՅԱ ԿՐՏՍՒԵՐ ՆՅԻՍՊԱՏՐԱՍԿՎԱՆ Բ. ԲՈԺԵՆՈՒՄՆ

ԾԱՂԿԱՔԱԴ. ՀԻՒՍՈՒԱԾՔ

Տին եւ նոր ուխտի եւ Տէրունական պատմութիւններից, շարականներից, ժամանուաններից, աղօթքներից, սաղմոններից եւ այլն:

Մարիամեան—Յովնահեան օր. Դպրոցի սաների համար

ԱՐՄԵՆ ԱՀԱԳ.-ՔԱՀ. ԲԱԳՐԱՏՈՒԽԻ

ԹԻՖԼԻՍ  
ՅԱԿԱՐԱՆ Տ. Մ. ՌՕՏԻԿԱՆԱՅԻ  
1905

26 FEB 2013

1453

26752

# ԶԵՐՆԱՐԿ

## ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

Բ. ՏԱՐԻ

ԿԸՄ ԿՐՑՍԵՐ ՆՇԽԵՊԵՏՐԵՈՒՏԱԿԵՆ Բ. ԲՇԺՆՈՒՄՆ

ԾԱՂԿԱՔԱՂ ՀԻՒՍՈՒԱԾՔ

Տին եւ նոր ուխտի եւ Տէրունական պատմութիւններից, շարականներից, ժամամուտներից, աղօթքներից, սաղմոսներից եւ այլն:


31901

271

Մարիամեան—Յովանեան օր. Դպրոցի սաների համար

ԱՐՄԵՆ ԱՀԱԳ.ՔԱՀ. ԲԱԴՐԱՑՈՒԵՒ

Թ. Ի Ֆ Լ Ի Ս  
ՏՊԱՐԱՆ Տ. Մ. Ա-ՕՒՆԵՎԱՆՅԻ  
1905



Одобрено Кавказскимъ Учебнымъ Комитетомъ, 12 Сен-  
тября 1903 г. № 13,827.

Համարձու հրամանի նորին Ս. Օծութեան Վե-  
հափառ Հայրապետի ազգիս Տ. Տ. Մկրտչի, Դիւանս  
թոյլատը տպագրութիւն Դասագրոյս որ ընդ անու-  
ամբ «Զեռնարկ Կրօնական Գիտելիքների» վաներա-  
ցուցանելով ստորագրութեամբ եւ դրոշմամբ կնքոյ Հայ-  
րապետական Դիւանի:

Ի 18 Սեպտեմբերի 1902 ամի ի Տիկին:

Դիւանապետ Կորին Վարդապետ

Дозволено цензурою, Тифлисъ. 13 Апрѣля 1905 г.



Ա Զ Դ.

Երկրորդ տարուայ կամ Կրտսեր նախապատրաստական Բ. բաժանման համար պատրաստած այս Զեռնարկը շունի նոյն ներքին կազմը, բնաւորութիւնն ու պատկերը՝ որը ունէր առաջին տարուայ կամ կրտսեր նախապատրաստականի Ա. բաժանման համար պատրաստածս։ Սա տարբեր է նրանից, որովհետև այնտեղ գրել —կարգալ չգիտցողների հետ ունէինք գործ և ձեռնարկ տալ նոցա ձեռքը չէր կարելի. իսկ այստեղ՝ ձեռնարկից կարող են օդտուել սաները, թէս դարձեալ ուսուցչի զեկավարութեամբ։ Եյտեղ ևս ուսուցիչը կընտրէ սաներից ձեռնասներին և դասը կպատկերացնէ, ինչպէս նախընթաց աարուայ դասընթացում։ Պատկերացնելու դասերը նրանք են՝ որոնց առջև պատկեր եմ գրել բովանդակութեան գլխակարգութեանց մէջ։

Պէտք է և այն ասեմ—որ դասը սաների մէջ պատկերացնելու գործը՝ բաւական աղմուկ է պատճառում դասարանում, որովհետև ամենին էլ ուզում են տեղներից վեր կենալ և նայել գործողներին, բայց և շատ կենդանանում է դասը և շատ հետաքրքրական է լինում։ Հարկաւոր է խիստ կարգապահութիւն։

Եյս ծաղկաքաղ հիւսուածքը բնագիրներով է ընթանում, որպէս և սովորական ընդունուած ձև է. ուսկայն այդ բաւական չէ, չոր նիւթը—բնագիրը՝ այս հասակի սաների համար միշտ չոր ու ցամաք կմնայ, եթէ ուսուցիչը չ'ջանայ իւր բացատրական ազով համեմել բնագիրը կամ չոր նիւթը, դրանով և կկենդանացնէ չոր նիւթը և դասը կլինի կենդանի. իսկ դասը կենդանաց-

Նելու համար՝ անհրաժեշտ է այն ձեռվի դասախսելո՝ որ ձեռվի կազմուած է առաջին տարուայ Չեռնարկս—պէտք է աշխատել, ջանք անել՝ սաների լեզուն բանալ, միտքը սրել, ուշագրութիւնը գրաւել՝ իրենց պատմել տալով, իրենց մտածել տալով, իրենց խօսել տալով, տուած հարցը իրենց գտնել տալով. և մինչև անգամ այնքան պէտք է հետարբրել սաներին և վրայ ձգել՝ որ դասի իմաստը կամ բարոյականն էլ իրանք գուրս բերեն. թնդ սխալ լինի այն, ոչինչ. այդ մեծ հաճոյք կպատճառէ գտնող և իմաստը գուրս բերող սաներին և դասը կկենդանանայ և հետարբրիր կլինի. առանց մոռանալու սակայն որ ուսուցի զեկավարութիւնը անհրաժեշտ է, Գէթ այսպէս կարելի է հեռացնել սաներից - թէ փոքրերից և թէ մեծերից այն զզուանքը՝ որ տածում են նորա զէպի կրօնական զիտելիքները, որպէս դպրոցական՝ նոյնպէս և զործնական կեաների մէջ. և այդ անպտղութիւնը՝ չը արդեօք արդիւնք չոր ու ցամաք դաստութեան և անգիրների սերտողութիւններով սաների ուղեղները ծանրաբեռնելուն:

Թէս այս ձեռնարկիս մէջ դասական նիւթին ճռի տեղ է տուած և ծաւալը մեծ է—մանաւանդ գրաքառ շարականները, աղօթքները, իմաստները և այլն. սակայն պարտագիր չէ ամբողջը լրացնելու. իսկ կարող ուսուցիչը, ընդունակ և յառաջագէմ դասարանը և դասական ժամերի բաւարար թիւը այդ շարիքի առաջն էլ կարող են առնել. չկարողացան՝ բարի. ինչքան կարող են՝ այնքան անեն. բայց՝ լաւ անեն, որ սաները օգտուեն, քանակը ոչինչ, որակն է մեզ պէտք. մէկը կարող է ամբողջ Սուրբ Գիրքը գիտենալ, բայց ոչ ինքն է Սուրբ Գրքի մէջ և ոչ Սուրբ Գիրքն է իւր մէջ. իսկ մի ուրիշը տասը հատուած է ծաղկաքաղ արել նոյն Սուրբ Գիրքից՝

և մարմնացրել է իւր մէջ Սուրբ Գրքի բուն էական ոգին և ինքն էլ դարձել է մարմնացեալ Սուրբ Գիրք. բանակը միշտ պիտի խոնարհի որակի առաջ: Նիւթի ճոխութիւնն է. թող լինի՝ ինչ կայ, քանի պարտագիր չէ. թնդ ուսուցիչը ընտրութիւն անէ դասական գործը յաջողութեամբ յառաջ մղելու համար:

Այս բաժանման մէջ պիտի լինի կրկնութիւն անցեալ տարուայ դասընթացի և նոյն ձեռվի խնչպէս Ա. տարուայ դասատետրում նշանակուած էին կրկնութեան դասեօք. և դրա համար հարկաւոր է նուիրել ամբողջ Սեպտեմբերը:

Արսէն աւագ քահ. Բագրատոնի:

## ԾՐԱԳԻՐ

### ԴԱՍԼՂՆԹԱՅԻ

Բ. ՏԱՐԻ ԿԱՄ ԿՐՏՍԵՐ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆԻ Բ. ԲԱԺԱՆՄԱՆ

### Ա. ԲԱԺԻՆ

Նախընթաց տարուալ աշխարհաբառ սովորած աղօթքների  
գրաբառը<sup>1)</sup>:

ա. Ծնողական տան աղօթք—1. Ծնողների և որդւոց—ա. Պատուեա զհայր...: 2. Եղբայրների և քորերի—բ. Զի՞ բարի կամ զի՞...: զ. Եղբայր յեղբօրէ օդնեալ...:

բ. Տաճարի կամ Մեծ-Հօր տան աղօթք—դ. Մտիցի տուն քո...: ե. Ուրախ եղէ...:

դ. Ուսման տան կամ Դպրոցի աղօթք—1. զ. Եկամբ որդիք ե...: 2. Դասից առաջ—է. Ամենաբարի Աստուած...: 3. Դասից յետոյ—ը. Գոհանամք զքէն, Արարիչ...:

դ. Ապրուատի եւ գործի աղօթք—թ. Զգործս ձեռաց...: Զվաստակս ձեռաց...:

ե. Կեանքի գոյութեան եւ ծաշի աղօթքներ—1. ժ. Տէրունական աղօթք—չայր մեր...: 2. Ճաշից առաջ

<sup>1)</sup> Ամբողջ սեպտեմբերը, և եթէ ժամանակը չներէ, նաև հոկտեմբերի կէսը պիտի նուիրել անցեալ տարուալ սովորած աշխարհաբառ աղօթքների գրաբառի սերտողութեանը զուգընթացաբար տանելով կրկնութեան դասերին:

- ժա. Աչք ամենեցուն...: 3. Ճաշից յետոյ—ժը. Տէր  
Յիսուս լցաք...:  
4. Թագաւորի աղօթք—ժզ. Տէր, պահեա զկայսրն  
մեր...:  
է. Հայրապետի աղօթք—ժդ. Իքո իջեալ տեղի...:

I. ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

F. Բ Ա Ժ Խ Ա Ն

ԵԱՂԿԱՔԱՂ ՀԻՒՍՈՒԱԾՔ

Հին եւ նոր ուխտի սուրբ պատմութիւններից:

1. Աշխալհի արարչագործութիւնը և Մարդոյ ստեղծագործութիւնը:
2. Երջանիկ Քրախտը կամ Անմեղութիւն:
3. Կորուսեալ գրախտը կամ Պատուիրազմեցութիւն:
4. Աստուծոյ Գատաստանը:
5. Աստուծոյ Անէծքը՝ իբրև Պարտադիր Օրէնք:
6. Աստուծոյ տուած պատիժը:
7. Աստուծոյ Խնամքը և Փրկութեան Խոստումը:

II. ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

8. Փրկչի Անկալութիւնը:
9. Սուրբ Աստուածածնի Ծնունդը:
10. Երեք տարեկան Մարիամ Սուրբ Կոյսի ընծայութիւնը Տաճարին:
11. Մարիամ Սուրբ Կոյսի Աւետումը: —ժե. Ճարական բարեխօսութեան Սուրբ Աստուածածնի—Անկալի՝ աղքատաց հոգւով...:

Նիմք...: ժզ. Ճարական Սուրբ Աստուածածնի Աւէտման —Ուրախացիր Սրբուհի—Կանոն Աստուածայայտնութեան ճրագալուցին:

12. Հրեշտակի աւէտիքը և Զաքարիայի պապանձումը:

13. Յովհաննէս Մկրտչի ծնունդը:

14. Յիսուս Քրիստոսի ծնունդը: —ժէ. Կանոն Աստուածայայտնութեան առաջին աւուրին. Ճարական ծնընդիան Յիսուսի—Խորհուրդ մեծ և սրանչելի...:

15. Հովինների երկրագութիւնը: —ժը. Օրհներգ հրեշտակաց—Փառք ի բարձունա...:

16. Քառամեօրեայ Քրիստոսի Տաճար գալը կամ Տեառնընդառաջ: Պատկեր. Սիմէօն Ծերունին. Մարիամ Ս, Կոյսը. Աննա մարգարէուհին: Նոցա խօսքերը:

III. ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Ժթ. Տաղ Տեառնընդառաջի—Քրիստոս փառաց լժագաւորն...:

17. Յովհաննէս Մկրտչի քարոզութիւնը: Պատ՛ներ. Պատմովը. Քարոզովը. Ժողովուրդը. Մաքսաւորները. Զինուորները և իւրաքանչիւրի խօսքերը:

18. Քրիստոսի Մկրտութիւնը: —ի. Տաղ Մկրտութեան—Ով գարմանալի...:

Հա. Աւետարան Մկրտութեան—Յայնժամ գայ Յիսուս...:

19. Լերան քարոզը—Խնն երանութիւնը: —իզ. Երանի՝ աղքատաց հոգւով...:

**Քրիստոսի ասած առակները —**

20. Ողորմած Սամարացին։ Պատկեր։ Պատմող։ Օրինակներ։ Յիսուսը. Վիրաւորը. Աւազակները. Քահանան. Ղետացին. Սամարացին. Պանդոկապետը։

21. Փարիսեցին և Մաքսաւորը։ Պատկեր։ ա. սեղանը—պատմող. բ. սեղանը—փարիսեցի. գ. սեղանը—մաքսաւոր. կամ հատ հատ։

22. Անառակ որդին։ Պատկեր։ Պատմողը. Յիսուսը. Հայրը. Կրտսեր որդին. Նորանախկին բարեկամները. Նորա զզջումը և դադրձը. Երէց որդին. Ժառան. Հալրը. Իւրաքանչիւրի վարմունքն ու խօսքը։

23. Հարուստը և աղքատ Ղազարոսը։ Պատկեր։ կամ նստարաններով և կամ հատ հատ—Հարուստը. Ղազարոսը. Արբահամը։

24. Քրիստոսի արած բժշկութիւնները <sup>1)</sup>։

<sup>1)</sup> Հիւանդութիւնները խմբերի բաժանել—կոլեր, խուռ ու համրեր, կաղեր, անդամալուծներ, բորոտներ, ջրգողեալներ, մեռեալներ. բարուապէս հիւանդներ։ Ուսուցիչը համեմատական գիծ պիտի քաշէ մարմնաւոր տկարութիւնների մէջ—թէ որն է ծանր, բնչից է զրկուած...ևալլն. լեառ նոյն տկարութիւնները համեմատել հոգեկան կամ բարուական տկարութեան հետ և ստորդ եզրակացութիւնը դուրս բերել. որ աչքով կուրն է աւելի թշուառ՝ թէ մտքով կուրը. անդամալուծն է աւելի անբաղդ՝ թէ ծովն ու ալարկութը, խուռ ու համրն է աւելի խղճալի՝ թէ կամակոր—իրա առածի, մեծամիտ, ինքնահաւան պատանին ու երիտասարդը, որ խելացի խօսքի ու խորհրդի առաջ դիտմամբ խլանում են ու համրանում. բորոտը, կազմ...ևալլն. աւելի են թշուառ՝ թէ ստախօսը, գողը, խօսք տանող—բերողը կամ խաբարբղանը, ականջ դնողը, բանբասողը... ևալլն ևալլն. Փորձել եմ—որ տա վարժութիւնը շատ է աղնուացնում սաների ոիրտն ու հոգին. և շատերը խոստվանում են իրենց պակասութիւնները չէնց դասարանումը, խօսք տալով—այլ ես չանել։

25. Ղաղարոսի յարութիւնը։ Պատկեր. Մարթայ. Մարիամ. Սպառոններ. Յիսուս և Առաքեալներ։ Նոյա խօսքերը։ Ղաղարոս յարուցեալ։

26. Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ կամ Ծաղկազարդ։ իզ. Կանոն Ծաղկազարդ Կիւրակէին—Յորժամ եկն Յիսուս...։

27. Բաղարջակերաց Զատիկը. Յուղայի մատնութեան գուշակութիւնը. Ոտնալուայ. Խորհրդաւոր ընթրիք և Պետրոսի ուրացութեան գուշակութիւնը։ ատկեր, Իւրաքանչիւր պատկեր տռանձին կազմել սաներից։ իղ. Կանոն Մեծի Հինգչարաթին—Ծարական Ոտնալուայի —Այսօր կանդնեցաւ...։ իե. Ճարական Հաղորդութեան —Բաշխէ զմարմին... և Որ կազմեցեր...։ իզ. Երգ Հաղորդութեան—Քրիստոս պատարագեալ...։

28. Գեթսեմաննեան ալօթքը և Յուղայի մատնութիւնը։ Պատկեր. Առաքեալներ և Յիսուս ալօթական։ Յիսուսի ալօթքը։ Յուղայ և ժողովուրդ։ իէ. Կանոն Մեծի Ուրբաթին—Ծարական Գեթսեմաննեան ալօթքի—գիշերին յորում...։ իը. Երգ Գեթսեմաննեան ալօթքի—Զայնիւ մաղթէր ալօթական...։ իթ. Կանոն Մեծի Ուրբաթին—Ծարական Մատնութեան—Արծաթասիլութեամբն մոլիալ Յուղա...։

29. Կայիշափայ քահանայապետի դատաստանը և Պետրոսի ուրացութիւնը։ Պատկեր. Ժողովուրդ և Պետրոսի ուրացութիւնը։ լ. Երգ ուրացութեան Պետրոսի—Նոր հօտին փոքու ընտրեալ...։

30. Պիղատոսի դատաստանը և Յիսուսի Խաչելութիւնը։ Պատկեր. Յիսուս ի Խաչին։ Երկիրմեան աւազակները. Նոյա խօսքերը. Յիսուսի պատասխանը. Փողովուրդ—խօսքերը. Յիսուսի խօսքը Մօրը և սիրելի աշակերտին։ լա. Կանոն Մեծի Ուրբաթին—Ծարական

Խաչելութեան—Ով սրանչելի...: լզ. Երդ Խաչելութեան  
և մահուան - Ետուն ըմբել...: լզ. Ըարական և Սաղմու  
Խաչի—Խաչի քո Քրիստոս...:

31. Յիսուսի Թագումը և գերեզմանի կնքելը: Պատ-  
կեր. Յովսէփ և Պիղատոս. Քահանայապետները, Իշխան-  
ները, Փարիսեցիները և նոցա խորհուրդը, Պահապան  
զինւորներ: լզ. Կանոն մեծի Հարաթուն Թագման Տեառն  
Յիսուսի—Հարական Թագման Յիսուսի և կնքեցման Գե-  
րեզմանին—Պարզեատուն...:

32. Յիսուսի Յարութիւնը: Պատկեր. Պահապան  
զինւորների փախուստը՝ Քահանայապետները. նոցա  
խօսքերը: Մնացած պատկերը անցեալ տարուայ դասըն-  
թացից յիշել: լե. Կանոն Սրբոյ Զատկին—Հարական  
Յարութեան—Եյսօր յարեաւ...: լզ. Ժամամուտ Յարու-  
թեան—Քրիստոս Յարեաւ ի մեռելոց...: լէ. Աւետա-  
րան յետ Յարութեան - Իսկ մետասան աշակերտն...:

33. Յարութիւնից յետոյ Յիսուսի յայտնուիլը իւր  
աշակերտներին և Պետրոսի երեք անգամ ուրացութեան-  
երեք անգամ ներելը: Պատկեր. Թովմայի խօսքերը և  
Յիսուսի երեալը Վերնատան մէջ:—Հարականներ և եր-  
գեր Յիսուսի Յարութիւնից յետոյ կատարուած անց-  
քերի:—լզ. Պետրոսի ուրացութեան ներման երդ—Հեոր-  
հեալ վիմին եկեղեցւոյ...: լթ. Յիսուսի յայտնուիլը  
աշակերտներին Վերնատան մէջ—Հարական յետ Յարու-  
թեան—Թրօքն փակելովք...: Որ յեկրորդի լինելու-  
թեանս...: իս. Թովմայի անհաւատութիւնը և հաւատա-  
լը—Հարական յետ յարութեան—Երեցար յարուցեալ  
եկեղեցւոյ...: Սարսելով Թովմայի...: իսա. Կապելու և  
արձակելու իշխանութիւնը կամ իրաւունքը—Հարական  
յետ Յարութեան—Որ տիրականդ իշխանութեան...:

IV. ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.

34. Յիսուսի Համբարձումը: իսք. Կանոն Համբարձ-  
ման Քրիստոսի—Հարական Համբարձման—Համբարձաւ  
Տէրն մեր...: Համբարձաւ Տէրն մեր Քրիստոս...:

35. Հոգեգալուստ: իսզ. Կանոն Պենտէկոստէի—  
Հարական Հոգեգալուստեան—Առաքելոյ...:

Ա. ԲԱԺԻՆ

Անցեալ տարուայ աշխարհաքառ սովորած աղօթքնե-  
րի գրաբառը:

Ա. ԾՆՈՂԱԿԱՆ ՏԱՆ ԱՂՕԹՔ:

1. ԾՆՈՂԱԿԵՐԻ և ՈՐԴԻՈՅՑ—

ա. Պատուեա զհայր զո եւ զմայր, զի բարի լինիցեր  
քեզ եւ երկայնակեաց լիցիս և վերայ երկրի:

Պատուիր և մեծարանք ցոյց տար հօրդ և մօրդ.  
որպէսզի քեզ բարի լինի և երկար ապրիս աշխարհիս  
վերայ: Տաննարանեայ պատղամաց երորդ յօդուած:

Ծանօթութիւն—Բնչպէս պատուել ծնողներին. Բնչ  
մեծարանք ցոյց տալ նրանց. և Բնչ բարիք, Բնչ օգուտ  
դրանից. Բնչպէս հասկանալ երկար կեանք ունինալլ<sup>1)</sup>:

1) Այս և ալսպիսի հարցերով ուսուցելը պիտի խօսեցնէ,  
վարժեցնէ սաներին—թէ խօսքի պաշարը, թէ ըմբռնողական  
ուժը, թէ կրօնական—բարուական կողմը / զարգացնելու  
և թէ կրթական գործին խթան տալու և յաջողութեամբ լա-  
ռաջ տանելու համար. ալսպէս՝ չոր ու ցամաք նիւթը ոչ մի-  
այն օգուտ չի տալ՝ ալլ և վնասակար կլինի սաների զարգաց-  
մանը. լաւ է քիչ՝ և ինչ. քանթէ շտո՛ և ոչինչ: Միշտ կա-  
րելի է օգտուել ա. տարուալ ձեռնարկից նախ զրուցարա-  
կան բացատրութիւններ անել և իտոյ միայն հում նիւթը  
աւանդել:

ա. Հաւ է ունկնդրութիւն՝ քան զգո՞ւ ընտիր. եւ հնագանդութիւն՝ քան զմարապ խոյոց: Ա. Թագ. ԺԵ. 22:  
Հաւ է լսել մեծի բարի խօսքը, խրատը և հնազանդունել ծնողներին, մեծերին, օրէնքին, կանոնին: Քան թէ շադ ու թանկագին մատաղներ անել Աստուծուն: Ծանօթութիւն—ինչ տեսակ մատաղ է սիրում Աստուծ՝ սիրտ՝ թէ զանձ:

2. ԵՂԲԱՑՐՆԵՐԻ ԵՒ ԳՈՅՐԵՐԻ—

ա. Զի՞ ռաքի՞ զմա՞ զի՞ վայելու՞ զի՞ քնակին եղարք ի միասին: Սաղմ. ՃԼԲ. 1.

ի՞նչ լսե է, ի՞նչ գեղեցիկ քան է՝ երբ եղբայրները միասին են ապրում, սիրով են իրար հետ, իրար օվնում են:

գ. Եղբայրյեղբօրէ օգնեալ՝ իզրեւ զբաղաք ամուր. և հզօրէ իզրեւ զհաստատեալ թագաւորութիւն: Առակ. ԺԸ. 15:

Եղբօրից օգնութիւն ստացող եղբայրը՝ ամուր ու անտոփի քաղաքի նման ապահով է և հաստատուն թագաւորութեան նման զօրեղ է<sup>1)</sup>:

Բ. ՏԱՅԱՐԻ ԿԱՄ ՄԵՇ ՀՕՐ ՏԱՆ ԱՂՋԹՔ

Դ. Մտից ի տուն քո. երկիր պազից ի տաճար սորք քո. երկիրից քով: Սաղմ. Ե. 8:

<sup>1)</sup> Եղբայրների միասին ապրելու օգուտները ծախսի և ժողովից—ուտելիքի, հագնելիքի, վառելիքի, բնակավարձի, ծառաների և ալին, բարոլական կողմից—սէր, համեստանութիւն, օգնութիւն, բարի օրինակ, բարոլական և ֆիզքական ոյժ և ալին:

Տէր. Քո երկիրաղը մրտիս՝ կմտնեմ Քո տունի և Տաճարիդ մէջ երկրագնդութիւն կտամ Քեզ:

Ե. Մորախ եղէ՝ ոյք ասէին ցիս. ի տուն Տեսաններթեցուք մեք. Սաղմ. ՃԼԱ. 1:

Ուրախանում էի՝ երբ ասում էին ինձ—արի, գնանք մեր Աստուծոյ տունը—եկեղեցի<sup>1)</sup>:

Գ. ՈՒՍՄԱՆ ՏԱՆ ԿԱՄ ԴՊՐՈՑԻ ԱՂՋԹՔ

Զ. Եկանյք որդիք, եւ զտարուք ինձ. եւ զերկիտ Տեսանն ուսուցից ժեզ: Սաղմ. ԼԳ. 12:


Եկէք որդիք. լսեցէք ինձ, և ես ձեզ կսովորցնեմ—թէ ինչ է Աստուծոյ երկիրաղը, ինչու պիտի վախենալ Աստուծուց<sup>2)</sup>:

1. ԱՂՋԹՔ ԴԱՍԻՑ ԱՐԱՋ

Ե. Ամենաքարի՝ Աստուած. առաքենա առ մեզ զշնորհս չուզոյէ քո սրբոյ. զի պարզեւնցէ մեզ զմիսո. եւ կազրուրենցէ զզօրութիւնս հոգոց մերոց. որպէս զի մեք ընդունելով զաւանդեալ մեզ ուսմուն՝ զարգացուք քեզ, ստեղծողիդ մերում, ի փառս, ի միսիթարութիւն ծնողաց մերոց եւ յօգուտ եկեղեցույ եւ հայրենեաց:

<sup>1)</sup> Ի՞նչ ուրախութիւն ունինք Մեծ Հօր թունը—եկեղեցի գնալուց:

<sup>2)</sup> Բացաւրել սաներին—«Հայր մեր». «Եկեսցէ արքակութիւն քո»—իբրև հայր՝ սիրել. իբրև թագաւոր՝ վախենալ, Վախենալ՝ որպէս զի օրէնքը, կանոնը, պատուիրանը կարելի լինի պահել, ազստ ենք վախից, երկիրից՝ երբ օրէնքը պահում ենք. աւինքն արդար ենք. մեղք, անձնական նինը.



Ո՞վ ամենաբարի Աստուած. տուր մեկ Սուրբ Հոգ-  
լոյդ շնորհքը՝ որ մենք լաւ սովորենք մեր դասերը. և  
լաւ ուսում առնելով՝ Քո փառքը ճանաչենք և փառքիդ  
համար ապրենք. մեր ծնողներին ուրախացնենք և մեր  
ազգի ու Եկեղեցւոյ համար օգտակար լինենք<sup>1)</sup>:

## 2. ԱՂՋԹՔ ԴԱՍԻՑ ՅԵՏՈՅ.

Ա. Գոհանամք զքէն, Արարի՛չ. զի արժանի արա-  
րեր զմեզ շնորհաց քոց՝ ընդունելութեան ուսմանս-  
օրհնեան զմնձառքս, զծողս եւ զուսուցիչս մեր. որք  
առաջնորդեն մեզ ի գիտութիւն բարութեան: Եւ տուր  
մեզ կարողութիւն ի շարունակութիւն ուսմանս այսորիկ:

Ծնորհակալ ենք Քեզանից նվ մեր Ստեղծող Աստուած.  
որ Քո օրհնութիւնով մեր դասերն առանք, լաւ սովո-  
րեցինք: Այժմ օրհնիր Դու մեր մեծաւորներին, մեր  
ծնողներին, մեր ուսուցիչներին. որովհետև նրանք են  
մեզ ուսում տալի, նրանք են մեզ միջոց տալի ուսում  
առնելու<sup>2)</sup>: Իսկ մեզ տնկը շնորհք, խելք, կարողու-

<sup>1)</sup> Բացատրել—որ լաւ սովորելու և ուսում ունենալու  
համար հարկաւոր է աշխատանք և ոչ ծուլութիւն. հարկաւոր  
է լաւ լսել դասերը, ուշադիր նստել դասարանումը, հարկաւոր  
է զքքեր կարդալ խելք իմաստներ սովորել և ազնիւ ու ար-  
դար լինել. այս և սորա նման ուսարտքերս կատարելով՝ ճա-  
նաչած կլինինք Աստուծոյ փառքը, միսիթարած կլինինք մեր  
ծնողներին և սպառակար կլինինք մեր ազգին ու Եկեղեցւոյն:

<sup>2)</sup> Կամ կրկնել անցեալ տարուայ բացատրութիւնները—  
մեծաւորների, ծնողների, ուսուցիչների՝ աշխատանքների,  
խնամքի, հոգացողութիւնների մասին, և կամ եթէ նորեկներ  
կան, որ չեն լսել՝ բացատրել նորից. Միշտ աշխատելով—զեռ  
սաներին խօսեցնել, նրանց բացատրութիւնը լսել. ապա թէ  
ինքը ուսուցիչը ամփոփէ:

Թիմ՝ որ էլի շատ բաներ սովորենք, շատ ուսում առ-  
նենք<sup>1)</sup>:

## Դ. ԱՊՐՈՒՍՏԻ ԵՒ ԳՈՐԾԻ ԱՂՋԹՔ.

Ե. Զգործս ծեռաց մերոց ուղիղ արա ի մեզ,  
Տէ՛ր. զգործս ծեռաց մերոց յաջողեա մեզ: Սաղմ. 2թ 17:

Մեր ձեռքի գործը ուղիղ արա. մեր ձեռքի  
գործը յաջողիր մեզ, նվ Աստուած<sup>2)</sup>: Զվաստակս ձեւաց  
քոց կերիցես.... Սաղմ. ձիկ. 2.

Քո ձեռքի աշխատանքը կեր, վայելիր:

Ե. ԿԵԱՆՔԻ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԵՒ ՃԱՇԻ ԱՂՋԹՔՆԵՐ.

1. Ժ. Տէրունական աղօթք<sup>3)</sup>.

2. ԱՂՋԹՔ ՃԱՇԻՑ ԱՌԱՋ.

Ժա. Աչք ամենեցուն ի քեզ յուաան. Եւ դու տաս  
կերակուր նոցա ի ժամիւ: Բանաս զծեռն քո. Լցու-

<sup>1)</sup> Հարցնել ինչու համար. տեսնել—կիցին դասից առաջ  
ասած աղօթքի վերջին պատճառաբանութիւնը—Աստուծոյ  
փառքի, ծնողներին միսիթարելու և ազգին ու Եկեղեցուն  
օգտակար լինելու համար. եթէ չիշեն՝ ուսուցիչը պիտի  
լիշեցնէ:

<sup>2)</sup> Բացատրել—որ ամեն մի գործ՝ մեր ապրուստի հա-  
մար է, բաց նոյն գործը չպիտի լինի և ուրիշի վեասի կամ  
գրկանքի համար. մեր ամեն մի գործը՝ մեր հալալ քրանքի,  
արդար վաստակի պառուղ պիտի լինի. խարէութիւն, խարդա-  
խութիւն չպէտք է լինի գործի մէջ, այն ժամանակ մեր գործը  
ուղիղ կլինի և Աստուած կլաջողէ մեզ:

<sup>3)</sup> Ալս աղօթքը անցեալ տարուանից զիտեն սաները  
թէ գրալառ, թէ աշխարհաբառ և թէ բացատրութիւնը, ուսուի  
աւելորդ համարեցի դնել այս տեղ. իսկ նորեկներին կամ  
չզիտցողներին ուսուցիչը պիտի բացատրէ:

ցանես զամենեսեան քաղցրութեամբ կամօք քովք:  
Սադմ. ձևԴ. 15

Եմենքի աշըը Քեզ է նայում, ով Աստուած. և  
դու ես բոլորի յայսը, սրովհետեւ բաց ես անում Քո  
ձեռքը. և կամենում ես որ բոլորն էլ լիանան ու կշտա-  
նան քաղցր ու բարի պարզեներիցդ<sup>1)</sup>:

Յ. ԱՂՅԹՔ ՃԱՇԽՅ ՅԵՏՈՅ.

Ժք. Տէ՛ր Յիսուս. Լցաք ի քարութեանց քոց:  
Տացուք գոհութիւն Տեառն Առտուծոյ մերոյ, չօր եւ  
Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ: Զլիութիւն սեղանոյս անհատ  
եւ աննուազ արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ  
զմեզ կերակրեաց եւ լիացոյց: Նմա փառք յաւիտեանս  
Ամէն: Փամագիբք:

Տէ՛ր Յիսուս, լիացանք Քո բարի պարզեներից:  
Տանք մեր գոհութիւնը, մեր չնորհակալութիւնը չօրը,  
Որդուն և Սուրբ Հոգուն: Մեր այս սումիրի լիութիւնը  
թող անհատ ու անպական անի մեր Տէ՛ր Յիսուս Քրիս-  
տոսը. Որը Մեզ կերակրեց և կշտացրեց: Փա՛ռք Նորան  
ամեն ժամանակ:

Զ. ԹԱԳԱԾԻՈՐԻ ԱՂՅԹՔ:

Ժք. Տէ՛ր, պահեան զկայսրն մեր: Հզօ՛ր ինքնակալ.  
Թագաւորե՛ա դու մեզ ի պարծանս: Թագաւորե՛ա Կայ-  
սը յերկիւլ թշնամեաց: Տէ՛ր պահե՛ա զկայսրն մեր:

<sup>1)</sup> Բացատրել—որ տարուալ չորս եղանակները, դաշ-  
տերը իրենց բուսական հարստութիւններով, ջրերը և ամեն  
ինչ ան մեծ սփոռցն է, որ Աստուծ բաց է արել մարդկանց  
համար, մի առատ ճաշի սեղան՝ ուր առատ ու լի է Երկնաւոր  
Հօր բոլոր պարզեները:

Կարելի է օգտուել Ա. Տարուալ Ճեռնարկից:

Տէ՛ր, պահիր մեր Կայսրին: Դու, Հզօր ինքնակալ  
Կայսր՝ թագաւորիր մեր պարծանքի համար: Թագաւորիր,  
ով Կայսր թշնամիներին երկիւղ տալու համար: Տէ՛ր պա-  
հիր, պահպանիր Դու մեր Կայսրին<sup>1)</sup>:

Է. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՂՅԹՔ<sup>2)</sup>:

Ժդ. Ի քո իշեալ տեղի, զԱթոռ Հարապետի մեր հաս-  
տատեան: Զերկարութիւն կենաց չօր մեր Աստուածա-  
զգեաց, շնորհեան պետին մեր հարց, որ զմեզ հովուէ:

Քո իշած տեղը, ուր մեր Հայրապետի Կաթուղի-  
կոսական Աթոռն է՝ հաստատնեալ արա, անդրդուելի պա-  
հիր: Մեր հայրերի գլխաւորին, մեր Աստուծոյ ընտրած  
Հայրապետին երկար կեանք պարզեէ. նա է մեզ խնա-  
մում և հովում հայրաբար:

I ԾԱՆՅԹՈՒԹԻՒՆ,

Ա. Բաժինը մի տեսակ կրկնութիւն է անցեալ տա-  
րուայ կոմ Կրտսեր Նախապատրաստական բաժանման դա-  
սընթացի. որովհետ կերպիչեալ աղօթքները և իմաստ-  
ները սերու կապուած էին զրուցատրական բացատրու-  
թիւններով աւանդած դասերի հետ. ուստի այս բաժի-  
նը աւանդելիս, իբրև կրկնութիւն՝ որ անշուշտ հարկա-  
տոր է, բայց համառօտ և սզմուած կերպով, պէտք է դի-  
մել Ա. տարուայ Ճեռնարկին. իմէ հարկ լինի,

<sup>1)</sup> Բացատրել—որ թագաւորը՝ Երկնաւոր թագաւորի ներ-  
կայացուցիչն է երկրիս վերակ. նա հայր է ժողովրդի. որի խա-  
զադ, անդորր կեանքի համար զէնք ու զօրք է պահում, վտան-  
գի ժամանակ պատերազմ անելու և իւր ժողովրդին հանգիստ  
պահելու համար նաևն: Կարելի է օգտուել Ա. տարուալ Դա-  
սատետրից:

<sup>2)</sup> Բացատրել Հայրապետի ինամքը, հոգսերը, Հայ Եկե-  
ղեցու, Հայ Հոգեորականների, Եկեղեցական—Կրօնական—Թըմ-  
րոցական ղործերի նկատմամբ. եալն, և իւսու աւանդել չոր  
նիւթը, կարելի է օգտուել Ա. տարուալ Ճեռնարկից:

## Բ. ԲԱԺԻՆ

Ժաղկաքաղ հիւսուածք չին եւ նոր Ռւխտի սուրբ պատմութիններից:

1. ԱՇԽԱՐՀԻ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ<sup>1)</sup>). Մնադ. ա. 1-25 բ. 1-3. ԵՒ ՄԱՐԴՈՅ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ. Մնադ. ա. 26-31. բ. 7-8. 21-23.

Ամենից առաջ Աստուած ստեղծեց երկինքը և երկրը. երկիրը անպատրաստ էր, խաւարով կամ մթնով էր ծածկուած և չէր երեւմ. իսկ Աստուածոյ չոգին ջրերի վերայ էր մանգալիս—շրջում:

Առաջ Աստուած՝ թող լոյս լինի. իսկոյն լոյս եղաւ: Եւ տեսաւ Աստուած որ լոյսը բարի է. բաժանեց լոյսը խաւարից. լոյսը անուանեց ցերեկ. իսկ խաւարը անուանեց գիշեր. եղաւ երեկոյ, եղաւ առաւոտ. և գիշեր ու ցերեկ միասին՝ մի օր եղաւ. դա էր առաջին օրը<sup>2)</sup>:

Ասաց Աստուած՝ թող հաստատութիւն լինի ջրերի մէջ. թող ջրերը բաժանուին իրարից. այնպէս էլ եղաւ: Ջրերի մի մասը վերև բարձրացրեց, միւս մասը երկրի վերայ թողեց. մէջ տեղը հաստատութիւնը ձգեց և անուանեց երկին: Տեսաւ Աստուած որ բարի է. եղաւ երեկոյ, եղաւ առաւոտ, և գիշեր ու ցերեկ միասին մի օր եղաւ. դա էր երկրորդ օրը<sup>3)</sup>:

<sup>1)</sup> Բացատրել սաներին—ստեղծել և շինել ոչնչից և մի որ և իցէ նիւթից, ով կարող է ստեղծել, ով կարող է շինել.

<sup>2)</sup> Բացատրել—լուսի օգտակարութեան մասին: Կարելի է օգտուել Ա. տարուալ ձեռնարկից: Բացատրել—թէ բուսերին, բացի ջրիցն էլի ինչ է հարկաւոր. որպէս զի կարիք զացուի չորրորդ օրուայ ստեղծագործութեան:

<sup>3)</sup> Բացատրել—ջրերի բաժանուիլը և հաստատութիւնը—վերը՝ աստղալից երկինք. նորա տակը՝ ջրալին երկինք կամ

Ասաց Աստուած՝ երկնքի տակի ջրերը թնդ մի տեղ հաւաքուեն. և թող ցամաքը երեայ. այնպէս էլ եղաւ: Աստուած՝ ցամաքը անուանեց երկիր. և հաւաքուած ջրերը անուանեց ծովեր. և տեսաւ Աստուած որ բարի է:

Ասաց Աստուած՝ թող երկիրը բուսցնէ իրանից խոտեղններ իրանց սերմերով և պտղաբեր ծառեր, այնպէս էլ եղաւ. տեսաւ Աստուած որ բարի է. եղաւ երեկոյ, եղաւ առաւոտ. և գիշեր ու ցերեկ միասին մի օր եղաւ. դա էր երրորդ օրը<sup>1)</sup>:

Ասաց Աստուած՝ թնդ լուսաւորներ լինին երկնքի հաստատութեան վերայ, որ երկիրը լուսաւորներ և ցերեկն ու գիշերը իրարից ջոկեն. և նշանակուեն կամ որոշուեն ժամանակները, օրերը, տարիները. Աստուած երկու լուսաւորներ ստեղծեց. մեծ լուսաւորը՝ ցերեկը լոյս տալու համար. իսկ փոքրը՝ գիշերը լոյս տալու համար. ստեղծեց էլի շատ աստղեր. տեսաւ Աստուած որ բարի է: եղաւ երեկոյ, եղաւ առաւոտ. և գիշեր ու ցերեկ միասին մի օր եղաւ. դա էր չորրորդ օրը<sup>2)</sup>:

ամպեր. նրա տակը՝ օդակին երկինք կամ հաստատութիւն. իսկ քոլորպին ցած՝ երկիր—հող ու ջուր: Եւ եթէ ուսուցիչը լարմար կդատէ՝ կարող է նկարել զրատախտակի վերալ երեք երկինքները և երկիրը, ու բացատրել արեի ճառագալթների և առհասարակ ջերմութեան մասին—թէ ջրալին երկինքը—ամպերը որքան են օգնում օդի զովութեան և ինչ կարող էր լինել առտնց ամպերի:

<sup>1)</sup> Բացատրել—հողի և բուսականութեան և ջրի օգուածները. կարելի է օգտուել Ա. տարուալ ձեռնարկից: Բացատրել—թէ բուսերին, բացի ջրիցն էլի ինչ է հարկաւոր. որպէս զի կարիք զացուի չորրորդ օրուայ ստեղծագործութեան:

<sup>2)</sup> Բացատրել—արեգակի օգուածները. երբեմն էլ վնասը—երաշտ, երբ արեգակ չէ լինում երկար ժամանակ. Ա. տարուալ Ձեռնարկից:

**Ասաց Աստուած.** թող հանեն ջրերը իրենց միջից իրենց տեսակի կենդանի շունչ ունեցող զեռուններ և թևաւոր թռչուններ երկրի վերայ երկնքի հաստատութեան տակ, այնպէս էլ եղաւ։ Տեսաւ Աստուած որ բարի են, և օրհնեց նրանց Աստուած ու ասաց—շատացէք, բազմացէք. ծովերի ջրերը լցրէք, և այդ թռչունները թող բազմանան երկրի վերայ։ Եղաւ երեկոյ, եղաւ առաւոտ, և գիշեր ու ցերեկ միասին՝ մի օրդաշ էր հինգերորդ օրը։

**Ասաց Աստուած.** թող հանէ երկիրը իւր միջից իրենց տեսակի կենդանի շունչ ունեցող չորստաններ, սողուններ, գազաններ. այնպէս էլ եղաւ. տեսաւ Աստուած որ բարի են։

**Ասաց Աստուած՝ ստեղծենք մեր պատկերով և մեր նմանութեամբ մի մարդ,** որ իշխանութիւն ունենայ ծովի ձկների, երկնքի թռչունների, անասունների, և բոլոր երկրի և բոլոր սողունների վերայ, որոնք սողում են երկրի վերայ։ Աստուած ստեղծեց մարդուն հողից, փշեց նորա երեսին կենդանի շունչ և մարդը եղաւ հոգի կենդանի, և անուանեց Ադամ. բայց Ադամի նմանը չկար, նա մենակ էր և տխուր։ Աստուած կամեցաւ ընկեր տալ նորան, թմբութիւն ձգեց նորա վերայ և նա քնեց, այն ժամանակ Աստուած նորա կովերից մէկը հանեց, մարմնով լցրեց և այն կողը կին շինեց. տարաւ Ադամի մօտ։ Օրհնեց նրանց Աստուած ու ասաց. շատացէք ու բազմացէք. լցրէք երկիրը, տիրեցէք նորան. իշխեցէք ծովի ձկներին, երկնքի թռչուններին և բոլոր անասուններին, և բոլոր երկրին, և բոլոր սողուններին, որոնք սողում են երկրի վերայ։

**Ասաց Աստուած՝ ահա տալիս եմ ձեզ ամենայն տեսակ խոտ սերմանիլու. և ամեն տեսակ փայտ որ պտուղի**

սերմ ունի իւր մէջ և ամեն տեսակ կենդանի, որ կարելի է ուտել՝ տալիս եմ ձեզ իրրե կերպակուր։

Եւ տեսաւ Աստուած որ իւր ստեղծած բոլոր բաները շատ լաւ են և բարի են<sup>1)</sup>. Եղաւ երեկոյ, եղաւ առաւոտ, և գիշեր ու ցերեկ միասին՝ մի օր. դա էր վեցերորդ օրը<sup>2)</sup>։

Վեցերորդ օրը վերջացրեց Աստուած իւր բոլոր գործերը. և հանգստացաւ<sup>3)</sup> եօթներորդ օրը, այդ օրը. օրհնեց և սրբեց։

<sup>1)</sup> Բացատրել—Աստուածոյ բոլոր ստեղծած բաները բարի են և մարդու օգուտի համար են, բնչպէս. օրինակներ բերել ստեղծածներից. և ալդադից հետևացնել Աստուածոյ անչափ մէրը գէպի մարդիկ։

<sup>2)</sup> Արարչագործութեան օրակարգի վերալ պէտք է դարձնել սաների ուշադրութիւնը, զասը հետաքրքիր անելու համար, օրինակ—ա. օրից լետոյ, զասը զեռ չպատմած, հարցնել բնչ է լինելու, ալժմ բնչ ունենք և բնչ չունենք, բնչ է պակաս աշխարհն՝ որ ձախն լինի, գեղեցիկ լինի, կենդանութիւն լինի և ալլն. պէտք է աշխատել - որ հարցերի պատասխանները սաները գտնեն, հակառակ դէպքում՝ ուսուցչի զեկավարութիւնն է հարկաւոր։ Բ. օրից լետոյ՝ նոյնպէս. մինչեւ կհանի մարդու ստեղծագործութիւնը, որը զեռ չպատմած՝ հարցերի պիտի զիմել—բոլոր աշխարհը լիքն է ստեղծուածներով—լիշել. ալժմ բնչ կամ ով է պակաս—մարդը. նորան էլ միւսների նման կստեղծէր... բնչու ոչ բնչ զանազանութիւն մարդու և նրանց մէջ, բնչպէս է իշխում մարդը երկրին. և ալլ ալսպիսի հարցերով զարգացնել սաներին և բարուական իմաստներ գուրս բերել—բարի, իմաստուն, ամեն բան կարող է անել Աստուած, սէր զէպի մարդը. մարդու պարտականութիւնը գէպի Աստուած..., և ալլն.

<sup>3)</sup> Բացատրել—հանգիստ խօսքը, Աստուած կարօտ չէր հանգստանալու. նա միշտ զործում է, բնչպէս հասկանալ—հանգստացաւ եօթներորդ օրը.

2. ԵՐՉԱՆԻԿ ԴՐԱԽՏԸ ԿԱՄ ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆ. ԾՆՆԴ. բ. 8, 9.  
15—17.

Աստուած մի սիրուն դրախտ տնկեց Եղէմում դէպի արևելք<sup>1)</sup> և այնտեղ ընակեցրեց Աղամին ու Եւային։ Զարդարեց դրախտը գեղեցիկ բոյսերով և պտղատու ծառերով։<sup>2)</sup> Դրախտի մէջտեղը բուացրեց կենաց ծառը։ և բարին ու չարը զիտենալու ծառը։ Դրախտի մշակութիւնն ու պահպանութիւնը յանձնեց Աղամին<sup>3)</sup>։

Աստուած պատուէր տուեց Աղամին ու ասաց. դրախտի բոլոր ծառերի պտուղներից կարող ես ուտել։ Բայց բարին ու չարը գետենալու ծառի պտուղը չուտէր, որ օրը կուտէր՝ դուք կմեռնէր<sup>4)</sup>։

<sup>1)</sup> Կրկնել աշխարհի չորս կողմերի մասին և ընդարձակել բացատրութիւնը։

<sup>2)</sup> Հարցնել սաներին։ — Բնչ բոլսեր ու պտղատու ծառեր կլինէին դրախտում։ Օդնել — որ իրանք սաները լիշեն իրենց ծանօթ բոլսերն ու պտղատու ծառերը։ Անուշետև ուսուցիչը կամ սաներից ձեռնհասը թող ամփոփէ։

<sup>3)</sup> Մանկական մտքին դիւր ըմբռնելի ձեռվ հասկացնել սաներին — թէ մշակելու և պահպանելու պատուէրը Աստուծու կողմից Աղամին նորա համար էր՝ որ պարապութեան չսովորէ։ Որովհետև պարապութիւնից բաւ բան սպասելչ կարելի։ ինչպէս խելացի ու բարի ծնօդները իրենց մանկելիների առաջ ածում են խաղալիքներ, տիկինիկներ... եալն եալն պատուիրելով — որ զրադուեն նոքա մանկական աշխատանքով. բայց չփչացնեն, չըկոտրեն։ Հասկացնել սաներին — որ ալդ պատուէրը աշխատանք սիրելու, աշխատանքին սովորելու համար էր. որ եթէ վաղը, միւս օր՝ մի փորձանք պատահի, նոքա տարակուսած, ձեռքերը ծալած չնստեն, ալլ գործեն, աշխատեն։

<sup>4)</sup> Բացատրել սաներին — Աղամի ու Եւայի երջանկութիւնը — անմեղութիւն, անմահութիւն, ուտելու, հագնելու, վախի, հիւանդութեան երկիւղ ու կարիք չկայ, անհոգս, սուրբ սիրտ,

4. ԿՈՐՈՒՍԵԱԼ ԴՐԱԽՏԸ ԿԱՄ ՊԱՏՈՒԻՐԱՆՍՉՈՒԹԻՒՆ. ԾՆՆԴ. գ. 1—7.

Երկրի բոլոր գաղանների մէջ, որ ստեղծել էր Աստուած, ամենից իմաստունն ու խելօքը օձն էր

Եյդ օձը ասում է Եւային. ինչ է այն՝ որ ասաց Աստուած — թէ դրախտի մէջ եղած բոլոր ծառերի պլտուղներից չուտէր։ Եւան պատասխանում է օձին և ասում — դրախտի ծառերի պտուղները կարող ենք ուտել. բայց դրախտի մէջ տեղը եղած ծառի պտուղից միայն ասաց Աստուած չստէր։ և նրան չմօտենար. որպէս զի չմեռնէր։ Ասում է օձը կնոջը. ոչ թէ կմեռնէր. որովհետև զիտէր Աստուած, թէ որ օրը այն պտուղն ուտէր՝ ձեր աշքերը կբացուին. Աստուածների նման կլինէր. կճանաչէր բարին ու չարը<sup>1)</sup>։

Տեսաւ կինը որ լաւ է ծառը և դուրեկան աշքի համար և զեղեցիկ՝ տեմնելու համար՝ առաւ նորա պլտուղը, կերաւ. և տուեց իւր մարդուն. և կերան<sup>2)</sup>։

անվիշտ և ուրախ .. ևալն Պատաւէրի մասին հասկացողութիւն տալ — թէ արգելուած բանին չպիտի մօտենալ. հնազանդութիւնը և պատուէրը պահելը պէտք է նախաղասել սրտի ու որկորի ուզածից. Ուսուցիչը կարող է սորա մասին երկար խոսել ու բացատրել կեանքից վերցրած օրինակներով։

<sup>1)</sup> Բացատրել — սր Եւան պիտի մերժէր օձի առաջարկութիւնը. որ պիտի լինէր իւր վիճակից. աւելի լաւին չպիտի ցանկար, պիտի նկատէր օձին — թէ որտեղից է նորա սրտացաւութիւնը, քանի որ ոչ մի աշխատանք չունի օձը վերալ. եալն ևալն։

<sup>2)</sup> Աղամը չպիտի լիէր կնոջը. չէ որ Աստուած առաջ իրեն էր ստեղծել. Յիշել Աստուծու արած լաւութիւնները — դրախտ — սիրուն պարտէզ, անմահութիւն.. ևալն ևալն. Նըրանք որկրամոլ — փնթփոր են, փառասէր են, վիճակից դժգոհ են, երկուսն էլ պիտի մերժէին օձի առաջարկութիւնը։

5. ԱՍՏՈՒԾՈՅ ԱՆԷԾԲԸ—ԻԲՐԵՒ ՊԱՐՏԱԴԻՐ ՕՐԵՆՔ.  
ԾԱՆԴ. Գ. 14. 16—19.

Բացուեցան նրանց աչքերը. իմացան որ մերկ են  
թղմնու տերիներից իրենց համար ծածկոյթ շինեցին <sup>1)</sup>:

4. ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՏԱՍՏԱՆԸ. ԾԱՆԴ. գ. 8-11.

Ազամ ու Եւան պառողը ուտելուց յետոյ՝ լսեցին Աս-  
տուծոյ զնալու ձայնը դրախտի մէջ երեկոյիհան դէմ.  
թագնուեցան Աստուծոյ երեսից դրախտի ծառերի մէջ <sup>2)</sup>:

Կանչեց Աստուած Ազամին. և ասաց—մէր ես <sup>3)</sup>:  
Պատասխանում է Ազամը—լսեցի քո ձայնը այս-  
տեղ դրախտի մէջ՝ և վախեցայ. և որովհետեւ մերկ էի՝  
թագնուեցայ:

Ասում է նրան Աստուած. ով պատմեց քեզ թէ  
մերկ ես. բայց թէ այն ծառից, որից միայն պա-  
տուիրեցի քեզ շուտել՝ կերպը արդեօք նրանից <sup>4)</sup>:

Պատասխանում է Ազամը—այս կինը՝ որ տուիր-  
ինձ, նա ինձ տուեց այս ծառիցը. ես էլ կերայ:

Ասում է Աստուած կնոջը. այդ ինչ արի՞ դու:

Պատասխանում է Եւան—օձը ինձ խարեց և կերայ <sup>5)</sup>:

<sup>1)</sup> Միթէ չգիտէին որ մերկ են. լիշել մանկական անմե-  
ղութիւն. այնպէս անմեղ էին նորքա առաջ. իսկ ալժմ. . . :

<sup>2)</sup> Բացատրել—ինչու թագնուեցան. Գողը ինչ կուզի-  
մութը գիշեր. Յանցաւորը բաց ճակատով կամ համարձակ կը-  
կանդնի դատաւորի առաջ:

<sup>3)</sup> Բացատրել—ինչու հարցրեց Աստուած Ազամին - թէ  
ուր է. միթէ չգիտէր. ալդ հարցումով ինչ էր ուզում լին նը-  
րանից:

<sup>4)</sup> Բացատրել—որ Աստուծոյ հարցումները զղջման էին  
կանչում նրանց. ինչպէս Յիսուս ասաց—ձեզանից մէկը ինձ  
մատնելու է, որպէս զի Յուղան զղջաւ. Օրինակ բերել կեանքից:

<sup>5)</sup> Բացատրել—որ Ազամը ու Եւաի պատասխանները  
մեղադրանքներ էին. Աստուծուն և միմեանց—կարծես ուզում

Աստուած ասում է օձին. վոխանակ որ դու այդ արիր՝  
անիծուած լինիս երկրի բոլոր անասունների ու գաղան-  
ների մէջ, կուրծքիդ ու վորիդ վերայ կողաս և հող  
կուտես բոլոր կեանքիդ մէջ:

Աստուած ասում է կնոջը. շատ ու շատ կլինի քո  
տրտմութիւնդ, ախ ու վախդ. տրտմութեամբ որդի  
կծնես. կերթաս, կզաս՝ էլի մարդուդ կդիմես. և նա  
քեզ վերայ կիշխէ:

Աստուած ասում է Ազամին. վոխանակ՝ որ դու  
կնոջդ ձայնին լսեցիր և կերար այն ծառի պաղից,  
որից միայն պատուիրեցի քեզ շուտել՝ անիծեամբ լինի  
երկիրը քո գործերիդ մէջ, տրտմութեամբ ուտես զոր-  
ծիդ պատուզը բոլոր կեանքիդ մէջ: Փուշ ու տատասկ  
թող բուցնէ քեզ այն երկիրը՝ որի վերայ պիտի զոր-  
ծես. վայրի բանջար կուտես: Երեսիդ բրտինքով կու-  
տես քո հացը. մինչեւ կըկին երկրին դառնաս՝ որտեղից  
առնուեցար, որովհետեւ հող էիր՝ դարձեալ հող դառնաս:

Ազամ իւր կնոջ անունը կեանք զրեց. որովհետեւ  
մալը է բոլոր կենդանիների:

6. ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒԱԾ ՊԱՏԻՃԱԸ. ԾԱՆԴ. Գ. 22—24.

Ասում է Աստուած. ահա Ազամը եղաւ իրեն մէկը  
մեղանից՝ բարին ու շարը գիտենալու համար. և արդ՝

էին ասել—դու ես մեղաւոր՝ որ կին տուիր, օձ սաղեծեցիր.  
եթէ դրանց չտակիր՝ մեղք էլ չէր գործուի. Ընդարձակել այս  
զրուցատրութիւնը՝ որպէս զի գեղեցիկ բարուական մտքեր  
ստացուին:

գուցէ երկարացնէ ձեռքը և կենաց ծառի պտուղը քաղէրուտէ և յաւիտեան ապրէ։ Եւ արտաքսեց նրան Տէր Աստուած փափկութեան դրախտից, գործելու այն երկիրը՝ որտեղից նա առնուեցաւ։ Հանեց դրախտից Աղամին և բնակեցրեց դրախտի դէմ ու դէմը. և հրամայեց հրեշտավիներին պահել կենաց ծառի ճանապարհը չորս կողմից բոցեղէն սրով։

7. ԱՍՏՈՒԹՅՈՅ ԽՆԱՄՔԸ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԽՈՏՏՈՒՄԸ. ԾՆՆԴ. 7. 21. 15.

Աստուած Աղամին և նորա կնոջ համար մորթու կամ կաշու հագուստներ պատրաստեց և հագցրեց նրանց։

Աստուած ասաց օձին. թշնամութիւն կդնեմ քո և այդ կնոջ մէջ. քո և գործ զաւակի մէջ. նա քո գլուխը ջախչախելու—ջարդելու կսպասի. դու նորա գարշապարը—կրունկը խայթելու—կծելու կպատրաստուես։

II ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆ.

Այստեղ պիտի կանգ առնել չին ուխտի նկատմամբ և անցնել փրկութեան խոստման կատարմանը—Աստուածածնայ ծննդեան պատմութեանը. բայց նախ՝ պէտք է բացատրել սաներին—որ Աստուածոյ խոստումը ոչ միայն դրախտի մէջ լսուեցաւ, այլ կրկնուեցաւ Աբրահամին, Իսահակին, Յակոբին, Յուղային, Բոսին, Յեսսէին, Դաւթին և Դաւթի սերնդից ծնուած Մարիամ Սուրբ Կուսին. որի որդին—Յիսուս պիտի ջախչախէր շարի իշխանութիւնը—օձակերպ սատանայի գլուխը. և կորուսեալ դրախտը նորից վերադարձնէր Աղամայ սերունդներին—մարդկանց. որոնք նորից պիտի որդէգրուէին չօր Աստու-

ծոյ և ժառանգէին դրախտը ըստ առաջնոյն. և այս բոլորը Յիսուսի Քրիստոսի փրկագործութեան շնորհիւ։

8. ՓՐԿՉԻ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆԸ.

Հրեաները չոռվմայեցւոց իշխանութեան տակն էին գտանւում այն ժամանակ՝ երբ, դրախտում Աստուածոյ տուած փրկութեան խոստումը, պիտի կատարուէր. նոքա սպասում էին անհամբեր. որովհետև չոռվմայեցիները նրանց նեղացնում էին։

Հրէից նահապետներին խոստացուած, նոցա մարդարէների գուշակած Մեսիայի գալու ժամանակի մօտենալը ոչ միայն Հրեաները գիտէին, այլ ուրիշ ազգերն էլ և մանաւանդ Հոռվմայեցիները, որոնք այդ իմանալով՝ աւելի սկսան նեղացնել Հրէաներին—իբրև իրենց հապատակ ժողովրդի. որովհետև կարծում էին—թէ եկող Մեսիան թագաւոր պիտի լինի Հրէաների և պաշապանէ իւր ազգի իրաւունքները։ Այն կողմ Հրէաներն էլ ուրախանում էին ու հապատանում—թէ ահա կգայ իրենց թագաւորը—խոստացուած Մեսիան. Հրէաների թագաւորութիւնը նորից կվերականգնէ, կը նստէ իւր հօր—Դաւթի թագաւորական աթոռի վերայ. Հոռվմայեցւոց տէրութիւնը կկործանէ, յաղթական դրօշակ կսպարզէ. և այնուհետև Հրէաները հանդիսաւ կլինեն այնպէս՝ ինչպէս երբեմն Դաւթի և Սողոմոն թագաւորների օրօք։

9. ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԾՆՈՒՆԴԸ.

Դաւթիեայի նազարէթ քաղաքում երկու ամուսիններ էին ապրում. նոքա բարեպաշտ էին և Դաւթիթ թագաւորի ցեղից, մարդու անունը Յովակիմ էր, իսկ կնոջ

անունը՝ Աննա։ Նորա որդի չունէին։ անգաղար խնդրում էին Աստուծուց—պարզել իրենց մի զաւակ<sup>1)</sup>։ Չնայելով որ նորա բարեպաշտ էին, շատ ջերմեռանդ աղօթում էին՝ բայց Աստուած ուշացնում էր նորա խնդիրի կատարումը<sup>2)</sup>։ Նորա ուխտ զրին—որ եթէ Աստուած իրենց զաւակ պարզել՝ տանեն Երուսաղէմ և ընծայեն Աստուծոյ Տաճարին։

Լսեց Աստուած նրանց աղօթքը—պարզեց մի դուստր, որին անուանեցին Մարիամ։

Մարիամ Սուրբ Կուսի ծննդեան յիշատակը մեր Եկեղեցին կատարում է Սեպտեմբերի 8-ին։

#### 10. ԵՐԵԲ ՏԱՐԵԿԱՆ ՄԱՐԻԱՄ ՍՈՒՐԲ ԿՈՅՍԻ ԸՆԾԱՅՈՒՒԼԸ ՏԱՋԱՐԻՆ։

Երբ Մարիամ Սուրբ Կոյսը երեք տարեկան դարձաւ՝ ծնուները յիշեցին իրենց ուխտը<sup>3)</sup>։ Նորա ճանապարհի պատրաստութիւն տեսան և ուխտաւոր զաւակը հետներն առնելով՝ զնացին Երուսաղէմ<sup>4)</sup>։ Գնացին Տաճարը, ներկայացան քահանայապետին, յայտնեցին իրենց զալու պատճառը։ Քահանայապետը օրհնեց Յովակիմին

<sup>1)</sup> Բացատրել սաներին—ինչու էին զաւակ խնդրում։ Ինչպէս էին նազում անզաւակների վերաբ։

<sup>2)</sup> Ինչու էր ուշացնում Աստուած խնդիրքի կատարումը—փորձելու հաւատը. սովորցնելու չուսահատուել. լուսահատութիւնը կեանք չէ բերում։

<sup>3)</sup> Բացատրել ուխտի կամ խոստան կատարման գեղեցկութիւնն ու աղնւութիւնը։

<sup>4)</sup> Քանի օրուակ ճանապարհ, ինչով կերթալին։ Ինչու Երուսաղէմ Յիշեալ հարցերի և առհասարակ սովորանման հարցերի բացատրութեան համար կարելի է դիմել ա. տարուայ Զեռնարկիու։

ու Աննային և արձակեց. իսկ Մարիամ Սուրբ Կուսի մասին կարգադրութիւն արեց այնտեղ մնալու։

Տաճարի շուրջը շատ սենեակներ կային. այնտեղ կենում էին բարեպաշտ այրիներ, կոյսեր. որոնք ձեռագործով էին պարապում, աղօթք էին անում, սուրբ գիրք էին կարգում և Տաճարին ծառայում էին, ահա նրանց հետ էր և Մարիամ Սուրբ Կոյսը<sup>1)</sup>։

Երեք տարեկան Մարիամ Սուրբ Կուսի Տաճար ընծայուելու յիշատակը մեր Եկեղեցին տօնում է Նոյեմբերի 21-ին։

#### 11. ՄԱՐԻԱՄ ՍՈՒՐԲ ԿՈՒՍԻ ԱՒԵՑՈՒՄԸ. Ղուկ. Ա. 26—38.

Երբ Մարիամ Սուրբ Կոյսը տամն և չորս տարեկան հասակն առաւ՝ առաջարկեցին նորան վերադառնալ տօնն և ամուսնանալ։

Նա յայտնեց—թէ ինքը կոյս պիտի մնայ. որովհետև ծնողները այնպէս են ուխտել։ Մակայն քահանայապետը հասկացրեց նորան ընդունուած կարգն ու սովորութիւնը. ուստի և յանձնեցին նորան իւր ազգական Յովսէփին իբրև նշանադրեալ, որը Պաւիթ թագաւորի ցեղիցն էր և պարապում էր հիւմութեամբ, որպէս զի նա հոկէ Մարիամ Սուրբ Կուսին. որովհետև ծնողները վախճանուել էին դեռ այն ժամանակ, երբ Մարիամ Սուրբ Կոյսը Երուսաղէմումն էր։

<sup>1)</sup> Բացատրել սաներին—ուխտաւոր ընծայաբերութիւնը աղաւ կամ աղջիկ զաւակների. Ինչ պիտի կապուած լինի ալդպիտի ընծայաբերութեան հետ—լօժարութիւն, հաւատ, սիրու. Օրինակներ բերել կեանքից. օրինակներից մէկն էլ—մեր Տիեխիսիչալ Կուսանոցը,

Վեցերորդ ամսին <sup>1)</sup> Աստուած ուղարկեց իւր Գարբիէլ հրեշտակը, Յովսէփի հետ նշանադրուած, Մարիամ Կուսի մօտ, որը կենում էր Գալիլիայի Նազարէթ քաղաքում: <sup>2)</sup>

Գալով հրեշտակը նորա մօտ՝ ասում է. «Ուրախացիր բերկրեալի. Տէրը քեզ հետ է. օրհնուած ես դու կանաց մէջ»:

Մարիամ Սուրբ Կոյսը շփոթուեցաւ հրեշտակի խօսքերի վերայ և մաածում էր—թէ ինչ պիտի լինի այտողջոնը:

Ասում է նորան հրեշտակը. «Մի վախենար Մարիամ. Աստուած պարգևում է քեզ իւր չնորհքն ու ողորմութիւնը— և ահա կլղանաս և կծնես մի որդի. Նորաանունը կդնես Յիսուս: Նա մեծ կլինի և Բարձրեալի Որդի կասուի. Նորան կտայ Տէր Աստուածը նորա հօրդաւթի աթոռը. Յակոբայ տան վերայ յաւիտեան կժագաւորէ. և նորա թագաւորութեանը վերջ չի լինի» <sup>3)</sup>:

Մարիամ Սուրբ Կոյսը ասում է հրեշտակին. «Այդ ինչպէս կարող է պատահել ինձ. քանի որ ես մարդ չպիտեմ»:

Պատասխանում է հրեշտակը և ասում նորան. «Սուրբ Հոգին կդայ քեզ վերայ և Բարձրեալի դօրութիւնը քեզ կհովանաւորէ. որովհետեւ նա, որ քեզանից պիտի ծնուի, սուրբ է և Աստուածոյ որդի պիտի կոչուի: Եւ ահա քո աղպական Եղիսարէթն էլ յղի է իւր ծերութեան հասակում

<sup>1)</sup> Բացատրել—ումն է վերաբերում վեց երրորդ ամիսը և ինչ կապ կալ:

<sup>2)</sup> Գիտէր Մարիամ Սուրբ Կոյսը Մեսիակ մասին և ինչ էր խնդրում Աստուածուց. Ձեռնարկ ա. տարի:

<sup>3)</sup> Կոպասէր Մարիամ Սուրբ Կոյսը ալսպիսի մեծ աւէտիքի. եթէ կոպասէր՝ ինչու, եթէ ոչ՝ դարձեալ ինչու. Ձեռնարկ ա. տարի:

և նորա ամլութիւնը վերցուել է <sup>1)</sup>: Որովհետեւ անկարելի ոչինչ չկայ Աստուածոյ ձեռքին»:

Ասում է Մարիամ Սուրբ Կոյսը. «Ահա ես Աստուածոյ աղախինն եմ. թնդ լինի ինձ այն՝ ինչ որ դու ասացիր <sup>2)</sup>: Հրեշտակը հեռացաւ նորանից»:

Մարիամ Սուրբ Կոյսի Աւետման յիշատակը մեր Եկեղեցին կատարում է Սպրիլի 7-ին <sup>3)</sup>:

#### ԺԵ. ՇԱՐԱԿԱՆ ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ.

Կանոն Աստուածայայտնութեան ճրագալուցին.

Անկանիմք առաջի քո Աստուածածին. եւ աղաչեմք զանարատ զելցոտ: Բարեխօսեա վասն անծանց մնըց եւ աղաչեա զմիածին Որդին: Փրկել զմեզ և փորձութենէ. Եւ յամենայն վտանգից մնըց:

Երեսի վերայ ընկնում ենք Քո առաջ. ով Սուրբ Աստուածածին. և աղաչում ենք քեզ՝ անարատ կուսիպ: Բարեխօս եղիր մեզ համար. և աղաչիր Քո Միածին Որդուն: Որ փրկէ մեզ փորձութիւնից և մեր բոլոր վտանգներից <sup>4)</sup>:

<sup>1)</sup> Բացատրել—ամլութիւն բառը. ամլութիւնը վերցուելու:

<sup>2)</sup> Ձեռնարկ ա. տարի:

<sup>3)</sup> Կրկնել անշարժ կամ անփոփոխ տօների մասին. Ձեռնարկ ա. տարի:

<sup>4)</sup> Բացատրել—փորձանք կամ վտանգ բառերը. թէ հագնոր և թէ մարմաւոր փորձութիւնը. Տես Ձեռնարկ, ա. տարի. Տէրունական աղօթքի բացատրութիւնը.

ԺԶ, ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԱԻԷՑՄԱՆ.

Կանոն Աստուածայայտնութեան ճրագալուցին:

Ուրախացի՞ր Սըբուհի՝ Գաքրիէլի աւետեօք. որ  
քարոզեաց զգալուստ առքային Տեսոն ի յերկնից:

Ողջո՞ն ընդ քեզ Մարիամ, ի քեզ սուրբ Հոգին  
եկեցէ. եւ զօրութիւն Բարձրելոյն ի վերայ քո հովա-  
նացի <sup>1)</sup>:

Ուրախացիր նվ Սըբուհի՝ Գաքրիէլ հրեշտակապետի  
քեզ տուած աւետիսովը. որովհետև նա քարոզեց եր-  
կնքից եկող Տէր թագաւորի գալուստը:

Ողջո՞ն Քեղ՝ Մարիամ. Սուրբ Հոգին Քեղ վերայ  
կիչնի. և բարձրելոյ զօրութիւնը Քեղ կհովանաւորէ—  
կպաշտպանէ <sup>2)</sup>:

12. ՀՐԵՇՏԱԿԻ ԱԻԵՏԻՔԸ ԵՒ ԶԱՔԱՐԻԱՅԻ ՊԱՊԱՆՁՈՒՄԸ,  
Ղուկ. Ա. 5—23.

Յիսուսի Քրիստոսի ծնուելու օրերը մօտացել էին.  
Հրէաստանում թագաւորում էր Հերովդէսը: Այդ ժամա-  
նակներում Յուդայի բաժնի քաղաքներից մէկում ապրում  
էին երկու ամուսիններ—Զաքարիա քահանայ և կինը՝  
Եղիսաբէթ: Երկուսն էլ արդար էին Աստուծոյ առաջին.  
Նորա պատուիրանները պահում էին և անարատ, սուրբ  
կեանք էին անցկացնում: Նորա ևս, Յովակիմ և Աննայի

<sup>1)</sup> Երրորդ տունը չէ հարկաւոր. շատ կլինի.

<sup>2)</sup> Ալս և առհասարակ ուսանելի շարականները, տաղե-  
րը, օրբհներդները և Աւետարանից եղած հատուածները բա-  
ցատրելին՝ պէտք է պահպանել կապը աւանդած դասի հետ,  
իբրև բացատրական շարունակութիւն դասի և ոչ իբրև նոր  
նիւթ: Իսկ երդի եղանակը սորվեցնել սաներին՝ ցանկալի էր:

Նման, որդի չունէին. որովհետև Եղիսաբէթը ամուլ էր <sup>1)</sup>,  
երկուսն էլ ծերացել էին:

Քահանայական պաշտօնավարութեան հերթը հա-  
սաւ Զաքարիային. նա ծիսական սովորութեան համե-  
մատ՝ մտաւ Տաճարը իննկարկելու: Եւ բոլոր ժողովուրդը  
դուրսը կանգնած աղօթում էին իննկարկելու ժամանակ:

Խնկոց սեղանի <sup>2)</sup> աջակողմից երևեցաւ Զաքարիա-  
յին Աստուծոյ հրեշտակը, երբ Զաքարիան խոնկ էր ծը-  
խում: Վախեցաւ և շփոթուեցաւ Զաքարիան: Հրեշտակն  
ասաց. մի վախենար, Զաքարիա. որովհետև Աստուած  
լսեց քո աղօթքը <sup>3)</sup>, և Եղիսաբէթ կինդ կծնիքեզ համար մի  
որդի. անունը կինես Յովիաննէս: Նա քեզ ուրախութիւն  
և ցնծութիւն կպատճառէ. և նորա ծնունդը շատերին կու-  
րախացնէ: Նա մեծ կլինի Աստուծոյ առաջին. գինի և օղի  
շի խմի. և հէնց ծնուելուց առաջ սուրբ Հոգւոյ շնորհ-  
քով կցուի: Նա կրամոզէ, կսովորցնէ և շատերին իսրա-  
յէլացիներից հաւատի կբերէ գէպի իրենց հալրերի Աս-  
տուածը: Աստուծոյ առաջից կդայ Հոգւով և Եղիայի զօ-  
րութեամբ. հայրերի սիրտը՝ կղարձնէ որդուցը. և անհա-  
ւաններին՝ արդարներին վայել իմաստութիւն կտայ. Տի-  
րոջ համար ժողովուրդ կպատրաստէ <sup>4)</sup>:

Զաքարիան պատասխանեց հրեշտակին և առաց.  
ինչնպի կարող եմ ես հաւատալ այդ խօսքերին. քանի  
որ ես ծերացել եմ և կինս էլ որդէբերութեան ժա-  
մանակը անց է կացրել:

<sup>1)</sup> Յիշել սաներին Յովակիմի և Աննաի վիճակը չը-  
րութեան մասին:

<sup>2)</sup> Բացատրել—Խնկոց սեղանը:

<sup>3)</sup> Կոնչ պիտի լինէր Զաքարիայի աղօթքը—Յիշել Յովա-

<sup>4)</sup> Բացատրել հրեշտակի աւետարեր խօսքերի մութ կէ-

Պատասխանեց նորան հրեշտակին ու ասաց. Ես եմ Քաքրիէլը, որ կանգնած եմ միշտ Աստուծոյ առաջին, ես ուղարկուել եմ խօսել քեզ հետ և տալ քեզ այս աւետիրը, բայց որովհետև դու չհաւատացիր խօսքերիս, որոնք կկատարուին ժամանակին՝ ուստի խօսին և եթ կպապանձուիս, համր լլինիս և շպիտի կարողանաս խօսել մինչև այն օրը՝ երբ քեզ տուած աւէտիքս կը կատարուի:

Ժողովուրդը Տաճարի դուրսը սպասում էր Զաքարիային և զարմանում էր նորա ուշանալու մասին, երբ դուրս եկաւ Զաքարիան՝ չկարողացաւ խօսել ժողովրդի հետ. Նորա խօսին հասկացան – թէ Զաքարիային տեսիլ է երեցել Տաճարի մէջ։ Զաքարիան նշաններով էր խօսում նոյց հետ. Նա պապանձուել էր, համր էր։

Պաշտաման օրերը լրանալուց յետոյ՝ զնաց տուն։

13. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ԾՆՈՒՆԴԸ. Ղուկ. Ա. 24. 25.  
57—68. 76.

Ելդ օրերը անցնելուց յետոյ՝ Զաքարիայի Եղիսաբէթ կինը յլացաւ, և հինգ ամիս թարցնում էր այդ պղպականներից<sup>1)</sup>։ Նա ասում էր ինքն իրան – այս ինչ արեց ինձ Աստուծ ծերութեանս օրերում, երբ կամեցաւ վերցնել ինձանից, մարդկանց առաջ ունեցած, նաև սատինքս<sup>2)</sup>։

Մանկան ծնուելու ժամանակը հասաւ և Եղիսա-

<sup>1)</sup> Բացատրել – հաճապետական համեստութիւն, պարկնչութիւն, ծերութեան զաւակ – պարզե Աստուծու. ինչպէս Աբրահամ ու Սառա. բայց նահապետական ամօթխածութիւն,

<sup>2)</sup> Յիշել սաներին ամութեան – չբերութեան նախառինքը, Զեռնարկո. ա. տարի. Յովակիմ ու Աննուի պատմութեան մէջ։

քէթը ծնաւ։ Նորա ազգականները և մօտ ու շուրջ եղողները լսեցին – թէ մեծ ողորմութիւն է արել Աստուծած Եղիսաբէթին և ուրախանում էին նորա հետ։

Ծննդեան ութերորդ օրը եկան նորածին մանուկին անուն տալու, կամենում էին հօր անունով Զաքարիա անուանել։ Եղիսաբէթը շհամաձայնեցաւ. Նա ասաց – – Յովհաննէս պէտք է կոչել։ Ասում են նորան – Յովհաննէս անունով ոչ որ չկայ քո ազգի մէջ։ Դիմեցին մանկան հօրը և սպասում էին – թէ նա ինչ կասէ։

Զաքարիան տախտակ պահանջեց. զրեց և ասաց – – Յովհաննէս է դորա անունը. և ամենքը զարմացան։ Եւ խօսին լեզուն բացուեցաւ, խօսում էր և օրհնում Աստուծուն։

Երկիւղ ընկաւ այն ամենքի վերայ, որոնք լսում էին այս անցը, և ամեն տեղ պատմում էին այս խօսքերը։ Ամենքն էլ մտածում էին ու ասում – ի՞նչ պիտի լինի այս մանուկը։

Նորա Զաքարիա հայրը սուրբ Հովուվ լցուեցաւ և նորա ապագայի համար գուշակութիւններ արեց, մարդարէացաւ և ասաց. «Օրհնեալ է Խօրայէլի Տէր Աստուծը. որ այցելութիւն արեց մեզ, և փրկութիւն պատրաստեց իւր ժողովրդի համար...։ Եւ գնւ մանուկ. բարձրեալի մարդարէն կլինիս. Տիրոջ երեսի առաջից կերթաս. որպէս զի նորա համար ճանապարհ պատրաստես...»<sup>1)</sup>։

Մանուկը ածում էր հասակով և զօրանում էր հոգւով. Նա անապատում էր մինչև այն ժամանակ՝ երբ երևեցաւ Յովհաննէի ափերին<sup>2)</sup>։

<sup>1)</sup> Բացատրել սաներին – Յովհաննէսի կոչումը.

<sup>2)</sup> Եթէ սաների ըմբռնողութիւնը կներէ՝ ուսուցիչը պիտի բացատրէ – թէ ինչու Յովհաննէսը անապատումն էր կե-

14. ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ, ՂԱՎԿ. Բ. 1. 3—7.

Հոռվմայեցիների Օգոստոս կայսրից հրաման գուրա  
եկաւ աշխարհագիր<sup>1)</sup> անել ամեն տեղ:

Ամենքն էլ գնում էին աշխարհագիր լինելու. իւրա-  
քանչիւրը իւր պապական քաղաքում:

Յովսէփն էլ գուրս եկաւ Գալիլեայի Նաղարէթ  
քաղաքից Մարիամ Կոյսի հետ և գնաց Հրէաստանի-  
Բեթղեհէմը՝ որ Դաւթի քաղաք էր ասւում. որովհետե-  
երկուսն էլ Դաւթի տանիցն էին ու աղգից:

Երբ եկան Բեթղեհէմ, ծնելու օրերը հասան: Ծնաւ-  
իւր անդրանիկ որդին, փաթաթեց խանձարուրի մէջ  
և դրեց մսրի մէջ<sup>2)</sup>:

Բեթղեհէմում իջևանելու տեղ չգտնելու համար,  
դիմեցին գիշերել ոչխարների այրումը:

Յիսուսի Ծննդեան յիշատակը մեր Եկեղեցին կա-  
տարում է Յունվարի 6-ին:

Նում և ոչ ծնողների մօտ—հեռու քաղաքի աղմկալի կեանքից,  
գալթակիցնող երևութներից. առանձնութիւն, խստաբարոք  
կեանք—պատրաստութիւն իւր մեծ կոչման... և ալլն:

<sup>1)</sup> Բացատրել աշխարհագիրը: Տես՝ ձեռնարկա. ա. տարի.  
Յիսուսի Ծննդեան պատմութեան մէջ:

<sup>2)</sup> Յիսուսի Ծննդեան դիշերը ինչու ենք ուրախանում.  
Հարցնել սաներին. բաց ինչով պիտի ուրախանք—որ  
ծնուի մեր սրտերի մէջ. ինչպիսի սիրտ պիտի ունենանք՝ որ  
մեր սրտերումը ծնուի—ասուղի և աղբիւրի ջրի պէս: Տես  
Ձեռնարկա. ա. տարի. Յիսուսի Ծննդեան պատմութեան մէջ:

ԺԷ. ՇԱՐԱԿԱՆ ԾՆՆԴԵԱՆ ՅԻՍՈՒՄԻ:

Կանոն Աստուածայայտնութեան առաջին աւուրն:

Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր-  
յայտնեցաւ. հովիւրն երգեն ընդ հրեշտակա. տան աւե-  
տիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմը քաղաքի. որդիք  
մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ:

Անքաւելին երկնի եւ երկրի՝ ի խանձարուրա պա-  
տեցաւ. ոչ մեկնելով ի Հօրէ՝ ի սուրբ այրին բազմեցաւ:

Մեծ և հրաշալի է այն խորհուրդը<sup>1)</sup>, որ այս օր-  
յայտնուեցաւ. հովիւրները հրեշտակների հետ երգում են և  
աւետիս են տալի աշխարհին:

Նոր թագաւոր<sup>2)</sup> ծնուեցաւ Բեթղեհէմ քաղաքում.  
ով որդիք մարդկան, օրհնեցէք Նորան՝ Որը մեզ համար-  
մարմին առաւ, մարդ դարձաւ:

Նա՝ որին երկինքն ու երկիրը շեն կարող տեղաւո-  
րել իրենց մէջ<sup>3)</sup> խանձարուրի մէջ բալուլուեցաւ—փա-

<sup>1)</sup> Բացատրել սաներին—ինչ էր արդ մեծ և հրաշալի-  
խորհուրդը—մարդկանց փրկութիւնը, փրկութեան խոստման-  
կատարումը. Ընդարձակ զրուցատրութիւն:

<sup>2)</sup> Ի՞նչ թագաւոր—Հրէաների սպասած մարմնաւոր՝ թէ  
Սրտի թագաւոր...: Ընդարձակել:

<sup>3)</sup> Ինչու անքաւելի. ինչ կնշանակէ. բացատրել. Անքա-  
ւելուն համար մեր սիրտն էլ է բաւական տեղաւորելու, եթէ  
սուրբ է և մաքրուր:

Թաթուեցաւ և մսուրի մէջ դրուեցաւ. <sup>1)</sup> թէն միշտ անքաժանելի է չօրից <sup>2)</sup>:

15. ՀՈՎԻՒՆԵՐԻ ԵՐԿՐՈԱԳՈՒԹԻՒՆԸ. Ղուկ. Բ. 8—20.

Յիսուսի ծննդեան գիշերը հովիւները բացօթեայ գաշտումը իրենց ոչխարներն էին պահում:

Սստուծոյ հրեշտակը նրանց երկեցաւ և Տիրոջ փառքը ծաղեցաւ նրանց և շատ վախեցան:

Հրեշտակն ասաց նրանց—«մի վախենաք. ահաւասիկ ես ձեզ մեծ ուժովութիւն եմ աւետաւմ. այդ ուրախութիւն եմ աւետում. այդ ուրախութիւնը բոլոր ժողովրդի համար պիտի լինի: Որովհեան այսօր ձեզ համար փրկիչ ծննդեցաւ Դաւթի քաղաքումը. որը օծեալ Տէր է»:

Անա խօսքին նշանը—կդտնէք մանկանը խանձարուրում փաթաթուած և մսրի մէջ դրուած»:

Յանկարծ այդ հրեշտակի հետ երկեցան շատ երկնաւոր հրեշտակներ, որոնք սկսան օրնենել Սստուծուն ու առել—«ինոք ի բարձունս Սստուծոյ. և յերկիր՝ խաղաղութիւն ի մարդիկ՝ հաճութիւն»:

Եւ երբ հեռացան նրանցից հրեշտակները և երկինք բարձրացան՝ հովիւներն միմեանց ասացին—«Եկէք, զնանք մինչև Բեթղեհէմ և տեսնենք, ինչ է այս խօսքը, որ եղաւ, որը Սստուծ ցոյց տուեց մեզ»:

Եկան շուտով և գտան Մարիամ Սուրբ Պոյսին և

<sup>1)</sup> Ինչու ալրի մսուրի մէջ և ոչ պալատներում. իրեն թագաւոր, Մասիս և Դաւթիթ թագաւորի ցեղից սերուած. ինչու աղքատոթեան մէջ և ոչ ճոխութեան. Զեռնարկութեան Ա. տարի:

<sup>2)</sup> Սթէ զասարանը կարող է ըմբանել բացատրել—թէ ինչպէս անբաժանելի է չօրից. օրինակ—արեգակի լուսը, ճառագալթեները, ներմութիւնը՝ անբաժանելի են արեգակից. մարդուն խօսքը՝ անբաժանելի է իրանից. հեղինակների մտքերը՝ անբաժան են իրենցից... ևալն. թէն օգուաներ են տալիս երկին և մարդկանց. բացատրել, տապաւորել:

Յովսէփին. և մանկանը՝ մսուրի մէջ դրած։ Եյժմ հասկացան այն խօսքը, որ ասսւեցաւ իրենց՝ մանկան մասին։

Այն ամենքը, որոնց պատմում էին հովիւները, զարմանում էին իրենց լամաճների վերայ։

Իսկ Աստուածային մանկան Մայր Մարիամ Սուրբ Պոյսը պահում էր մտքումը՝ այս բոլոր խօսքերը. և խոր մտածում էր՝ որ համկանայ։

Դարձան հովիւները, վիառապրաւմ և օրհնում էին Սստուծուն այն ամեն բանի համար՝ ինչ որ վսեցին ու առեսան։ Խնչպէս որ իրենց պատմուել էր <sup>1)</sup>։

### ՕՐՀՆԵՐԻ ՀՐԵՇՏԱԿԱՅՑ

Փա՞ռ ի բարձունս Աստուծոյ. Եւ յերկիր՝ իաղաղութիւն. ի մարդկէ՝ հաճութիւն. և օրհնութիւն։ Քնզ ի բարձունս։

Օրհնեալ ես. տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ. Եւ գովեմք զքեզ։

Խոստովանիմք տէր զքեզ. Եւ երկիրապանեմք զքեզ. փառատրեմք զքեզ. զոհանամք Տէր զքէն՝ վասն մնմի փառաց քոց։

Տէր թագաւոր. սուրբադ երկնային. Աստուած Եւ չայր ամենակալ։

Տէր Եւ որդի չօր միածին Յիսուս Քրիստոս Եւ սուրբ որդի։ Տէր Աստուած. զահն Աստուծոյ Եւ որդի չօր. որ առեր զմերս ի կուսէն։

Ողորմնցար, բարձեր զմեղս աշխարհի. Եւ արդ ընկալ զաղաշանս մեր։

<sup>1)</sup> Ինչու ամենից առաջ հովիւներին տրուեցաւ ալդ մեծ աւետիքը և ոչ մեծամեծներին. Տես Զեռնարկս Ա. տարի։

Սուրբ՝ որ նստիս ընդ աշմէ չօր՝ ողորմնաց  
մեզ:

Զի դու միայն սսրը, դու միայն բարձրեալ  
ես. դու միայն Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս:

Տէ՛ր եւ չոգիդ սուրբ. որ ի փառ՝ Աստուած-  
ընդ չօր. Ամէն:

Փաք լինի բարձրեալ Աստուծուն, երկրին՝ խա-  
ղաղութիւն լինի. մարդկանց մէջ հաճելի յարաբերու-  
թիւն լինի. և օրհնութիւն Քեզ, ով Բարձրեալ:

Օրհնեալ ես. մէկ Տէ՛ր Աստուած մեր. օրհնում  
ենք Քեզ և գովում:

Տէ՛ր. մենք Քեզ գովում ենք և երկրպագութիւն  
ենք տալիս Քեզ. փառաւրում ենք Քեզ. և գոհանում  
ենք Քեզանից, Տէ՛ր, Քո մեծ փառքի համար:

Տէ՛ր. Դու թագաւոր ես, Սուրբ ես երկնային,  
Աստուած ես և Ամենակալ չայր ես:

Տէ՛ր ես և չօր Միածինն ես և Դու՝ Յիսուս Քրիս-  
տոս, սուրբ Որդի. Տէ՛ր Աստուած, Աստուծոյ Գառը և  
չօր Որդի՝ որ մեր ընութիւնը առար կոյսից:

Դու ողորմեցիր մեզ և աշխարհի մեղքը վերցրիր.  
այժմ ընդունիր մեր աղաշանքը:

Ո՞վ Սուրբ, որ չօր աջ կողմն ես նստած՝ ողոր-  
միր մեզ:

Որովհետեւ Դու ես միայն Սուրբը. Դու ես միայն  
Բարձրեալը. Դու միայն՝ ով Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս:

Տէ՛ր ես և Դու. ով չոգիդ Սուրբ. որ չօր հետ Աս-  
տուած ես մի փառքի մէջ. Ամէն:

16 ՔԱՐԱՍՆՈՐԵԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ՏԱՃԱՐ ԳԱԼՅ Կամ  
ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՅ ։ Ղ. ու կ. թ. 22—40.

Երբ Յիսուսի սրբութեան օրերը լրացան՝ Մովսիսի  
օրէնքով Յովսէփն ու Աստուածամայրն Մարիամ առան  
իրենց հետ Յիսուս մանկանը և մի զոյգ աղաւնի և  
գնացին Երուսաղէմ օրէնքը կատարելու։ Օրէնքն այս  
էր—թէ ամենայն արու զաւակ՝ որ առաջին կամ անդ-  
րանիկ ծնունդն է՝ նա Սուտուծոյ առաջ սուրբ է հա-  
մարւում, ուստի նոյն օրէնքով զոհ պիտի տանէին Տա-  
ճարին մի զոյգ տատրակ կամ աղաւնու երկու ձագ։

Երուսաղէմում կար մի արդար և երկիրած մարդ,  
Սիմէօն անունով, որ սպասում էր Խորայէլի մխիթա-  
րութիւնը տեսնելու։ Նա հրաման էր առել Սուրբ Հոգուց  
— շմեռնել՝ մինչեւ Տիրոջ Օծեալին տեսնելը։ Սուրբ  
Հոգուց աղգարաբութեամբ եկաւ Տաճարը. և երբ Յիսուս  
մանուկը Տաճարը բերին օրէնքի սովորութեան համե-  
մատ՝ նա մօտեցաւ, զրկեց և օրհնեց Աստուծուն ու  
ասաց—«այժմ խոստմանդ համաձայն, արձակիր Տէ՛ր Քո  
ծառային դէպի խաղաղութիւն, որովհետև իմ աշքերս  
տեսան Քո փրկութիւնը. որ պատրաստեցիր բոլոր ժո-  
ղովրդի առաջ։ Լոյս յայտնուեցար հեթանոսների հա-  
մար, փառք յայտնուեցար Քո Խորայէլ ժողովրդի  
համար»։

Յովսէփ և Աստուածամայրն Մարիամ զարմանում  
էին այն բոլոր խօսքերի վերայ, որ լսում էին Յիսուսի  
մասին։

Օրհնեց նրանց Սիմէօնը և ասաց Աստուածամօրը—

<sup>1)</sup> Ալս պատմութիւնը պէտք է վերլուծել, եթէ կան  
նորեկներ, որոնք չեն լսել. եթէ չկան՝ դարձեալ աւելորդ  
Տէ՛ր լինի մի համառօտ հայրւ պահանջել. Տես Զեռնարկս  
ա. տարի. միմնոյն պատմութիւնը։

«Սա՝ Խորայէլի մէջ շատերի <sup>1)</sup> գլորուելու և կանգնելու <sup>2)</sup> պատճառ կը լինի. և հակառակութեան նշան։ Քո սիրտն իսկ կվշտանայ, կխոցոտի <sup>3)</sup>). որովհետև շատերի սրտերի խորհուրդները կրայտնուին Սորանով» <sup>4)</sup>։

Տաճարումն էր և Աննա անունով մի ուժուն չորս տարեկան կին, Փանուէլի աղջիկը, Յակոբ Նահապետի Ասեր որդու տօնմից. սա եօթ տարի ամուսնու հետ ապրելուց յետոյ՝ այրիացել էր և նույիրել էր իրեն Աստուծոյ Տաճարի ծառայութեանը. Տաճարից չէր հեռանում, պահքով ու աղօթքով գիշեր ու ցերեկ պաշտում էր իւլ Աստուծուն։ Սա ևս մի հենոյն ժամին գոհանում էր Աստուծուց. և Յիսուսի մասին խօսում էր ամենիրի հետ, որոնք սպասում էին Երուսաղէմի փրկութեանը։

Երբ օրէնքին համաձայն ուստի օրերն անցան՝ դարձան Գալլիեա և բնակուեցան իրենց Նազարէթ քաղաքում։

Աստուծային մանուկն Յիսուս հասակ էր աւենում և իմաստութիւնով լցւում, զարգանում ու զօրանում. և Աստուծոյ չնորհքը նորա վերայ էր։

Քառասնօրեայ Քրիստոսի Տաճար գալու յիշատակը մեր Եկեղեցին տօնում է Փետրվարի 14-ին։

<sup>1)</sup> Բաացատրել գլորուելը շատերի—իրենց կարծած թագաւորը չտեսնելով Յիսուսի մէջ՝ չհաւատացին և դալթակղուեցան։

<sup>2)</sup> Յիսուսի մէջ սրտի և հոգեոր թագաւոր տեսնողները հաւատացին, սրանց համար կան գնելու պատճառ. դարձաւ։

<sup>3)</sup> Յիսուսի մատնութիւնը, չարչարանքը, խաչը, մահը, թաղումը խոցեցին Աստուածամօր սիրութ։

<sup>4)</sup> Կոսսակցական բանակներ—Հաւատացողների՝ աշակերտներ և աշակերտուհիներ, առաքեալներ... և ալին և չհաւատացողների՝ իշխաններ, փարիսեցիք, քահանարապետներ... և ալին։

### III. ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ <sup>1)</sup>։

Տեառնընդառաջի տօնի Երեկոյեան նախատօնակին մեր Եկեղեցին կատարում է Մոմավառութեան և Հրավառութեան ծխական սրբազն արարողութիւնը։ Ժողովուրդը վառած մոմերը ձեռքերին տուն են գնում նախատօնակից յետոյ. իսկ ուր Հրավառութիւն կայ՝ նախատօնակից յետոյ վառած մոմերը և կիսալրեալ փայտը —անձղակոթը ձեռքերին տուն են գնում տան կտուրների վերայ կամ բագերում շինած դէղերը վառելու. դրահամար էլ ժողովուրդը այս տօնը անուանում է նաև Դրնդէզ։

Հրավառութեան սովորութիւնը մնացել է Հալոց Հեթանոսական կեանքից—Դերջան գաւառի Բագառինց գիւղում Միհր Հեփեստիալի մեհեանը կար. Միհր՝ արև է նշանակում. այդ ազգային աստուծոյ անունով է կոչւում մեր Մեհեկան ամիսը, որ Հոռվմայեցւոց փետրվարն է։ Մեհեկան ամսին ազգային-կրօնական տօն էր Միհր Հեփեստեայ աստուծոյ. Մեհեանի գաւթում կամ հրապարակում ցախ էին դիվում կամ ցախերը վրանաձեւ շինում և չոր խոտով ծածկում իրեն դէզ. նորափեսաները վառում էին և վառած դէզի կամ կրակի շուրջը պարում էին երգելով։ Երբ կրակը նստում էր՝ մոխիրը և անձղակոթը տուն էին տանում. մոխիրը պահում էին իրեն սրբութիւն կամ իրեն նույիրական հող. իսկ անձղակոթը գնում էին իրենց տների կտուրների վերայ կամ բագերում շինած դէղերի մէջ ու վառում. և երգ ու պարով տօն կատարում, ուրախանում։ Եւ որովհետև Քրիստոնէական Տեառնընդառաջի տօնը միենոյն ամսաթուին է

<sup>1)</sup> Եթէ ուսուցիչը լարմար չհամարէ ալս տեղեկութիւնը տալ սաներին՝ կարող է։

գալիս՝ ուստի այդ սովորութիւնն էլ մնացել է։ Այժմ  
գրեթէ վերջացած է, և տեղ տեղ միայն կատարում են.  
այն էլ շատ անշուլք։

Իսկ Մոմավաճառութեան ծիսական սրբազնն արա-  
րողութիւնը Քրիստոնէական կեանքին է պատկանում  
ըստ աւանդութեան—թէ երբ Քառամսօրեայ Յիսուսին  
Տաճար տարան՝ իրիկնադէմ էր և մուժ։ Երուսաղէմա-  
ցիք՝ ոմանք քնած էին և ոմանք պատրաստում էին  
քնելու։ Յիսուս մանկանը Տաճարի դռներին մո-  
տեցնելուն պէս՝ գաները ահազին դղրդիւնով բացուե-  
ցան. դղրդիւնի և թնդիւնի ձայնից՝ ժողովուրդը գուրս  
թափեցան տներից և, որը լապտերը վառած և որը մո-  
մեր վառած ձեռքերին, շտապում էին դէպի այն կողմը՝  
որ կրզմից լսուել էր ձայնը։ Այս յիշատակն անմռուաց  
պահելու համար, սովորութիւն եղաւ Տեառնընդառաջի  
երեկոյեան նախատօնակից յետոյ վառած մոմերով տուն  
վերադառնալ<sup>1)</sup>։

#### ՏԱՂ. ՏԵՍՈՒԾՆԴԱՐԱՋԻ

Քրիստոս, փառաց թագաւորն, այսօր եկեալյընծայում։  
Կատարելով նա զօրէնս՝ քառամսօրեայ գալստեամբն.  
Զոր մարգարէն նսայի յառաջազրյն գուշակեաց  
յերուսաղէմ քաղաքի Սիմէօնի ծերունոյն<sup>2)</sup>։

Քրիստոս, փառքի թագաւորը, օրէնքը կատարելու  
համար այսօր իւր քառամսօրեայ գալստեամբ ընծայում

<sup>1)</sup> Այս աւանդական պատմութեան մէջ եթէ որ և է սխալ  
կաէ և նկատել են ընթերցողները, որպէս և Ա. աարուալ և  
այս Բ. տարուալ Զեռնարկներիս մէջ՝ կիսնդրեմ ուղղեն հրա-  
պարակաւ, ես ուրախութեամբ կկարդամ և կսովորեմ։

<sup>2)</sup> Եսակ. Է. 14.

է տաճարին, այդ մասին, շատ առաջ Երուսաղէմում գու-  
շակել էր Եսայի մարգարէն Սիմէօն ծերունու մասին։

17. ՅՈՎ.ՀԱՆՆԵԼ ՄԿՐՏՉԻ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆԸ. Մատթ. Գ. 1—5.  
Ղուկ. Գ. 10—14. 8.

Յովհաննէս Մկրտիչը քարոզում էր Հրէաստանի ա-  
նապատումը Յորդանանի մօտ և ասում—Սպաշխարեցէք՝  
որովհետեւ մօտեցել է երկնքի արքայութիւնը<sup>1)</sup>. Սա է,  
որի համար ասուել է Եսայի մարգարէի բերանով, խօս-  
քի կամ քարոզողի ձայնը անսպատիցն է գալիս. պատ-  
րաստեցէք Տիրոջ ճանապարհները. սւղիղ շաւիղ բաց ա-  
րէք նորա համար։

Յովհաննիսի հագուստն էր ուղտի բրդից. և գոտին՝  
կաշուց. կերակուրն էր մորեխն<sup>2)</sup> և վայրի մեղը<sup>3)</sup>։

Յովհաննիսին դիմում էին բոլոր Երուսաղէմացինե-  
րը, բոլոր Հրէաստանը և բոլոր Յորդանանի կողմը, որ  
մկրտուեն նորանից. մկրտում էին նորանից և խոստո-  
վանում էին իրենց մեղքերը։

Հարցնում էր նորան ժողովուրդը և ասում—ուրեմն

<sup>1)</sup> Բացատրել սաներին այս նախադասութիւնը—ինչ է  
ասպաշխարութիւնը, ինչպէս պէտք է ասպաշխարել և ինչ կամ  
ով է երկնքի արքալութիւնը. Կարելի է տեսնել Զեռնարկ Ա.  
տարի. Յիսուսը Մկրտութեան պատմութեան դասը։

<sup>2)</sup> Ինչպէս մեղանում որսացած թուշուները անցենկաց-  
նում փատի կամ բարակ պարանի վերալ և ծախում՝ այնպէս  
էլ այն ժամանակ մեծ մեծ մորեխներ էին բռնում և նոյն ձեռք  
ծախում. այդ մորեխներիցն էր ուտում Յովհաննէսը։

<sup>3)</sup> Սա քաղցր հեղուկ է, որ հալուած ինքի նման տե-  
րեների կամ թուփերի վերալ է լինում. ինչպէս մեր ուտենի-  
ների տերեների վերալ, այդ շաքարահիւթը ուտում էր Յով-  
հաննէսը։

Բնչ անենք։ Պատասխանում էր նրանց Յովհաննէսը և առում—ով երկու հանդերձ—շոր ունի՝ պէտք է մէկը շոմնեցողին տայ. ով երկու բաժին կերակուր ունի՝ նոյն պէս պէտք է անէ։ Եկան և մաքսաւորները Յովհաննիսից մկրտուելու. և հարցնում են—վարդապետ—ուսուսուցիչ. ինչ անենք։ Յովհաննէսը պատասխանում է նրանց—արէք այն՝ ինչ որ հրամայուած է ձեզ. հրամայուածից զատ՝ աւելորդ բան չանէք<sup>1)</sup>։ Զինւորներն էլ էին հարցնում և ասում—իսկ մենք ինչ անենք. Ասում է նրանց—ոչ մէկին չշարշարէք, չնեղացնէք, չզրպարտէք. ինչ որ արգունուստ ձեզ համար ծախս<sup>2)</sup> է նշանակուած նորանով բաւականացէք։

Այս և այսպիսի շատ միխթարական խօսքեր էր ասում ժողովրդին և մկրտողներին և քարոզում էր, ուրախութիւն էր աւետարանում նրանց։

18. ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ. Մատթ. Գ. 11—17.

Յովհաննէսը իւր քարոզութիւնը աւարտեց—վերջացրեց այս խօսքերով—Ես մկրտում եմ ձեզ ջրով, որ ապաշխարէք—ձեր մեղքերը զլչաք. բայց որ ինձանից յետոյ է գալիս և աւելի հզօր է ինձանից՝ և ես շեմ արժանի նորա կօշիկները վերցնելու և կամ նորա կօշիկների կապերը արձակելու՝ ահա նա կմկրտէ ձեզ Սուրբ Հոգով և կրակով։ Նա հեծանոց ունի ձեռին. կսրբէ իւր կալը. յորենը կհաւաքէ շտեմարանում և յարդը—դար-

<sup>1)</sup> Բացատրել մաքսատուն և մաքսաւոր բառերը. մաքսաւորների վատ վարմունքը, որի պատճառով էլ ժողովրդից անարգուած էր ալդ դասակարգը։

<sup>2)</sup> Բացատրել զօրքի ծախքը, որ արքունուստ է. ուրեմն չպէտք է կեղեքեն անդէն ժողովրդին. իրենց ծախսի համար նշանակուած թոշակով պիտի բաւականանան։

մանը կայրէ անշէջ կրակով. այդ կրակը չի հանգչի, չի շիջանի<sup>1)</sup>։

Այն ժամանակ Յիսուս Գալիլեայից գալիս է Յորդանան Յովհաննէսը արգելում է նորան և ասում—ինձ է հարկաւոր Քեզանից մկրտուել. և Դու ես գալիս ինձ մօտ։ Պատասխանում է նորան Յիսուս և ասում—թոյլ տուր. օրէնքը արդարութեամբ պէտք է կատարել։ Յովհաննէսը թոյլ տուեց նորան։

Երբ մկրտուեցաւ Յիսուս՝ իսկոյն դուրս եկաւ ջրից. և ահա երկինքը բացուեցաւ իւր համար, և տեսաւ Աստուծոյ Հոգին՝ որ իջնում էր աղաւնու կերպարանքով և գալիս էր իւր վերապ. Եւ ահա երկինքը ձայն լուսեցաւ՝ որ ասում էր—Դու է իմ սիրելի Որդին. Որին ես հաճեցայ—հաւանեցայ։

Յիսուսի ծննդեան տօնը՝ Մկրտութեան հետ միասին մեր Եկեղեցին կատարում է Յունվարի 6-ին<sup>2)</sup>։

<sup>1)</sup> Բացատրել բառերը և մտքերը—Սուրբ Հոգւով և Կրակով. Հեծանոց. Սրբել կալը. Յորէն և Շտեմարան. Յարդ և Անշէջ կրակ. Առանց բացատրութեան դասը հասկանալի չի լինի սաներին և անհապատակ ու անօգուտ կանցնի։

<sup>2)</sup> Բացատրել—ինչո՞ւ է մկրտուում Յովհաննէսից. մեղք չունի. ապաշխարութեան կարօտ չէ. մկրտուելու պատճառներն են՝ հինգ—ա. հալքենի օրէնքը կատարել՝ ամեն մի ճշշմարիտ իսրաէլացի պէտք է մկրտուէր վերջին մարգարէից. բ. ջուրը պիտի սրբէր Ագամալին անէծքից. գ. խոնարհութեան օրինակ ցոլց աալու. դ. Մկրտութեան Սուրբ Խորհուրդը հաստատելու. ե. Սուրբ Երրորդութեան խորհուրդը լավոնելու. Բացատրութիւնները տես Ձեռնարկս. Ա. տարի. սոյն պատմութեան մէջ։

<sup>3)</sup> Յունվարի 6-ին ինչ Առաքելական սովորութիւն կաչ ՝ բացատրել Ծննդեան և Յալտնութեան տնօրհնէքը. բայց նախ Զրորհնէքը կամ Խաչը ջուր ձգելը։

ՏԱՂ. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ.

Ո՞վ զարմանալի. խորհուրդ այս մեծ յայտնեալ—  
—Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ  
Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ:  
Չառնոյը Կարապետն զմկրտիլն ի յանձն.  
Յորդանան լուեալ՝ փախստական ղառնայր,  
Վտակ առ վտակ՝ պատզամատր լինէր:  
Գետ. մի՛ գարհուրիր. քո Արարիչն եմ ես.  
Եկեալ՝ մկրտիլ եւ լուանալ զմեղս:

Ո՞վ զարմանքներիս, մեծ խորհուրդը այսօր յայտ-  
նուեցաւ <sup>1)</sup>—

Արարիչ Աստուածը Յորդանան գալով՝  
Կամենում է մկրտուել իւր ծառայից:  
Նորա Կարապետը չէ յանձն առնում նորան  
մկրտել.

Յորդանան զետը այս որ լսում է՝ փախչելով  
փախչում է <sup>2)</sup>:  
Եւ վտակների բաժանուելով՝ ամենքին այս  
անցքը պատմումէ <sup>3)</sup>:  
Յիսուս հանգստացնում է նորան և ասում—

<sup>1)</sup> Բացատրել—որ ակսօրուակ յաբոնուած մեծ խորհուրդը փրկագործութեան առաջին քալին է—որ Մկրտուելուց իւսու պէտք է ոկոչ Յիսուս իւր փրկական գործերը. օրինակներ բերել.

<sup>2)</sup> Բացատրել—թէ ոչ միան մարդը՝ առ աշխարհի բնական ստեղծուածներն էլ—չուրը եալին ի դէմս Յորդանանի, զարմանում են Արարչի մարդ զտոնալու մասին:

<sup>3)</sup> Բացատրել—որ ալդ զարմանքը՝ մարդը և աշխարհը, վտակների պէս, այս ու այն կողմ, սրան ու նրան զարմանքով պատմում են Յիսուսի մարդ զտոնալու անհաւասալի հրաշքը:

Ո՞վ Յորդանան զետ. մի վախենար. ես քո Արա-  
րիչն եմ <sup>1)</sup>:

Եկել եմ. որ մկրտուելով՝ մեղքերը լուանամ <sup>2)</sup>:

ԱԼԵՏԱՐԱՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ Մասթ. Գ. 13—17.

Յայնժամ զայ Յիսուս ի Դալիլէ ի Յորդանան  
առ Յովհաննէս՝ մկրտիլ ի նմանէ. Եւ Յովհաննէս ար-  
գելու զնա և ասէ. ինձ պիտոյ է ի քէն մկրտիլ և դու  
առիս զաս. Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնա.  
Ժոյլ տուր այժմ. զի այսպէս վայել է մեզ լուու զա-  
մենայն արդարութիւն. և ապա Ժոյլ ետ նմա:

Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ի  
զըոյ անտի. և ահա բացան նմա երկինք. և ետես զհո-  
գին Աստուծոյ՝ զի իշանէր իբրև զաղաւանի. և գայը ի  
վերայ նորա: Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. զա-  
է Որդի իմ սիրելի. ընդ որ հաճեցայ <sup>3)</sup>:

<sup>1)</sup> Բացատրել—որ Քրիստոսը, ի դէմս Յորդանանի, հա-  
սատի հրահիր է կարդում մարդուն ու աշխարհին. «Քո Արա-  
րիչն եմ ես», ասեկով՝ կամենումէ հաօկացնել—որ Աստու-  
ծոյ ձեռքին ամեն ինչ հնարաւոր է և կարելի. ինչպէս և Դար-  
քիէլ հրեշտակն ասաց Մարիամ Սուրբ Կուտին աւէտան ժա-  
մանակ:

<sup>2)</sup> Բացատրել—որ Յիսուս իւր Մկրտութիւնով Աղամա-  
լին մեղքն էր լուանում. որը սերնդէ սերունդ ծանրացել էր  
մարդկանց վերայ, մինչև որ ինքը պիտի վերցնէր իւր վերայ  
և տանէր Դողդոթակ:

<sup>3)</sup> Այս Աւետարանի թարգմանութիւնը չեմ գնում. որով-  
հետեւ զասի պատմութեան մէջ կալ, Պէտք է յորդորել սաներին—  
լաւ սովորել «խորհուրդ մեծ» շարականը և այս Աւետարանը՝ որ  
Ծննդեան տնօրհներին մասնակցեն տուն օրհնող քահանալին.  
զա պարտականութեան չափ ցանկալի է:

19. ԵԵՐԱՆ ԳԱՐՍԶԸ—ԻՆՆ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ. Մատթ. Դ.  
23, 25, Ե. 1—12.

Յիսուս, իւր Մկրտութիւնից յետոյ, սկսաւ շըջել  
իւր աշակերտների հետ Գալիեայի բոլոր կողմերը.  
ուսուցածում էր ժողովրդին, քարոզում էր նրանց  
Աստուծոյ արքայութիւնը և բժշկում էր ժողովրդի բո-  
լոր հիւանդութիւններն ու ախտերը:

Նորան հետեւում էին շատ ժողովուրդ Գալիեա-  
յից, Երուսալէմից, Հրէաստանից, Յորդանանի միւս  
կողմից և բժշկում էր նոցա:

Տեսնելով նոցա՝ բարձրացաւ լեառը—սարը. և  
երբ նստեց այստեղ՝ մօտեցան նորան աշակերտները:

Յիսուս սկսաւ ուսուցանել նոցա ու ասել—

ԻԲ. Երանի աղքատաց հոգով՝ զի նոցա է արքա-  
յութիւն երկնից:

Երանի սգաւորաց՝ զի նոքա մխիթարեսցին:

Երանի հեզոց՝ զի նոքա ժառանգեսցեն զերկիր:

Երանի՝ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարու-  
թեան՝ զի նոքա յագեսցին:

Երանի ողորմածաց՝ զի նոքա ողորմութիւն  
պտցեն:

Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք զի նոքա  
պԱստուած տեսցեն:

Երանի. խաղաղարարաց՝ զի նոքա որդիք Աստու-  
ծոյ կրչեսցին:

Երանի որ հայածեալ իցեն վասն արդարութեան՝  
զի նոցա է արքայութիւն երկնից:

Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեղ և հա-  
լածեսցեն. և ասիցեն զամենայն բան շար զձէնց

առւտ վասն իմ. Ցնծացէք և ուրախ լերուք, զի  
վարձը ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալա-  
ծեցին զմարգարէսն, որ յառաջ քան դձեղ էին:

Երանի՝ հոգւով աղքատներին, որովհետեւ երկնքի  
արքայութիւնը նրանցն է <sup>1)</sup>:

Երանի՝ սգաւորներին՝ որովհետեւ նրանք պիտի ու-  
րախանան <sup>2)</sup>:

Երանի՝ հեղերին—անուշ ու քաղցր և մեղմ ընաւո-  
քութիւն. ունեցող մարդկանց. որովհետեւ երկիրը նրանք  
պիտի ժառանգեն <sup>3)</sup>:

Երանի՝ նրանց՝ որոնք արդարութեան, ճշմարտու-  
թեան, ուղիղն ասելու և գործելու, ընկերի սխալը բա-

<sup>1)</sup> Բացատրել—հոգւով աղքատութիւնը—բարո-  
գապէս և նիւթապէո ընկած ընկերի օգնութեան համար իւր  
հոգեկան ու մարմնական ոժերը ծախսողը—հոգւով աղ-  
քատ է, վիճակից գոհը և անձնազոհը՝ նոյնպէս հոգւով  
աղքատ է. Օրինակներ կեանքից:

<sup>2)</sup> Բացատրել—որ ակտեղ վիշտած սգաւորութիւնը ան-  
չատական մարմնաւոր սգաւորութեան մասին չէ. ոչ էլ, ի  
մասնաւորի, ընկերի նիւթական կամ մարմնաւոր սգաւորու-  
թեան համար. ըստ այնմ—թողէք մեռելոց թաղել զմեռեալս  
իւրեանց. ալլ ակս սգաւորութիւնը՝ հոգեպէս ու բարուա-  
պէս ընկած ընկերի համար է, որի մասին հարկաւոր է  
տիրել, սգալ և մտածել—հանել նրան զալթակղութեան փո-  
սից, ուր որ ընկել է նա. և ապա միայն ուրախանալ իւրե  
հոգւով աղքատ. ըստ առաքելոլուն—ո՛ հիւանդանալ՝ և ոչ ես  
հիւանդանում. ո զալթակղի՝ և ոչ ես տապանամ. Կարելի է և  
անհատական կամ անձնական սգաւորութիւն հասկանալ.  
բայց հոգեոր ու բարուական՝ և ոչ մարմնական կամ նիւթա-  
կան զրկանքների համար. Օրինակներ կեանքից:

<sup>3)</sup> Բացատրել—թէ վիրաւի քաղցր, անուշ ու մեղմ մար-  
դիկ համեմատաբար աւելի քիչ են կորցնում՝ քան թէ խըս-

բեկամարար ուղղելու՝ և առհասարակ արդար, սուրբ եւ բարի բան անելու համար քաղցած են ու ծարաւ. նորակիշտանան. իրենց նպատակին կհանեն:

Երանի՛ ողորմած, գթոտ, կարեկից ու խեղճերին ողորմութիւն անող մարդկանց, որովհետև նրանք իրանքէլ ուրիշներից և Աստուծուց սղորմութիւն կդտնեն<sup>1)</sup>:

Երանի՛ նրանց՝ որ սուրբ սիրտ ունին. նրանք Աստուծուն կտեսնեն<sup>2)</sup>:

Երանի՛ նրանց՝ որոնք խաղաղարար են. խաղաղութիւն են սիրում և խաղաղութիւն ձգում խոռվների ու կուղների մէջ. նրանք Աստուծոյ որդիք կկոչուին<sup>3)</sup>:

առափառները, կոպիտները, առաջինները սիրտ են շահում. երկրորդները՝ շահած սրտերն էլ են հեռացնում. Ուրեմն հեղերի շառափղը չի կտրուի, նրանք որդոց որդի՝ միշտ կապրին երկրի վերակ. և ուրեմն երկիրը կժառանդեն. Դրանք են համբերողները, համակերպողները. որոնք ընդարձակում են բարեացակամների շրջանը. և ոչ կոպիտներն ու անհամբերները, զրկողներն ու բափշտակողները. 0րինակներ կեանքից. որ. «Գալլը և Կատուն» թողուածը....

<sup>1)</sup> Բացատրել—լիշելով ժողովրդական առածը—ինչ կը ցանես այն հինձնու:

<sup>2)</sup> Բացատրել սուրբ սիրտը—նաև ամենքի վերալիբրեհօր, մօր, եղօր և քրոջ վերակ. կամենալ ուրիշներին այն՝ ինչ որ մենք մեղ ենք կամենում: Ես՝ ես եմ. կամենամ—որ դու էլ ես լինիմ. ես էլ՝ դու լինիս. ալսինքն՝ ես քո մէջ և դու իմ մէջ:

<sup>3)</sup> Բացատրել—որ մարմնական, արտաքին, աշխարհակին խաղաղութիւնից զատ՝ կալ և հոգեկան, ներքին, սրտի խաղաղութիւն. Երանի՛ է այն մարդուն՝ որ մեղքերից լուզուած, ընկերից վրէժն հանելու, նորան վնասելու, կամ նորան չարձանապարհով գալթակղեցնելու մտատանջութեան մէջ եղած մարդու սրտի և հոգու մէջ խաղաղութիւն է ձգում. հանում է նորան գալթակղուած դրութիւնից, օրինակ—Յիսուս՝ որ իջաւ երկնքից և խաղաղութիւն ձգեց երկնքի ու երկրի մէջ. հաշտեցրեց Աստուծուն մեղաւոր մարդկանց հետ... և այլն:

Երանի՛ նրանց՝ որոնք հալածւում են, տանջւում են և շարչարում արդարութեան ու ճշմարտութեան համար. որովհետև նրանցն է երկնքի ալքայութիւնը<sup>1)</sup>:

Երանի՛ ձեզ՝ և երանի այն ժամանակ մանաւանդ՝ երբ ձեզ կհալածեն, կնախատեն. և իմ անուան, իմ խաթեր համար շատ շար ու սուտ զրոյցներ, բամբասահքներ կանքների մասին ձեր վերայ, ձեր մասին: Ուրախ եղէք դուք այդպիսի հանգամանքներում. որովհետև քանի շատ զրբարտեն ձեզ՝ այնքան կշատանայ ու կաւելանայ երկընքում ձեր վարձքը. մի վախենաք այդպիսի բաներից. յիշեցէք՝ որ ձեզանից առաջ եղած մարդարէներին էլ այդպիէս հալածեցին<sup>2)</sup>:

### ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍԾԱՌԱԿՆԵՐԸ

20. ՈՂՈՐՄԱՆ ՍԱՄԱՐԱՅԻՆ. Ղուկ. Ժ. 25—37.

Մի օրինական<sup>3)</sup> եկաւ Յիսուսի մօտ և փորձելով հարցնում էր այսպէս—Ուսուցիչ-վարդապետ. ինչ պիտի

<sup>1)</sup> Այս երանութեան բացատրութիւնը դ-րդ Երանի՛-ի բացատրութիւնն ունի:

<sup>2)</sup> Բացատրել—որ սուտ զրոյցները, բամբասահքները մեր անուան վերակ բիծ անգամ դնել չեն կարող. եթէ դոքա Յիսուսի անուան ու խաթեր համար է, ալսինքն—եթէ մեր կեանքը այնքան մաքուր է, որի՝ իբրև հակելու մէջ պիտի ուղղեն իրենց մեղ բամբասողները: Ազնիւ, սուրբ, օգտակար ու ճշմարիտ զաղափարի համար կրած հալածանքը, բամբասահքը՝ վարդեր ու անուշանոտ ծաղիկներ պիտի համարուին ալդ հալածուածների համար:

<sup>3)</sup> Բացատրել օրինական բառը. օրինականները օրէնքների կատարման հսկողներն էին և օրէնքի ուսուցիչները—իսկ մեղանում...

անեմ՝ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ։ Յիսուս  
պատասխանում է և հարցնում—ի՞նչ է գրուած օրէնքի  
մէջ. ինչպէս ես կարդում։ Օրինականը պատասխանում  
է և ասում—Պէտք է սիրես քո Տէր Աստուծուն բոլոր  
սրտով, քեզանից էլ աւելի և ինչքան ոյժ ու գօրու-  
թիւն ունես քո մէջ. և մտածողութեանդ առարկան նա-  
պիտի լինի. ընկերիդ էլ պիտի սիրես այնպէս՝ ինչպէս  
քեզ ես սիրում։

Ասաց նորան Յիսուս. պատասխանդ ուղիդ էր. գնա,  
այդպէս ալս և կապրես՝<sup>1)</sup>:

Նա կամենալով իրեն արդարացնել՝ հարցնում է—  
ո՞ւ է իմ ընկերը<sup>2)</sup>:

Յիսուս ասաց հետեւեալ առակը, իբրև պատասխան  
նորա հարցին:

—Մի մարդ Երուսաղէմից իջնում էր Երիքով. ճա-  
նապարհին աւազալների ձեռքն ընկաւ, որոնք մերկաց-  
րին նրան, վիրաւորեցին, թողին կիսամահ և գնացին։  
Քահանայի մէկը այդ միջոցին իջնում էր միենոյն ճա-  
նապարհ. տեսաւ՝ զանց արեց—ուշադրութիւն շգարձ-

<sup>1)</sup> Բացատրել—ապրել բառը. հոգմոր կեանքով ապրելով՝  
բաւիտենական կեանքը ժառանգել.

<sup>2)</sup> Բացատրել—ընկեր բառը. հրէաները ընկեր ասելով  
իրենց ազգն էին համականում. օտարներին—ազգով և կրօնով՝  
ընկեր չէին համարում. Փորձում էր Յիսուսին—ուղելով իմա-  
նալ՝ թէ Յիսուս սիրում է իւր ազգը. որովհետև գիտէր—թէ  
Յիսուս օտարազգիներին էլ է օգնում—բժշկութիւններով, բա-  
րեգործութիւններով, հրաշքներով, .. և այլն.

քեց. Ղետացի<sup>1)</sup> մէկն էլ եկաւ նոյն տեղը. տեսաւ՝  
զանց արեց<sup>2)</sup>:

Սամարացի<sup>3)</sup> մէկը ճանապարհորդելով՝ եկաւ նոյն  
տեղը և վիրաւորի մօտ. տեսնելով նորան՝ գթաշար-  
ժուեցաւ. նորա վէրքերի վերայ ձէթ ու գինի դրաւ,  
վաթաթեց, գրաստի<sup>4)</sup> վերայ դրեց. տարաւ պանդոկ<sup>5)</sup>  
և խնամեց նորան։

Միւս օրը, երբ դուրս էր գալիս այն տեղից, հա-  
նեց գրպանից երկու գահնեկան, <sup>6)</sup> տուաւ պանդոկապե-  
տին ու ասաց—խնամք տար սորան. և ինչ որ կծախ-  
ուես դորա վերայ, միւսանգամ գալստեանս կհատուցա-  
նեմ քեզ։

Արդ՝ այս երերից, ի՞նչպէս է թւում քեզ, ո՞րն է  
աւազակների ձեռքը ընկուղի մերձաւորը—ընկերը։ Օրի-  
նականը պատասխանում է—նա՝ ով որ ողորմեց նորան։  
Ասաց նորան Յիսուս—զնա և դու էլ նոյնպէս արա<sup>7)</sup>։

<sup>3)</sup> Բացատրել—Ղետական ցեղը ի՞նչ պաշտօնի համար  
էր որոշուած Մովսիսից. Խոկ Ղետացի ի՞նչ սպասաւորութիւն  
ունէր Տաճարի մէջ։

<sup>2)</sup> Բացատրել—Բահանան ու Ղետացին ի՞նչու զանց ա-  
րին, նոքա երբ կօգնէին, ինչպիսի հանգամանքներում. քիչ  
ունինք արդակի մարդիկ՝ թէ լէպէսներնիվ։

<sup>3)</sup> Բացատրել Հրէաների և Սամարացիների լարաբերու-  
թիւնը—ասելութիւն և ոչ մի լարաբերութիւն, որ գէպքից ու  
ժամանակից լետու. Խոկ արդպիսի Սամարացի շատ ունինք՝  
թէ լապտերով պիտի որոնել։

<sup>4)</sup> Բացատրել—գրաստ բառը.

<sup>5)</sup> Բացատրել պանդոկ բառը.

<sup>6)</sup> Բացատրել—թէ մի դահնեկանը քանի կոպէկ է մեր  
փողով։

<sup>7)</sup> Բացատրել կրօնական տեսակէտով—Երուսաղէմը՝ Եր-  
պինք կամ Դրախտ. Երիքովը՝ Երկիր կամ Պատուիրանազան-  
ցութիւն՝ վիրաւորը՝ մեղաւոր մարդիկ—Աղամալ ու Եւալի

ՓԱՐԻՍԵՑԻՆ և ՄԱՔՍՈՒԻՈՒՅ, Ղուկ Ժ. 9—14.

Կային մարդիկ, որոնք պարծենում էին—թէ իրենք  
են միայն արդար. իսկ ուրիշներին արհամարհում էին:

Այդպիսիների համար, Յիսուս հետեւալ առակն  
ասաց—Երկու մարդ Տաճար գնացին ազօթելու. մէկը  
փարիսեցի էր <sup>1)</sup>, միւսը մաքսաւոր:

Փարիսեցին՝ առանձնացած մի կողմ, ազօթում էր  
այսպէս—Ձիրհակալ եմ Քեզանից, Աստուած իմ՝ որ ու-  
րիշների նման յափշտակով, անիրաւ ու շուն չեմ, ոչ էլ  
այս մաքսաւորի պէս <sup>2)</sup>:

Այլ շաբաթը երկու անդամ պահը եմ պահում և

իւտագալ սերունդը, Աւազակները՝ Զարը և Մեղքը. Քահա-  
նան ու Ղետացին՝ Խորաբէլի Նահապետները, Դատաւորները,  
Թագաւորները և Մարգարէները կամ ձոճուան խօսքնվ միան-  
բարեգործները և կամ ի ցոյց մարդկան բարեգործութիւն ա-  
նողները, Սամարացին՝ Յիսուս Քրիստոս և ազնիւ ընկերը:  
Զէթ և զինին՝ Աւետարանական գարդապետութիւն. Պանդոկը՝  
Եկեղեցին, Երկու գահեկանը՝ Հին և Նոր Ռւխտի Սուրբ Գրքերը  
և Երկու փրկարար Խորհուրդներ Եկեղեցւութիւն—Մկրտութիւն,  
Սկզբնական մեղքից ազատուելու և Հաղորդութիւն Ապաշխա-  
րութեամբ՝ Ներգործական մեղքից ազատուելու. Պանդոկա-  
պետ՝ Եկեղեցւու Սրբազնագործ Պաշտօնէութիւն: Սամարացու  
միւս անդամ գալը՝ Յիսուսի Միւս անդամ Գալուստը—Դա-  
տաստան և հատուցում:

<sup>1)</sup> Բացատրել—փարիսեցների զիրքը ժողովրդի մէջ և  
նրանց կեղծաւորութիւնը, որոնել տալ մեր մէջ փարիսեցի  
կեղծաւորներ. ցոյց տալ հպարտութեան և կեղծաւորութեան  
վատ ու վնասակար կողմերը:

<sup>2)</sup> Բացատրել—փարիսեցու ազօթքի անարժանութիւնը  
—ստութիւն, արհամարհանք, հպարտութիւն ու ինքնա-  
գովութիւն. և մանաւանդ յանդինութիւն, որ Աստուծուն  
էլ է ուղում խարել:

բոլոր ստացուածներիցս տալիս եմ տասանորդ <sup>1)</sup>:

Իսկ մաքսաւորը հեռու նորանից՝ կանգնել էր  
դլուխը դէպի ցած խոնարհած, չէր համարձակում աշ-  
քերը երկինք բարձրացնել. կուրծքին խփում էր ու ա-  
սում, «Աստուած. քաւեա զիս՝ զմեղաւորս». Աստուած.  
քաւիր մեղաւորիս շատ մեղքերը. ես մեղաւոր եմ Քո  
առաջ:

Ասում եմ ձեզ—սա արդարացած իջաւ իւր տունը՝  
քան թէ նա. որովհետեւ նա՝ որ իւր անձը ինքը կուզէ  
բարձրացնել և ոչ Աստուած՝ կիսոնարհուի, կընկնի. իսկ  
ով իրեն կիսոնարհեցնէ՝ նա կրարձրանայ <sup>2)</sup>:

22. ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՒՆ. Ղուկ. Ժ. 11—32

Մաքսաւորներն ու մեղաւորները սիրով լսում էին  
Յիսուսի վարդապետութիւնը—ուսուցմունքները, քարո-  
զութիւնները:

Իսկ փարիսեցներն ու դպիրները—կարգացողնե-  
րը՝ տրտնջում էին—թէ ինչու նա մեղաւորներին է ըն-  
դունում, նրանց հետ է ուտում:

Յիսուս՝ ուզելով ցոյց տալ—թէ ինքը մեղաւորնե-  
րի համար է եկել և ոչ նրանց նման սուտ, կեղծ ար-  
դարների՝ ասաց երկու առակ—մէկը՝ մի կորած ոչխարի՝  
և միւսը՝ կորած փողերի մասին. ուզելով ցոյց տալ—որ  
եթէ շատ բանից մի բան է կորչում. կորցնողը նրան է  
որոնում, որ գտնէ, չկրցրածները թողնում է. և երբ

<sup>1)</sup> Բացատրել—տասանորդը. որ ընդունուած արմատնե-  
րից, բուխերից, զոհի կենգանիներից եալին տալիս էին Տա-  
ճարին. Ղետացիները տասն և մէկ տոհմերի տուած տասա-  
նորդով էին ապրում:

<sup>2)</sup> Բացատրել—հպարտութեան վնասը և խոնարհութեան  
օպուտը օրինակներով:

կորցրածը գտնում է՝ ուրախանում է. սրանով հասկացնում էր նրան՝ ցուզելով ասել—թէ մաքսաւորներն ու մեղաւորները կորած մարդիկ են, ձեր ասելով, իսկ դուք արդարներ էք. ուրեմն ինչ կարիք կայ ձեզ մօտենալունրանց է հարկաւոր մօտենալ, նրանց սովորցնել, բարողել ուզիդ ճանապարհը, արդարութիւնը. դուք՝ և՛ արդար էք, և ամեն բան գիտէք. իսկ նրանք խեղճերը՝ մեղաւոր են, ուզում են ինձանից բան սովորել, օգուտքաղել, որ արդարանան. վատ բան չեն ուզում նրանք, ինչու էք տրտնջում ինձանից: <sup>1)</sup>:

Եւ միևնոյն ժամանակ ուզելով ցոյց տալ—թէ որբան էլ մարդ մեղք ունենայ՝ եթէ ապաշխարէ ու սըրտանց զղջայ իւր մեղերը՝ մարդկանց չայրը—Աստուած՝ կներէ նրանց և կընդունէ իւր սիրով լի սրտով իւր լայն գրկի մէջ՝ ասաց հետեւեալ առակը—Մի մարդ ունէր երկու որդի: Կրտսեր—փոքր որդին ասաց հօրը—չայրը կարողութիւնից ինձ հասանելի մասը տուր ինձ <sup>2)</sup>: Հայրը բաժանեց երկու որդւոց մէջ իւր կարողութիւնը:

Մի քանի օրից յետոյ՝ կրտսեր որդին հետն առնելով բոլով իւր ունեցածները՝ հեռու աշխարհ գնաց <sup>3)</sup>: Այնտեղ անառակ, անկարգ կեանք վարելով՝ վատնեց—փշացրեց, ծախսեց կերաւ բոլոր իւր ունեցածը:

<sup>1)</sup> Այս մասը իրեն բացատրութիւն իմ դրել այս աեղ եռպէս զի կապ լինի աւանդելի առակի հետ. կարելի է իրեղութաս չպահանջել սահներից:

<sup>2)</sup> Բացատրել—թէ հալրը կկտտարէր որդու ցանկութիւնը. և ինչու. Առհասարակ այն աեղերը, որ պիտի գտնել քըննելով՝ պատմելուց առաջ պիտի հասկացնել որ սահները իրենք փորձեն գտնել. եթէ չգտնեն՝ ուսուցչի դեկավարութիւնըն է հարկաւոր.

<sup>3)</sup> Բացատրել—ինչու հեռու աշխարհ. ինչու հօր տանը չմնաց. հալրը ինչ կմտածէր:

Երբ ոչինչ չունէր այլով՝ սով ընկաւ այն աշխարհում. և ինքը սկսաւ չրաւորիլ—աղքատանալ <sup>1)</sup>: Քաղաքացիներից մէկի մօտ ծառայ մտաւ և նորա խոզերն էր արածեցնում: Սաստիկ քաղցածութիւնից ստիպուած՝ խոզերի կերածիցն էր ուզում կշտանալ. բայց այն էլ չէին տտիս նորան <sup>2)</sup>:

Մտածել սկսաւ ինքն իրեն ու ասել—քանի քանի վարձկան ծառաներ կուշտ ուառում են հօրս տանը և ես այստեղ սովամահ կորչում եմ: Վերկենամ, զնամ հօրս մօտ և կասեմ—չայր. ես մեղաւոր եմ երկնքի և քո առաջ: Այլիս արժանի չեմ քո որդին կոչուելու, ընդունիր ինձ՝ իրեն քո վարձկան ծառաներից մէկը: Վերկացաւ եկաւ <sup>3)</sup>:

Դեռ հեռուից հօր աշքերը ճանաչեցին որդուն. տեսաւ որդուն, հասկացաւ նորա վերապարձի պատճառը, զթաշարժուեցաւ. ինքն էլ առաջ զնաց դէպի որդին, և երբ մօտեցաւ որդուն՝ զրկեց նորան, պարանոցովը փաթաթուեցաւ, համբուրեց նորան <sup>4)</sup>:

Որդին ասաց հօրը—չայր. ես մեղաւոր եմ երկնքի և քո առաջ: Այլ ևս արժանի չեմ քո որդին կոչուելու: Հայրն ասաց իւր ծառաներին—շուտով հանեցէք

<sup>1)</sup> Հարց տալ—զբանից լետոյ՝ նա ինչ կանէր.

<sup>2)</sup> Բացատրել—թէ վերջին լուսահատ ճգնաժամին մարդիկ ինչ են մտածում. նա ինչ կմտածէր. ինչ երեսով. ամօթչէր. բայց լաւ մտածեց՝ թէ վատ:

<sup>3)</sup> Հարցնել սահներին—անառակ որդին որ զար՝ հալրը կընդունէր աղդպիսի մի փշացած որդուն, եթէ ընդունէր՝ ինչու, ինչն էր ստիպում. որդու երեսովը չէր տալ նորա արածը. ինչու:

<sup>4)</sup> Հարցնել—հօր վարմունքը որդու մտքի մէջ ինչ կըծնեցնէր. սա է լաւ՝ թէ եթէ չընդունէր կամ երեսովը տար ու լանդիմանէր, ինչու:

գորա նախկին<sup>1)</sup>՝ պատմուճանը — հագուստը և հազցը էք պրան, տուչք ձեռքի մատանին և ոտքի կօշիկները՝ որ հայնէ, Բերէք պարարակ — շաղ եզր, մորթեցէք. ուտենք և ուրախանանք, որովհետեւ այս իմ որդին մեռած էր՝ ապրեցաւ. կորած էր՝ գտնուեցաւ:

Եւ սկսան ուրախանալ:

Երէց-Մեծ որդին, որ աղարակումը աշխատանքի էր ամբողջ օրը՝ տուն վերադառնալիս՝ լսում է երգեցի ու պարերի ձայները. Եւ կանչելով ծառաներից մէկին՝ հարցնում է ուրախութեան պատճառը:

Ծառան պատասխանում է — Եղբայրդ եկել է. հայրդ պարարակ եղը մորթել տուեց նորա համար. որովհետեւ ողջ գտաւ նորան<sup>2)</sup>:

Բարկացաւ երէց — մեծ որդին և չէր կամենում ներս մտնել<sup>3)</sup>:

Հայրը գուրս եկաւ և աղաչում էր նորան:

Պատասխանում է երէց որդին — քանի տարիներ են՝ որ ես քեզ ծառայում եմ. երբէք հրամաններիդ ու պատուիրաններիդ դէմ չեմ զնացել. մի նու անգամ չես տուել ինձ, որ բարեկամներիս հետ ես էլ ուրախանայի: Եւ երբ եկել է այժմ այդ քո որդին, որ իւր ամբողջ

<sup>1)</sup> Բացատրել — որ նախկին պատմուճանը՝ նախկին անմեռութիւնն էր, անմող վիճակն էր, որից հեռացաւ և ալժմ նորից այն անմողութիւնն է ժառանգում:

<sup>2)</sup> Հարցնել — հաճելի կլնէր — դուք կզար մեծ որդուն ամբ լուրը. կուրախանամբ թէ ոչ:

<sup>3)</sup> Հարցնել — ինչժամ չէր կամենում ներս մտնել. լաւ էր անում. գովելի էր նորա վարմուճը. միթէ պէտք է բարկանալ նեղանակ տիսրել՝ երբ կորածը գտնուում է, մտռածը՝ ապրում է. կան ալդպիսի մարդիկ մեր մէջ. շատ են թէ քիչ. լաւ է,

ձեանքը պոռնիկների հետ է մաշել՝ պարարակ եղն ես մորթում դորա համար<sup>1)</sup>:

Պատասխանում է նորան հայրը և ասում — Որդեակ. ուս միշտ ինձ հետ ես. և այն ամենը ինչ որ ունիմ քոնն է: Բայց հարկաւոր էր ուրախանալ և մխիթարուել — որ քո այս եղբայրը մեռած էր՝ կենդանացաւ, ապրեց. կորած էր՝ գտնուեցաւ<sup>2)</sup>:

### 23. ՀԱՐՈՒՏՍԸ ԵՒ ԱՂՔԱԾ ՂԱԶԱՐՈՍԸ. Դուկ. ԺԶ. 19—31.

Են հարուստները, որոնք աղքատներին չեն օգնում և իրենք են միայն զուարճանում իրենց հարստութիւնով՝ այս առակի մէջ յիշուած հարստի վախճանն պիտի ունենան, որ ասաց Յիսուս — Մի միծատուն հարուստիւնից:

<sup>1)</sup> Իրաւոնք ունէր. չէ որ իւր պարտքն է կատարել միան. ուրիշ ոչինչ. միթէ պարտք կատարելը գովասանքի ու վարձատրութեան է կարու. ուրիշ բան է՝ եթէ պարտքից զատ, ուրիշ լաւ բան էլ է արել Եւ վերջապէս ովկ կարող է արգելել հօր սէրը, բռնանալ հօր սիրու վերալ դէպի որդին. ովկ կարող է արգելել հօրը մաս տալ որդուն իւր կարողութիւնից:

<sup>2)</sup> Բացատրել կրօնական տեսակէտով՝ ամբողջ առակը — Հայրը՝ Աստուած. Անառակ որդին՝ մնդաւոր մարդկութիւնը. Հայրական տանից հեռանալը՝ դրախտում մնդանչելը՝ կամովին և դուրս գալը. Անառակական կեանքը՝ մարդկանց գործած ամենատեսակ մեղքերը. Զղջումը՝ մարդկանց խպաշխարութիւնը և կամենալը փրկուել. Հայրական գիրկը և սիրալիր ընդունելութիւնը՝ Աստուած պատրաստ է միշտ ապաշխարող մեղաւորին գրկաբաց ընդունել. Եզը՝ Յիսուս և իւր պատարագը խայի վերալ. Երեց որդին՝ Հրեշտակները.

մարդ կար. հազնում էր բեհեղ և ծիրանի շորեր<sup>1)</sup> և միշտ ուրախանում էր, առաս ու ճոխ էր նորա ճաշի սեղանը—սփռոցը: Նորա գրան մօտ վիրաւոր—վէրքերով պատած մի աղքատ էր ընկած Ղազարոս անունով. մեծատան սեղանից ընկած փշրանքներով էր ուզում կշանալ. չներն էլ գալիս էին ու վէրքերը լիզում:

Մեռաւ աղքատը. հրեշտակները տարան Արքահամի գոգը<sup>2)</sup>:

Մեռաւ և մեծատոնը և թաղուեցաւ<sup>3)</sup>: Դժոխքի տանջանքի մէջ աշքերը վեր է բարձրացնում. հեռուից տեսնում է Արքահամին. և Ղազարոսին՝ որ նորա գոգումը հանգստանում է: Զայն է տալիս և ասում—հայր Արքահամ, ողորմիր ինձ—ուղարկիր Ղազարոսին որ մատի ծայրը ջրի մէջ խրէ և լեզուս թաց անէ. որովհետև ծարաւ եմ և այսուեղի շորից այրում եմ<sup>4)</sup>:

Ասում է նորան Արքահամը. նրգեակ, յիշիր որ դռւ այն կեանքում վայելեցիր բոլոր բո բարիքները. Ղազարոսն էլ շարշարանք կրեց. արդ՝ թող ուս այսուեղի ուրա-

<sup>1)</sup> Բացատրել բեհեղ և ծիրանի խօսքերը—բեհեղ՝ քաթան կամ կտաւ. բայց ազնիւ տեսակը, բարակ տեսակը—ծիրանի՝ ծիրանի գոյն ունեցող կտոր, կարմիր ու գեղին գոյները միախառնուած:

<sup>2)</sup> Բացատրել—թէ թնչպէս են թաղում աղքատին և ինչու այնպէս, իբենց՝ սաներին հարցնել: Բացատրել Արքահամու գողը:

<sup>3)</sup> Բացատրել—թէ թնչպէս են թաղում հարուստին և ինչու. դարձեալ սաներին հարցնել. հասկացնել վաս կողմերը թէ հոգնորականների և թէ աշխարհականների վարմունքի. հետևացնել—որ հարստի ու աղքատի թաղումը միատեսակ պիտի լինի, առելորդ ծախքերի մասին խօսել սաներին:

<sup>4)</sup> Հարցնել սաներին—թնչ կամատասկանէր Արքահամը: Պատասխանները չուղղել. ալ միայն լսել. և ասել—հապատեսներ աղպէս է, և շարունակել դասը:

խանայ, իսկ դու այդտեղ պապակուիր: Եւ բացի սրանից՝ ձեր մէջ և մեր մէջ մեծ վիճ—փոս կայ. եթէ կամենան այստեղից ձեր կողմն անցնել՝ չեն կարող. ոչ էլ այդտեղից՝ մեր կողմը<sup>1)</sup>:

Գոնէ այս խնդիրս կատարիր—աղաչում եմ քեզ հայր. ուղարկիր Ղազարոսին իմ հօր տունը: Այստեղ հինգ եղբայր ունիմ, թող նոցա վկայութիւն տայ այս տեղի մասին, որպէս զի նոքա էլ չգան այս տանջանքի տեղը:

Պատասխանում է Արքահամը—նոքա այնտեղ Մովսէս մարդարէներ ունեն. թող նոցա լսեն:

Ասում է հարուստը—Ո՛չ. հայր Արքահամ, եթէ մեռելներից մէկը երթայ նրանց մօտ՝ նրանք կհաւատան:

Ասում է Արքահամը—Եթէ Մովսիսին ու մարդարէներին շլեն՝ մեռելներից մէկը որ գնայ՝ նորան էլ չեն լի, չեն հաւատայ<sup>2)</sup>:

<sup>1)</sup> Բացատրել—թէ թնչ արգելք կատ մահուանից լետոյ արդարանալուն կամ դժոխքից՝ դրախտ տեղափոխուելուն կամ ընդհակառակը: Հասկացնել սաներին—որ զղումը, ապաշխառութիւնը, բարեգործութիւնը կեանքի մէջ պիտի գործուեն և ոչ մահուանից լետոյ. կեանքի մէջ կարող հնք վաստակել կամ շահել ապագայ խղճի անդորրութիւնը, հանգիստը կամ որ նորն է արքակութիւնը... և ալին. ընդհարձակ բացատրել: Հարցնել սաներին—թնչ կմածէր հարուստը Արքահամի պատասխանից լետոյ:

<sup>2)</sup> Բացատրել—թէ հարուստը ուղում էր այն՝ թնչ որ ուղում են ալսօր և շատ շատերը. ալսինքն հրաշք, մի տարօրինակ ու գերբնական փաստ կամ ապացուց. հարստի աստծի նման չէ և այն՝ որ մեր ժամանակում զրեթէ գործածական խօսք է դարձել շատերի համար թէ—ոչ զնաց այնտեղ և իսթբար բերեց այնտեղից՝ թէ թնչ կալ այնտեղ. պարզ է ուրեմն—որ մեր օրերումն էլ տեսնում ենք մարդիկ՝ որ մեռած Ղազարոսներ են ուղում իրենց վկացելու, որ հաւատան. հապանը է հաւատով սուրբ մատեանը—Աւետարանը... և ալին. Օրինակներից մէկն էլ կարող է լինել մեր ապահովաւոր զրամատուրդ. Գ. Սունդուկեանի «Օսկան Պետրով վիշը գժուխտումը»: Միայն այն մասը՝ որ կազ ունի դասի հետ և ներելի ու միանդամալն ըմբռնելի է սաներին:

24. ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԱԾ ԲԺՇԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Յիսուս թէն եկել էր հոգեորը բարձրացնելու, սրտերի մէջ թագաւորելու՝ բայց մարմնաւոր ցաւերին էլ հասաւ, այդ ցաւերը վերցրեց. օրինակ տալով մեզ՝ որ միենոյն բարիքը և մենք անենք մեր խեղճ ընկերներին:

Նա կոյրերի աչքը բացեց, որ տեսնեն, կաղերին մանդալու կարողութիւն տուեց և բոլորովին բժշկեց՝ խուլ ու համբերին բժշկեց—նոքա լսում էին և խօսում. բորոտներին սրբեց—նոքա իրաւոնք ունեին ժողովրդի մէջ մտնելու. անդամալոյցներին բժշկեց—նոքա ցաւչին զգում և ազատ նստում, վերկենում ու ման էին դալի. այսահարներին—դիւահարներին բժշկեց—հանելով նրանց միջից չար ոգիները<sup>1)</sup>. և այս ամենը անում

<sup>1)</sup> Բացատրել հիւանդութիւնների դժբաղդ կողմերը. օրինակ—կոլրը ինչից է, զրկուած. ինչ չէ կարող տեսնել. թեթև է թէ ծանր արդ դժբաղդութիւնը. կոլր ծնուածի դժբաղդութիւնն է ծանր՝ թէ լեռու կուրացածի. ինչու.

Կազմ. անդամալուծը Բնչ դժբաղդը՝ թէ կոլրերը. Խուլ ու համրը ինչից են զրկուած. հեշտ է չլսել և չփոսել, չլսել սիրելու ձախը, չարտապատել ծնողի և որդուց սիրու զգացմունքները—թեթև դժբաղդութիւն է, առ է ծանր՝ թէ կոլրերի վիճակը. Բորոտների դժբաղդութունը ինչումն էր—դուրս էին անում քաղաքներից, ժողովրդի միջից, «պիղծ, պիղծ» էին զոռում. թաշկինակով կամ հանդերձի քղանցքով քիթն ու բերանը ծածկում էին որ բորոտի հոտը չառնեն. քաղաքից զուրս էին տանում, ախտեղ էին պահում նրանց, ախտեղ էլ կերակրում էին, բայց հեռուից. չէին մօտենում. ալսպէս մնում էր՝ մինչև հիւանդութեան անցնելը. որը ինքն իրան էր անցնում և ոչ բժշկների օգնութեամբ:

Համեմատել աւս բոլոր տկարութիւնները իրար հետ. և հետեացնել—թէ իրաքանչիւրն էլ իւր չափակ դժբաղդութիւն է մարդու համար:

Էր սիրով, կարեկցութեամբ, առանց փառք, գովասանք ու վարձատրութիւն սպասելու ոչ ոքից. միայն այն էր ուղում—որ նրանք հաւատան ու փառք տան Աստուծուն, ճանաշեն նորան և նորա ուղարկած Միածին Որդուն՝ որ ինքն էր:

25. ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ. Յովհ. ԺԱ 1).

Քեթանիայում կենում էր Ղազարոս անունով մի մարդ իւր Մարիամ և Մարթայ քոյրերի հեա: Բարեպաշտ և հաւատաւոր ընտանիք էր այդ ընտանիքը: Յիսուս սիրում էր այդ տունը և Ղազարոսին բարեկամ էր անուանում:

Մի անգամ Ղազարոսը հիւանդացաւ. այդ ժամանակ Յիսուս Երուսաղէմումն էր. Մեռաւ Ղազարոսը. քոյրերը մարդ ուղարկեցին Յիսուսի մօտ յայտնելու թէ Ղազարոսը մեռաւ. Եկաւ Յիսուս Երուսաղէմից և Մարիամի, Մարթայի, սպաւորների ու ժողովրդի հետ զնաց գերեզմանը. ուր չորս օր առաջ դրել էին Ղազարոսի մարմինը:

Լաց եզաւ, աղօթք արեց և հրամայեց քարը մէկ կողմ՝ ձգել: Այն ժամանակ ասաց Յիսուս—Ղազարէ. վերկաց տեկիցդ. զուրս արի: Վեր կացաւ մեռեալը կապկած ոտքերով, բարակ կտաւով փաթաթած ձեռքերով, կտաւի թաշկինակով պատած երեսով. ասաց Յիսուս—արձակեցէր զորա կապերն ու թողեք որ գնայ:

Այն չըլաները, որոնք եկել էին Մարիամին ու Մարթային միիթապելու՝ հաւատացին Յիսուսին:

Ճատերն էլ զնացին փարիսեցիների մօտ և պատմեցին Յիսուսի արած այս հրաշքը:

<sup>1)</sup> Քաղուածօրէն անցնել և ոչ ամբողջովին:

Քահանայապետներն ու փարիսեցիները ժողով արին,  
ատեան կազմեցին, խորհուրդ արին—թէ ինչ անեն. եթէ  
այդպէս թողնեն՝ ամենքը նորան կհաւատան և չոռվմա-  
յեցիք կգան և կտիրեն իրենց: Եւ վճռեցին որ Յիսու-  
սին սպանեն՝<sup>1)</sup>:

26. ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՂԹ ԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ԵՐՍԻՍՍՎԼԵՄ ԿԱՄ ԾԱՂ-  
ԿԱԶԱՐԴԻ՝<sup>2)</sup>, Մատթ. իլ. 1—10.

Երբ Յիսուս իւր աշակերտների հետ մօտեցաւ Երու-  
սալիմին՝ եկաւ 2իթենեաց լերան մօտ եղած թեթրագէ-  
գիւղը. այն ժամանակ աշակերտներից երկուսին ուղար-  
կեց ասելով—կերժաք ձեր հանդէպը եղած գիւղը, այն-  
տեղ կգտնէք մի կապած էշ և աւանակը մօտին. կապը  
կը քանդէք և կրելէք ինձ մօտ: Եթէ մէկը ասէ ձեզ  
—ինչնւ էք արձակում. կասէք—իրենց տիրոջը հարկա-  
տոր է. և իսկոյն կուղարկէ:

Աշակերտները գնացին և այնպէս արին՝ ինչպէս  
պատուիրեց Յիսուս. բերեցին էշը և աւանակը. իրենց  
հանդերձները փուցին նրանց վերայ և Յիսուս նստեց  
և գնացին: Ժողովրդից շատերը իրենց հանդերձները  
փռում տարածում էին ճանապարհի վերայ, որտեղից Յի-  
սուսն էր անցնելու. շատերն էլ ծառերից ոստեր էին  
քաղում և ճանապարհի վերայ փռում. և առաջից ու յե-  
տելից գնացող ժողովուրդը աղաղակում էր ու ասում—

<sup>1)</sup> Ղաղարոսի լարութեան լիշտակը կատարում է մեր  
եկեղեցին Ծաղկազարդ կիւրակէի նախընթաց շաբաթ օրը:  
Եթէ ճնարաւոր կգտնէ ուսուցիչը և բարձր չէ սաների ըմբռո-  
նողական կարողութիւնից՝ կարող է բացատրել—թէ Ղաղա-  
րոսի լարութիւնը զրաւական է մեր բոլորիս վերջին լարու-  
թեան:

<sup>2)</sup> Բացատրել—Ծաղկազարդ բառը. Ծաղկազարդ Արմա-  
ւենեաց տօն, տես Ձեռնարկ, Ա. տարի. սուն պատմութիւն:

Յընութիւն լինի Դաւթի որդուն. Յընեալ է Տիրոջ ա-  
նունով եկողը. Յընութիւն Բարձրեալ Աստուծուն:

Քրիստոսի յաղթական մուտքը Երուսաղէմ մեր Եկե-  
ղեցին տօնում է ծաղկազարդ կիւրակէին: Երեկոյեան  
ժամերգութիւնից յետոյ կատարում է Դուռն բացէք-ի  
խորհրդաւոր սրբազն արարողութիւնը<sup>1)</sup>:

Ի՞ր. ԿԱՆՈՆ ԾԱՂԿԱԶԱՐԴԿԻՒՄԿԻՒՐԱԿԻՒՆ.

Յորժամ եկն Յիսուս յերուսաղէմ ի քաղաքն. ընդ  
առաջ ելին ծերքն ոստովք, ձիթենեօք. և զԱստու-  
ծորդին փառաւորէին:

Ի լեռնէ ձիթենեաց տարածանէին մանկունքն  
զհանգերձս իւրեանց. և ոստս ի ծառոց բերեալ մա-  
տուցանէին Աստուծորդոյն սուրբ թագաւորին:

Ոստովք և տերեեալ ձիթենեօք Եբրայեցւոց ման-  
կունքն օրհնէին. ուրախ լեռ Երուսաղէմ քաղաք. և  
ցնծա Սիօն, Մայք Եկեղեցի:

Երբ Յիսուս եկաւ Երուսաղէմ. ընդառաջ—Նորա  
առաջ դնացին ծերերը ոստերով և ձիթենիներով<sup>2)</sup>. և  
Աստուծորդուն փառաւորում էին:

Ձիթենեաց սարից սկսած՝ մանուկները փռում—  
տարածում էին իրենց հանդերձները—շորերը, ծառե-

<sup>1)</sup> Բացատրել—Դուռն բացէքի խորհուրդը—Նախածնող-  
ների արտաքսումը դրախտից. և Յիսուսի փրկազործութեամբ՝  
նորից նոյն դրախտը մտնելը: Խոկ միւս մանրամասնութիւն-  
ների բացատրութեան համար՝ օգտուել Ա. տարուայ Զեռ-  
նարկիցս:

<sup>2)</sup> Բացատրել Ձիթենի բառը. և ինչու մենք ալս օրը  
ուռ ենք բաժանում ժողովրդին ձիթենու և արմաւենու ոս-  
տերի փոխանակ. տես Ձեռնարկս ա. տարի:

ըից ոստեր էին քաղում և բերում տալիս էին Աստուած-որդի սուրբ Թագաւորին:

Երբայեցի մանուկները—երեխաները՝ ոստերով և տերեազարդ ձիթենիներով օրհնում էին. ուրախացիլ երուսաղէմ. և ցնծա դռւ Սիօն՝ Մայր Եկեղեցի:

### ԲԱՂԱՔԱԿԵՐԸՑ ԶԱՏԻԿԸ.

27. ՅՈՒԴԱՅԻ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ, ՈՉՆԱԼՈՒՅ, ԽՈՐՀԴԱՅԻՈՐ ԸՆԹԲԻՑ և ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՅՑՈՒԹԵԱՆ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ, Մատթ. Իջ. 3—5. 14—35. Յով. ԺԳ. 4—15.

Քահանայապետները, դպիրները և ժողովրդեան ծերերը ժողովեցան Կայիշավայ քահանայապետի սրահը և խորհուրդ արին—թէ ինչպէս նենգութեամբ բռնեն Յիսուսին և սպանեն: Բայց ասում էին նորա, այս տօնին շանենք, որ ժողովրդի մէջ խռովութիւն չընկնի<sup>1)</sup>:

Այն ժամանակ Յուղա Խոկարիովտացին, որ Յիսուսի տաններկու աշակերտներից մէկն էր, վնաց քահանայապետների մօտ և ասաց—ինչ կ'կամենաք ինձ տալ՝ որ ես նրան մատնեմ ձեր ձեռքը. նորա երեսուն արծաթ<sup>2)</sup> կշռեցին նորան տալու: Այն օրուանից յարմար ժամանակ էր որսնում որ մատնէ նորան նոցա ձեռքը<sup>3)</sup>:

<sup>1)</sup> Քացարել սաներին—թէ ինչ էր ժողովրդեան ծերերի, իշխանների, քահանապետների, փարիսեցիների երկրողը, որ տօնի օրերին չէին ուզում բռնել Յիսուսին. Հասկացնել սաներին—Յիսուսի մեծ ժողովրդականութիւնը, բռլոր ժողովուրդը նորան սիրում էր. աղմուկ ու խռովութիւն կը լինէր, եթէ օր ցերեկով Յիսուսին բռնէին . . . ևապն:

<sup>2)</sup> Էն Զեռնարկու առ տարի մինույն պատմութեան մէջ:

<sup>3)</sup> Հարցնել սաներին—կմն և ալս օր մեր մէջ դրամով—ժողով հոգի ծախողներ—մատնիչներ, զրարարողներ, լափշա-

Բաղարջակերաց առաջին օրն էր, որ աշակերտները մօտեցան Յիսուսին և ասում են—մրտել ես կամենում, որ պատրաստենք քեզ համար Զատիկը: Յիսուս պատասխանում է—Կերթաք քաղաք և այս ինչ անուն մարդուն կատէր—ուսուցիչն ասում է՝ իմ ժամանակը մօտացել է. քեզ մօտ պիտի կատարեմ Զատիկը աշակերտներիս հետ միասին: Աշակերտները Յիսուսի պատուէրին համաձայն արին և պատրաստեցին Զատիկը:

Եւ երբ երեկոյ եղաւ՝ տաններկու աշակերտներին հետ նստել էր: Եւ երբ ուտում էին նորա՝ ասաց նոցաՅիսուս—ամեն ասեմ ձեզ—ճշմարիտ եմ ասում ձեզ—որ ձեզանից մէկը ինձ պիտի մատնէ: Աշակերտները տրտմեցան. և նոցանից խրաքանչիւրը առանձին առանձին սկսան հարցնել և ասել—միթէ ես եմ Տէր: Յիսուս պատասխանում է նոցա և ասում— ով ձեզանից ինձ հետ միասին ձեռքը թաթխեց սկաւառակի—ամանի մէջ՝ նա պիտի մատնէ ինձ: Մարդոյ Որդին կերթայ, ինչպէս և զրուած է նորա համար. բայց վայ այն մտրդուն՝ որոյ ձեռքով պիտի մատնուի Մարդոյ Որդին. լաւ էր որ ամեններին էլ ծնուած չլինէր այն մարդը<sup>1)</sup>: Պատասխան տուեց Յուղան, որ մատնելու էր նորան և ասաց—միթէ ես եմ մատնողը, Տէր: Ասաց Յիսուս—զու ես ասում:

Այդ ասելուց յետոյ՝ վեր է կենում ընթրկիցից, շո-

կողներ, անուն—պատիւ—վարք մրուտողներ. և բացատրել ակղակիների հոգւով սնանկութիւնը, ցածութիւնը, ստորութիւնը. միայն մանկական մտքին և ըմբոնողութեանը հասկանալի խօսքերով.

<sup>1)</sup> Քացարել—որ Յիսուսի ալս սրտաշարժ խօսքերը մի տեսակ զղջան հրաւէր էր Յուղաի համար. բայց Յուղան մտածում էր—ինչ կուղես ասա, Ուսուցիչ. Երեսուն արծաթը մոռանալու չեմ.

թերը վայր է դնում. առնում է ղենջակը—մէջքը կապելու շոր և կապում է մէջքին: Եւ յետոյ ջուրն առնելով՝ ածում է կօնքի-լազանի մէջ. և լուանում է աշակերտների ստքերը. և մէջքին կապած ղենջակովը սրբում էր լուացած ստքերը: Գալիս է Սիմոն Պետրոսի մօտ. սա ասում է Յիսուսին—Տէր. գմտ իմ ոտս պիտի լուանաս<sup>1)</sup>: Պատասխանում է Յիսուս և ասում—ինչ որ հս այժմ անում եմ՝ դու չգիտես. բայց յետոյ կհասկանաս: Ասում է Պետրոսը—յաւիտեան չեմ թողնի որ Դու իմ ոտս լուանաս: Պատասխանում է Յիսուս—Եթէ չլուանամ՝ ինձ հետ մաս ունենալ չես կարող: Ասում է Պետրոսը—Տէր. միայն ոտքերս. լուած և ձեռքերս ու գլուխս: Ասում է Յիսուս—Լուացածին ուրիշ բան պէտք չէ, բայց միայն ոտքեր լուանալը. որովհետեւ լուացուածը բոլորովին սուրբ է. դուք էլ սուրբ էք. բայց ոչ ամենքդ: Որովհետեւ գիտէր նորան՝ ով իրան մատնելու էք. դրա համար էլ ասաց—բայց ոչ ամենքդ սուրբ էք<sup>2)</sup>:

Եւ երբ լուաց աշակերտների ոտքերը՝ առաւ իւր հանդերձները և դարձեալ նստաւ. և ասաց նրանց գիտէք ինչ արացի ես: Դուք ինձ անուանում էք Վարդապետ և Տէր. լաւ էք անում, որովհետեւ իսկ է ձեր ասոածը և ճշմարիտ: Եւ արդ՝ եթէ ես Տէրս և Վարդապետս ձեր ոտքերը լուացի՝ հարկաւ դուք ևս պէտք է միմեանց ոտքերը լուանաք: Որովհետեւ ես ձեզ մի օրինակ ցոյց

<sup>1)</sup> Բացատրել—որ Պետրոսը ալնքան էք սիրում ու լարգում իւր ուսուցչին՝ որ խորթ թուաց նորան Յիսուսի խօսքերը, նա չէր հաւատում՝ թէ ինչ է ասում իւր Վարդապետը. Սիրու հեղեղ էք Պետրոսի սրտի մէջ դէպի Յիսուսը:

<sup>2)</sup> Ալստեղ էլ զդշման հրաւէր է կարդում Յուղալին, աշակերտներին սիրող Վարդապետը,

առուի—որ ինչպէս ես ձեզ արի՝ և դուք միմեանց նոյնպէս պիտի անէք<sup>1)</sup>:

Եւ երբ ուտում էին նորա՝ Յիսուս առաւ հացը. օրհնեց, մանրեց<sup>2)</sup> և տուեց աշակերտներին. ասելով՝ Առէք՝ կերէք այս է իմ մարմինը: Եւ առնելով բաժակը՝ գոհացաւ<sup>3)</sup>. տուեց նոցա և ասաց—Խմեցէք դորանից բոլորդ էլ: Որովհետեւ զա է իմ արիմը նոր ուխտի. որ շատերի վերայ է թափւում մեղքերի թողութեան համար:

Օրհնեցին սեղանը և գնացին բարձրացան Զիթենեաց լեառը: Այն ժամանակ ասաց Յիսուս իւր աշակերտներին—Դուք ամենքդ էլ այս գիշեր պիտի գայթակղուիք ինձանից. որովհետեւ գրուած է—Կիսիեմ հովուին և հօտի ոչխարները կցըռուին: Եւ իմ յարութիւնից յետոյ ձեզանից առաջ ես կլինեմ Պալիլիայում: Պետրոսն ասում է Յիսուսին—Եթէ ամենքն էլ գայթակղուելու լինին քեզանից՝ սակայն ես չեմ գայթակղուի:

Ասում է նորան Յիսուս—Ճշմարիտ եմ ասում քեզ՝

<sup>1)</sup> Բացատրել—խոնարհութեան օրինակ, միմեանց ծառապելու օրինակ. միմեանցից բարուականը փչացնող աղտերը լուանալու օրինակ հայլն հայլն:

<sup>2)</sup> Բացատրել սաներին—որ ինչպէս օրհնեց ու մանրեց հացը և տուաւ աշակերտներին՝ նոյնպէս և մենք օրհնելով Աստուծուն՝ պիտի մանրուենք, մաս մաս լինենք և մեր օգնութեամբ համենք մեր ընկերների կարիքներին, ինչպէս Յիսուսը հացի պէս բաշխուեցաւ ամբողջ մարդկութեանը իւր բոլոր փրկազործութեամբ: Բացատրել մանրամտուն:

<sup>3)</sup> Բացատրել—թէ բաժակը իբրև իւր ար ին տաւ ով դոհացաւ—նշանակում է—որ մեր անձնագոհութիւնը ընկերի համար՝ պիտի լինի գոհութեամբ, ուրախութեամբ և ոչ արտնշալով:

որ այս գիշեր մինչեւ հաւի խօսելը—աքաղաղի առաջին բերան կանչելը՝ դու երեք անգամ կուրանաս ինձ<sup>1)</sup>:

Սսում է պետրոս—Մեռնել իսկ եթէ հանդիպի ինձ Քեզ հետ՝ Քեզ չեմ ուրանայ, այդպէս էին ասում և միւս աշակերտները<sup>2)</sup>:

#### Ի. ՇԱՐԱԿԱՆ ՈՏՆԱԼՈՒԹԻՒՆ:

Այսօր կազմեցաւ աւագան մկրտութեան ի թու-

ղութիւն մեղաց մերոց:

Այսօր Տէրն մեր լուանայր զոտու աշակերտացն<sup>3)</sup>:

և պատուիրէր զայս՝ ասելով:

Մի ոմն ի ձենջ եղբարք. մատնելոց է զիս ի մահ:

և որոշի յաշակերտացդ:

Զայն լուեալ Պետրոսի՝ ակնարկէր առ Յովհան-

նէս. հարցանել՝ թէ ով իցէ:

<sup>1)</sup> Յիսուս հաւատացած եր Պետրոսի սիրու առատութեա-

նը. բայց ուզում էր սորվեցնել նորան—թէ պէտք չէ կամակոր-

ինքնավտառութիւն ունենալ, եթէ Պետրոս ասէր ալսպէս—

թէ որ Աստուած ինձ կզօրացնէ ուրացութեան վերջին ժամա-

ժամին՝ լուս ունիմ—որ Նորա չնորհքը, օգնութիւնը և իմ

սէրա, որ ունիմ դէպի Քեզ, չեն թողնի՝ որ ես Քեզ ուրանամ:

Այս. եթէ ալսպէս ասելու լիներ՝ չէր լսի Յիսուսից

այն խօսքերը, ինքնավտառ և անձնապասան լինելը խոհե-

մութիւն չէ. շատ և շատ անգամ հանգամանքները մեր կամ-

քից հզօր են հանդիսանում և իշխում են մեր կամքին։ Յի-

սուսի խօսքերը հրաշալի էին, որ ասաց՝ Պետրոսին, և շատ

խորհրդաւոր։

<sup>2)</sup> Սիրու զօրութիւնը որ հաստատուած էր Պետրոսի սրտի մէջ վատահութիւն էր տալիս նորան կրկնելու իւր բա-

րի ու պարզ կամակորութիւնը. նա մեղաւոր չէր. սէրն էր

խօսում նորա մէջ։

<sup>3)</sup> Լուացման բացատրութիւնը տալ սաներին նրանց

հանգանալի ձևով—իւր խոնարհութիւնը նոցա մէջ տապաւորե-

լու համար, բնակարան լինեն Սուրբ Երրորդութեան. Ոտքե-

րի Լուացման օրինակով մեղքերն նո պէտք է լուանալ. Ոտ-

Քանն, զոր անաց Յիսուս, տրտմեցոյց զիւր զա-

շակերտսն. և խոռվեցան ամենեքեան։

Այսօր մեր մեղքերի թողութեան համար մկրտու-

թեան աւագան հաստատուեցաւ։

Այսօր մեր Տէրը իւր աշակերտների ոտքերն էր

լուանում. և նոյնը միմեանց ան-

լու Պատուէրը տալուց յետոյ՝

ասում էր աշակերտներին —

մէկը, եղբայրներ, մատնելու է ինձ.

բայց նա կհեռանայ ձեր միջից.

ձեզ հետ լինել չէ կարող:

Այդ որ լսեց Պետրոսը՝ աշքով արեց Յովհաննի-

սին—որ հարցնէ՝ թէ ով է որ

իրան պիտի մատնէ:

Յիսուսի ասած այս խօսքերը խիստ տրտմեցրեց

իւր աշակերտներին. նոքա բոլո-

րըն էլ շփոթուեցան և անհան-

գիստ էին։

#### Ի. ՇԱՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ:

Բաշխէ զմարմին իւր և զարիւն՝ նոր ուխտ անուա-

նեալ. և յիշատակ կամաւոյ մահուանն

մերձեցելոցս ի նա սրբութեամբ։

Քերի լուացումը՝ իբրև լուացում թշնամու պատրանքներից—

խարեբարութիւններից. իբրև աղատութիւն Աղամակին անէծ-

քից. իբրև ճանապարհ ցոլց տւող դէպի երկինք մարդկան

քնացքին. իբրև նախահօր զարշապարների բժշկութիւն Շա-

րական։

Որ կազմեցեր սեղան խորհրդոյ. և արբուցեր  
յանմահական բաժակէն սըբոց քոց առա-  
քելոցն ի սուրբ վերնատանն:

Բաժանում է-մասնատրում է իւր Արիւնը՝ իբրև  
Նոր Ուխտ. և նորան սըբութեամբ մօ-  
տեցողներիս՝ իբրև իւր կամաւոր մա-  
հուան յիշատակ է տալիս:

Սուրբ Յաղորդութեան խորհուրդը հաստատեցիր  
և անմահական բաժակիցդ էլ Քո սուրբ  
Առաքեալներին խմացըրիր սուրբ վեր-  
նատան մէջ:

ԻԶ. ԵՐԳ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ.

Քրիստոս պատարագեալ՝ բաշխի ի միջի մերում։  
Զմարմին իւր տայ մեզ կերակուր. և սուրբ զա-  
րիւն իւր ցողէ ի մեզ։

Մատիք առ Տէր՝ և առէք՝ զլոյս։  
Ճաշակեցէք՝ և տեսէք—զի քաղցը է Տէր։

ԻԶ. ԵՐԳ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ.

Քրիստոսը պատարագուելով՝ մեր մէջ է բաժան-  
ում։

Իւր մարմինը տալիս է մեզ իբրև կերակուր. իսկ  
սուրբ Արիւնը ցօղում է մեր մէջ։

Մօտեցէք Տիրոջը և լոյս առէք նորանից։  
Ճաշակեցէք—Կերէք և կտեսնէք՝ որ Տէրը քաղցը է <sup>1)</sup>։

<sup>1)</sup> Բացատրել Պատարագութեան իբրև կրկնութիւն—Հաղորդու-  
թեան խորհուրդը—Յիսուսի չարչարանքը, խաչը և մահը լի-  
շել, խաչակից լինել իբրհն—Հաղորդուել, Միանալ իւր հետ.

28. ԳԵՐՄԵՄԱՆՍԱՆ ԱՂՅՈՔԸ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ,  
Մաթ. ԻԶ. 36—50.

Յիսուս իւր աշակերտների հետ գալիս է Գէժսեմանի-  
գիւղը, Կեղրօնի ձորի միւս կողմը. այնտեղ պարտէզ կար.  
աշակերտներին ասաց—նստեցէք այդտեղ մինչև ես կեր-  
թամ կազօթեմ: Եւ առնելով իւր հետ Պետրոսին և Զե-  
բեդիայի երկու որդւոցը՝ Յովհաննիսին և Յակոբոսին՝  
սկսաւ տրտմիլ և հոգալ: Յետոյ փոքր ինչ առաջ գնաց,  
ընկաւ երեսի վերայ և սկսաւ ալոթել. ասում էր—Հայր.  
հեռացրնւ ինձանից այս չարչարանաց բաժակը. երեք  
անգամ կրկնեց և վերջը՝ ասաց—բայց ոչ. թող կամքդ  
լինի:

Յիսուս խօսում է իւր աշակերտների հետ և ասում—  
Եկէք երթանք այստեղից. որովհետև ահա հասաւ որ  
ինձ մատնելու է: Յուղան, որ մատնելու էր Յիսուսին,  
գիտէր այն տեղը՝ ուր որ այժմ իւր Ուսուցիչն էր. որով-  
հետև Յիսուս շատ անգամ էր լինում այնտեղ իւր աշա-  
կերտների հետ:

Յուղան նշան էր տուել <sup>1)</sup> և ասել. որի հետ ես  
կհամբուրուեմ՝ նա է. նորան բռնեցէք: Եւ ահա նա ա-  
ռաջնորդում էր ամբոխին, որոնք սրերով, բրերով—հաստ

ինչպէս Խնքը հացի պէս բաժանուեցաւ ամենքի մէջ իւր գոր-  
ծերով, խօսքերով ու կեանքով՝ այն ժմանակ էլ մենք պի-  
տի հասնենք թշուառներին և մեր օգնութեանը դիմողներին.  
մենք էլ պիտի բաժանուենք, մասնատրուենք մեր ընկերների  
մէջ, միայն յօժարութեամբ, սիրով—հաց բեկեալ, օրհնութիւն,  
գոհութիւն:

<sup>1)</sup> Բացատրել թէ ինչու էր նշան տուել: Յիսուսի և ա-  
շակերտների հանդելները միատեսակ էին գժուար էր որոշել  
նոցա իրարից և ակն՝ մութ զիշերին: Տես Չեռնարկա. ա-  
տարի:

գաւազաններով, ջահերով, լապտերներով, <sup>1)</sup> զինւորներով և զէնքերով եկան հասան այնտեղ՝ ուր Յիսուսն էր աշակերտների հետ:

Ինչպէս նշան էր տուել՝ այնպէս արեց Յուղան— մօտեցաւ Յիսուսին. և ողջ լեր վարդապետ—բարձ՛ քեզ ուսուցիչ, ասելով համբուրեց նորան. Յիսուս նկատեց նորան - Յուղա. համբուրելով ես մատնում Մարդոյ Որդուն:

Այն ժամանակ զինւորների գունդը, հազարապետը <sup>2)</sup> և Քահանայապետների ու փարիսեցիների ծառաները բռնեցին Յիսուսին, կապեցին և տարան: Սշակերտները, այս որ տեսան, բոլորն էլ փախան <sup>3)</sup>:

#### ԻԵ. ՇԱՐԱԿԱՆ ԳԵԹՍԵՄԱՆԵԱՆ ԱՂՅԹՔԻ

Ի զիշերին յորում մատնիւր Փրկիչն մեր և մահ ինաւի ել ի լնառն Զիթենեաց:

Աղօթելով զայս ասէր. Հայր անցոյիննեն զբաժակս

Այն գիշեր, երբ պիտի մատնուէր մեր փրկիչը Խաչի վերայ պատարագուելու, բարձրացաւ Զիթենեաց սարը:

— Այնտեղ աղօթում էր և ասում — Հայր. անցկացրու հեռացրու ինձանից այս բաժակը:

#### ԻԵ. ԵՐԳ ԳԵԹՍԵՄԱՆԵԱՆ ԱՂՅԹՔԻ. Ներսէս Շնորհալի:

Զայնիւ մաղթէր աղօթական:

Վասն իմ առ հայր իւր էական,

Ժունըը դնէր խոնարհական

Որում կրկնի ծունը ամենայն.

<sup>1)</sup> Ինչու գիշերով բռնեցին Յիսուսին. ցերեկը ժողովրդից վախենում էին. տես Ձեռնարկս:

<sup>2)</sup> Բացատրել հազարապետ բառը — հազար զինւորի գըլ խաւոր:

<sup>3)</sup> Բացատրել փախչելու պատճառը — թերահաւատ էին, վախում էին որ իրանց էլ չբռնեն:

Եթէ փրկել մարդկան հնար է  
Առանց մահու իմ, որ զբեալ է  
Բաժակ մահու յինէն անցցէ:  
Ոչ իմ կամաւ՝ այլ քոյդ եսցէ:

Աղօթական ձայնով — աղօթքով խնդրում էր իմ մահին իւր էական խսկական չօրը:

Խոնարհ ծունը էր գնում նորան՝ Որին բոլորն էլ ծունը են կրկնում:

Դրուած է՝ որ մահովս պիտի լինի փրկութիւնը. բայց եթէ առանց մահուանս էլ կարող է լինել փրկութիւնը՝

Այն ժամանակ չարշարանացս ու մահուանս բաժակը թող հեռանայ ինձանից:

Սակայն իմ կամբով թող չլինի, Հայր, այլ Քո կամբով:

#### ԻԹ. ՇԱՐԱԿԱՆ ՄԱՏՆՈՒԹԵԱՆ

Արծաթակրութեամբն մոլեալ Յուղա.

Զիւր զմեծ զվարդապետն ընդ երեսուն արծաթոյ Հրէիցն մատնէր <sup>1)</sup>:

Ընդ որում ես համբուրեցից ասէ մնա կալարուք.

— Ո՞վ համբոյը նենգութեան նշան և առիթ մահու:

<sup>1)</sup> Բացատրել սաներին — ինչ է արծաթսիրութիւնը և յնչ՝ արծաթսիրութեամբ մոլուած լինելը կամ փողապաշտութիւնը. միան փողով՝ թէ հազար տեսակ չար կիրքերով էլ կարելի է մոլուել. հարցնել սաներին — քիչ են ալդպիսիները. թէ շատ գիտեն կամ ճանաչում են ալդպիսիներին. Օրինակներ:

Արծաթի սիրով մոլուած—փողապաշտ Յուդան.

Իւր Մեծ Վարդապետին—Ուսուցչին մատնում է Հրէաներին երեսուն արծաթի գնով։

Եւ ասում է—ում որ ես կհամբուրեմ՝ նա է. նորան բռնեցէք։

Ի՞նչ նենդ և դաժան համբոյր՝ որ Մեծ Ուսուցչի մահուանը նշան ու պատճառ դարձաւ։

29. ԿԱՅԻԱՓԱՑ=ՔՍՀԱՆԱՑԱՊԵՏԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ ԵՒ ՊԵՏՐՈՍԻ  
ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆԸ,

Յուլ. 13—24. Մատթ. ԻԶ. 57—66. Ղուկ. ԻԲ. 55—62.

Յիսուսին կապած տարան նախ Անհա քահանայապետի մօտ, որ Կայիափայ քահանայապետի աներն էր. Յիսուսին հետեւում էին Միմոն Պետրոսը և միւս աշակերտը—Յովհաննէսը. և որովհետև Յովհաննէսը ծանօթէր քահանայապետին՝ Յիսուսի հետ մտաւ քահանայապետի գաւիթը. իսկ Պետրոսը դուրսը մնաց. Յովհաննէսը դուրս եկաւ նորան էլ ներս տարաւ։

Քահանայապետը հարցրեց Յիսուսին—Նորա աշակերտների և առհասարակ վարդապետութեան մասին։ Յիսուս պատասխանում է—Ես ծածուկ շեմ խօսել. միշտ ժողովրդի մէջ և Տաճարումն եմ քարոզել, վարդապետել, ուսուցել. ամենին էլ լսել են. հարցրու նրանց։

Անհա քահանայապետը ուղարկեց Յիսուսին Կայիափայի մօտ։ Ուր հաւաքուել էին դպիրները և ժողովրդեան ծերերը. Քահանայապետը և բոլոր ատեանը սուտ վկաներ էին որոնում <sup>1)</sup>), որպէս զի նրանց վկայութիւն։

1). Հարցնել առներին—լսել են. արդեօք սուտ վկայութեան մասին. զիտեն ինչ է վկայութիւնը. և կամ սուտ վկայութիւնը. օրինակներ կարդ են բերել. մեր մէջ էլ կան աղնիւ և օգտակար մարդու անունը արանտաւորելու համար՝ սուտ-

ներով Յիսուսին յանցաւոր համարեն ու մահուան պատիժ տան. Գտնուեցան սուտ վկաների, բայց նրանց վկայութիւնները սուտ էին և թոյլ էին։

Քահանայապետը տեսնելով որ Յիսուս լուռ է և սլատասիան չէ տալիս սուտ վկաներին՝ վերկացաւ տեղից և ասաց—Երդմնեցնում եմ քեզ կենդանի Աստուծոյ անունով որ ասես մեզ—Դու ևս Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին։ Յիսուս պատասխանեց—դու ինքդ ասացիր. բայց ասում եմ ձեզ, այսուհետեւ կտեսնէք Մարդոյ Որդուն Զօրութեան աջակողմը նստած և երկների ամպերի վերայ գալիս։

Այս որ լսեց քահանայապետը՝ պատասխեց իւր հանդերձները—շորերը <sup>1)</sup> և ասաց—Հայհոյեց, Հայհոյութիւն խօսեց և գուք անա լսեցիք, էլ ինչ են հարկաւոր միզ վկաներ։ Ի՞նչ էք կամենում, ի՞նչ էք սրոշում։ Նոքա պատասխանում են—մահապարտ է։

Երբ Յիսուսին գատում էին քահանայապետի տանը՝ բակումը կրակ էին արել և տաքանում էին. Նրանց հետ էր և Պետրոսը. Մի աղախին տեսաւ Պետրոսին, որ կրակի լոյսի դէմ էր նստել, նայեց նորա վերայ և ասաց այնտեղ եղողներին—սա էլ նրանց հետ էր՝ որոնք նորա հետ էին։ Պետրոսը ուրացաւ և ասաց. այ կին. շեմ էլ ճանաչում նորան։ Փոքր ինչ յետոյ մի ուրիշն է

վկաներին դիմողները շեշտել ալս. որ սաները իրենք էլ ու դուեն և բամբասանքներից ձեռք վերցնեն, որովհետեւ անշուշտ սովորած կամ լսած կլինեն իրենց ծնողներից, հարեւաններից և ալլն. պէտք է արմատախիլ անել ալլ տգեղ սովորութիւնը.

1). Բացատրել սաներին—ինչո՞ւ պատառեց հանդերձները. ինչ կարիք կար. միթէ լիրաւի նա աւելի նախանձախնդիր էր Աստուծոյ Անուան և փառքի մեծութեանը, քան թէ Յիսուսը՝ ոչ ամենեին. ալլ դա մի փարիսական, մի կեղծաւոր ցոյթ էր—որով նա կամենում էր լուզել, գրգռել ներկաէ եղութեան դէպի Յիսուսը. Շատ կան և ալսօր արդպիսիները։

ասում—դու էլ նրանցից ես: Պետրոսը պատասխանում է—այ մարդ, ես նոցանից չեմ: Մի ժամից յետոյ մի ուրիշ վիճում էր և ասում—ճիշտ է, սա էլ նորա հետ էր, որսված թալիքացի է: Պետրոսն ասում է—այ մարդ, ես չգիտեմ դու ինչ ես ասում<sup>1)</sup>: Եւ իսկոյն հաւը խօսեցաւ: Նոյն ժամին էլ Յիսուսին դուրս էին բերում Կայիփայի տանից, դարձաւ Յիսուս, նայեց Պետրոսին: Պետրոսը յիշեց Յիսուսի, իւր սիրելի Ռւսուցչի խօսքը և դուրս դնաց ու դառնապէս լաց եղաւ:

Լ. ԵՐԳ. ՈՒՐԱՅՑՈՒԹԵԱՆ ՊԵՏՐՈՍԻ. ԱԿՐԱԿԱ ՇԱՌՈՒՀԱԿԻ.

Նոր հօտին փոքրու՝ ցըուեալ.  
Քանզի զհովիւն քաջ՝ հարեալ.  
Պետրոս միայն զհետ երթեալ.  
Ի յաղկանէ՝ վիմին շարժեալ.  
Նշանակեալ հաւն խօսէր.  
Առ ի Պետրոս Տէրն ակնարկէր.  
Զքանն յիշէր՝ դառն արտասուէր.  
Ի գլորմանէն դարձեալ կանգնէր:

<sup>1)</sup> Հարցնել սաներին, աշխատելով որ պատասխանը ի-քենք գտնեն—թէ աշակերտաները որ վախան՝ վախեցան և թերահաւատ էին. իսկ Պետրոսը, որ ուրացաւ երեք անդամ, չվախեցաւ, թերահաւատ չէր...: Նոցա պատասխաններից ի-սույ բացատրել—որ Պետրոսի վարմունքը սիրու և հետաքը-քրութեան արդիւնք էր. նա սիրում էր և ուզում էր իմանալ —թէ վիրջը ինչ կլինի. նա ուրացաւ այն պատճառով՝ որ ապ-րի և յետոյ զործի Յիսուսի—իւր սիրելի ուսուցչի համար. նա չէր ուղում որ կորցնեն իրեն և Աւետարանի քարոզութեան ապագայ ոլժերից մէկը, որ ինքն էր՝ կորչի:

Փոքրիկ նոր հօտը ցըուեցաւ.  
Որովհետև քաջ հովուին խփեցին.  
Պետրոսը միայն քաջ հովուին հետեւց—նորա յետելից դնաց.  
Նա՝ որ Յիսուսից անշարժ Վէմ էր կոչուած՝ ապախ-նի խօսքով շարժուեցաւ<sup>1)</sup>.  
Նշանակած հաւը խօսեցաւ.  
Տէրը Պետրոսին նայեց.  
Պետրոսը Յիսուսի խօսքը—իւր ուրացութեան մա-սին յիշեց, դառնապէս արտասուեց.  
Եւ զզման այդ արտասուէրը նորան դլորուելուց ա-զատեց, վրկեց:

Յօ. ՊԻՂԱՏՈՍԻ ԴԱՏԱՍՑԱՆԸ ԵՒ ՅԻՍՈՒՄԻ ԽԱԶԵԼՈՒԹԻՒՆԸ:

Մատթ. Իէ. 1—56. Մարկ. ԺԵ. 1—41.  
Ղուկ. ԻԳ. 1—49. Յով. ԺԷ. 28—40.  
ԺԹ. 1—37.

Երբ այգը հասաւ—լուսացաւ՝ քահանայապետները և ժողովրդեան ծերերը խորհուրդ արին սպանել Յիսու-սին: Կապեցին և տարան Պիղատոսի մօտ:

Այս որ լսեց Յուդան՝ զզաց. զզալով՝ որ ինքն է պատճառը. առած արծաթները յետ դարձրեց քահանա-յապետներին և ժողովրդեան ծերերին ու ասաց—մեղյ, որովհետև արդար արին մատնեցի: Նորա պատասխա-նում են—Մեզ փոյթ չէ. դու գիտես: Արծաթները ձգեց Տաճարի մէջ. իսկ ինքը դնաց խեղգուեցաւ: Քահանա-

<sup>1)</sup> Բացատրել—որ առաջին ուրացութիւնը աղախնից ե-ղաւ. նա էր առաջինք՝ որ ասաց Պետրոսին սա էլ նրանց հետ էր, որոնք նրա հետ էին. Պետրոսը պատասխանեց—աէ կին. չեմ էլ ճանաչում նորան. ալսէ. որ ասում է—ի յաղկա-նէ վիմին շարժեալ.

յապետները այդ փողը արիւնի գին համարելով՝ չուզեցին կորբանում ընդունել—գանձարանում հաշուել։ Խորհուրդ արին և այդ փողով բրտի ագարակը գնեցին, որ օտարականների համար գերեղմանատուն լինի, այդ ագարակը ասուեցաւ արիւնի ագարակ։

Յիսուս կանգնած Պիղատոսի առաջ դատում էր նորանից. Պիղատոսը շատ հարցեր տուեց Յիսուսին և տուած պատասխաններից իմացաւ—որ Յիսուսին նախանձելով են միայն մատնում իւր ձեռքը. ուստի առաջարկեց նրանք—թէ կիսատէ և կարձակէ. որովհետեւ Զատկական տօնի պատճառով՝ դատապարտուած մի յանցաւոր պէտք է ներուէր, պէտք է աղատէին նորան։ Այդպիսի մի ծանր յանցաւոր կար, որ մարդ էր սպանել։ Պիղատոսը առաջարկեց—Յիսուսին աղատել, իսկ նորան պատժել։ Սակայն ժողովուրդը՝ ծիրերից, քահանայապետներից, փարիսեցիներից դրդուած՝ պահանջում էին որ Յիսուս Բարաբային արձակէ, իսկ Յիսուսին խաչէ։ Պիղատոսը խոր համոզուած էր—որ Յիսուսը արդարէ, ուստի առաջարկում է արձակել Յիսուսին. բայց ժողովուրդը գոռում, դոչում, աղաղակում է թէ—եթէ դորան արձակես՝ ինչանակէ Կայսեր քարեկամ չեմ։ Այն ժամանակ չուր բերել տուեց, ձեռքերը լուաց ժողովուրդի առաջ ու ասաց—քաւուած եմ ես այդ արդարի արիւնից։ Ժողովուրդը պատասխանեց—դորա արիւնը թող լինի մեզ վերայ և մեր որդուց վերայ։ Այն ժամանակ Պիղատոսը արձակեց Յիսուս Բարաբային և Յիսուսին յանձնեց նրանց ձեռքը՝ որ տանեն խաչելու։

### ՅԻՍՈՒՍ ԽԱՉԱԿԻՐ

Նըրը Յիսուսն էր տանում իւր խաչը. բայց երբ տեսան Միմոն Կիւրենացի մէկին, որ անկիցն էր գալիս՝ նրան յանձնեցին խաչը, որ նա վերցնէ. և նա տանում էր. իսկ Յիսուս հետեւում էր նորան։

Յիսուսի յետեից ժողովրդի և կանանց մեծ բազմութիւն էր գնում, նորա լաց ու կոծով էին հետեւում Յիսուսին։ Դարձաւ Յիսուս և ասաց նրանց—Ռ'վ Երուսաղէմի աղջիկներ, լաց մի լինիք դուք ինձ վերայ. լաց եղէք ձեզ վերայ և ձեր որդուց վերայ։ Որովհետեւ գալու մն օրեր, երբ կասեն՝ երանի՛ այն ամուներին՝ որոնք որդի շննան. երանի՛ այն ստինքներին՝ որոնք որդի շննգեցին։ Այն ժամանակ կսկսեն ասել լեռներին—ընկէք մեզ վերայ և բլուրներին՝ թէ ծածկեցէք մեզ։ Որովհետեւ եթէ դալար ու ճկուն փայտի հետ այսպէս են վարում։ չոր փայտի հետ ինչ կանեն։

### ԳՈՂԳՈԹԱ ԵՒ ԽԱՉ

Երկու աւազակներ էլ տարան որ Յիսուսի հետ խաչեն. երբ հասան այն տեղը՝ որ ասւում է Պագաթն, Կառափելոյ տեղ և երրայեցերէն՝ Պողովթայ, խաչեցին Յիսուսին. և երկու աւազակներ էլ այս ու այն կողմը. մէջ տեղը՝ Յիսուսին. Մի տախտակ էլ գրեց Պիղատոս և գրեց Խաչի վերայ. վերնագիրն էր Յիսուս նազովրեցի թագաւոր. չուից։ Հրէաների քահանայապետները գնացին Պիղատոսի մծու և ասացին—մի գրեր թագաւոր չրէից. այլ թէ նա ասաց—թէ թագաւոր եմ չրէից։ Պիղատոսը պատասխանեց նրանց—ինչ որ գրեցի՝ վրեցի։

Յիսուսին շատ անարգական խօսքեր էին ասում խաչի վերայ թէ ժողովրդից. ումանք, թէ իշխանները, թէ զինուորները, թէ փարիսեցիների ու քահանայապետների ծառաները. բայց Յիսուս ներելով նոցա՝ աղօթեց առ չայր և ասաց—չայր. ներիր դրանց, որովհետեւ իրենք էլ չգիտեն՝ թէ ինչ են անում։ Յիսուսի խաչակից աւազակներն անգամ ծաղրական խօսքեր էին ասում։ Զախակողմեան աւազակն ասում էր—չէ որ դու Քրիստոսն ես. քեզ էլ փրկիր. մեզ էլ 1). իսկ աջակողմեան 1) Բացատրել—Եղը որ ընկնի դանակաւորները կշատան, ախ, հրքան կան ալոր մեր մէջ լուսէր կամ խօսքերը

աւազակը սաստում էր նորան և ասում—չես վախենում  
դու Աստուծուցդ՝ որի հետ միմնոյն պատիժն ես կրում։  
Մենք, ճշմարիտ որ, արժանի ենք մեր ծանր յանցանքի  
համար կրելու այս արդար հատուցումը։ իսկ սա ոչինչ  
վատ բան չէ արել, յանցանք չունի և ի զուր մեզ հետ  
միմնոյն պատիժն է կրում <sup>1)</sup>։ Եւ ասում է Յիսուսին—  
Յիշիլ ինձ Տէր. երբ որ կզատ Քո արքայութիւնովդ—  
Ժագաւորութիւնովդ <sup>2)</sup>։ Սսում է նորան Յիսուս—Հինդ  
այսօր դու ինձ հետ դրախտում կլինես։

Կշող ու ալնտէս խօսող ազնիւներին՝ ծաղրողներ, անարգող-  
ներ, որոնց առջև մի ժամանակ գլխարկ էին հանում, որոնց  
հետ նստելն ու կանգնելը, խօսելն ու գործելը՝ իրենց համար  
փառք ու պատիւ էին համարում. իսկ ակժմ՝ եղը ընկաւ, զա-  
նակաւորները շատացան. Քիչ կան ալսպիսի սուտակասպատ  
սինքորները մեր մէջ. օհ, յէզէոններ են կազմում. Զգացմուն-  
քով խօսել այս մասին սաների հետ, ազնւութեան սերմեր  
ցանել նոցա մատաղ ու անմեղ սրտերի մէջ,

<sup>1)</sup> Բացատրել—թրպիսի հակատիպ ձախակողմեան աւա-  
զակին. սորա մէջ որքան վեհութիւն հոգւու, գիտենալով հան-  
գերձ—թէ ալ ևս նորա ձեռքին ոչինչ չկալ, իրենց հետ միա-  
հաւասար պատժակից՝ ալնու ամենանիւ հոգւու աչքով է նա-  
յում և զգում—թէ չէ, Սա իրանցից չէ. Սա շատ բարձր է. և  
անարգար է Սորա դստաստանի վճիռը. անարդար է, մեզա-  
պարտ է ազգը՝ որ Սորան խաչի մանուան դատապարտեց. ի՞նչ-  
քան ազնիւ հոգի. սորա հոգւու աչքը կոր չէ միւսի նման.  
բայց շատ կան սորա նմանները ալսօր մեր մէջ... լարել սա-  
ների ուշագրութիւնը դէպի մեր սնանկութիւնը՝ դէպի ազնիւն  
ու զեղեցիկը. թող գասընթացը չաւարտուի, քիչ անցնուի. միայն  
սաների սրտերի հետ երկար խօսւի. սիրտ մշակուի. սիրտ  
պատրաստուի.

<sup>2)</sup> Բացատրել—թէ որքան ձախակողմեան աւազակը կոր  
էր հոգւու աչքով՝ որ չկարողացաւ տեսնել իւր խաչակցի  
գաղտնի, ներքին խորհրդաւոր փառքը. իսկ ընդհակառակն  
աչակողմեան աւազակը իւր հոգւու բաց աչքով, Յովիաննու  
նման՝ թռաւ, սլացաւ իբրև երկնասլաց արծիւ, հասաւ երկըն-  
քի անհաս խորհրդին և խմացաւ—թէ մի օր պիտի գալ ալր  
իւր խաչակից Յիսուսը իբրև երկնաւոր թագաւոր. և խնդրում  
է իշել իրեն այն օրը. որ ինքն ես փրկութեան աւէտիքն  
առնու. Ահա ամենամեծ և առաջին հաւատացող Քրիստոսին

ԳՈՂԳՈԹԱՑՅԻ ԽԱԶԵԱԼԻ ԿՏԱԿԸ ԾՆՍՂԱԽՆԱՄ ՈՐԴԻՌՈՑ.

Յիսուսի խաչի մօտ էին նորա մայրը, միւս աշա-  
կերտուհները և Յովիաննէսը—իւր սիրելի աշակերտը։  
Գիտէր Յիսուս իւր մօտալուտ մահը. գիտէր նաև՝ որ  
իւր մահուանից յետոյ իւր մօրը կարող են նեղացներ.  
և բացի դրանից՝ տխուր կլինի. ուստի նորա խնամքը  
յանձնում է Յովիաննիսին, որպէս և Յովիաննիսինն էլ  
յանձնում է իւր մօրը. և ասում է մօրը—կին դու. ահա  
որդի քո. ասում է աշակերտին—ահա մայր քո. և ալ-  
նուհետեւ յանձնարարեալ մայր ու որդին խնամում են  
իրալ փոխադաբար։

ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆԱՑ ԵՒ ՏՆՅՈՒՆԱԿԱՆԱՑ ԼՐՈՒՄԸ.

Սրանից յետոյ գիտենալով Յիսուս—որ ամեն բան  
վերջացաւ, ինչ որ իւր մասին մարգարէները առաջուց  
գրել էին՝ բոլորն էլ կատարուեցաւ, և մնացել է մի-  
մարգարէութիւն, որ չի կատարուել դեռ ևս՝ ուղեց—որ  
այն էլ կատարուի. և ասաց—ծարաւի եմ <sup>1)</sup>։ Այսեղ

<sup>1)</sup> Բացատրել «Ծարաւի եմ» խօսքը—ոչ տարրական ջրի-  
ծարաւ ալ մարդկանց փրկութեան ծարաւ. մանաւանդ Հրէա-  
ների, որոնք ձախակողմեան աւազակին նման կուրացան՝ ճա-  
նաչելու եկած Յիսուսի մէջ իրենց նախահալրերի հեռուց  
տեսած ու գուշակած Մեսիաին. դարձեալ ծարաւի էր—որ  
նկատում էր՝ թէ նանքասիրութիւնը, աշխարհասիրութիւնը,  
մարգելուցրութիւնը, փառասիրութիւնը, շղոքորթութիւնը,  
կեղծաւորութիւնը, մարդահաճութիւնը և շատ սրանց նման  
տշեղ լատկութիւններ տիրել են մարդկանց սրտերին. իսկ  
աղիւը, մաքուը, անկեղծը, հարազատը, գեղեցիկը և ընկե-  
րականը՝ միշտ բացակայ են նոցա սրտերից. ալո՞ ծարաւի էր  
Յիսուսը. Այն ժամանակները հեթանոսական ողին էր տիրում.  
իսկ ակժմ՝ Քրիստոնէականը. արդեօք ալժմեան ժամանակը—  
Քրիստոնեակ ժամանակ, քաղաքակրթուած ժամանակ՝ շատ  
բարձր է այն ժամանակից. ինչո՞վ. ի՞նչ սրտով, ի՞նչ նպատակ-  
ներով—շահ ու վաստակի. և ալն՝ անձնական. ալո՞ ալո՞ էն.  
շատ հեռու չենք գնացել.

աման կար քացախով լիքը, նպատ սպանդը լեզու հետ  
խառնած քացախով լցրին և ծոթրինի կապոցով մօտեց-  
րին Յիսուսի բերնին: Երբ առաւ Յիսուս լեզու հետ  
խառնած քացախը՝ ճաշակեց. բայց շկամեցաւ լսմել <sup>1)</sup>.  
այն ժամանակ ասաց—Ամենայն ինչ կատարեալ է—ամեն  
գրածները կատարուեցան: Եւ գառնալով դէպի իւր չայրը՝  
ասաց—չայր քո ձեռքն եմ աւանդում իմ հոգին. խո-  
նարհեցրեց գլուխը և աւանդեց հոգին: Այս եղաւ իննե-  
րորդ ժամին. իսկ վեցերորդ ժամից սկսեալ մինչև ին-  
ներորդ ժամը խաւար էր երկիրը, որովհետեւ արեգակը  
խաւարեցաւ. Տաճարի վարագոյրը վերեխց նեղքի պատ-  
ռուեցաւ—երկուսի ճեղքուեցաւ. երկիրը շարժուեցաւ.  
քարերը պատառուեցան, գերեզմանները բացուեցան. և  
շատ ննջեցեալ սուրբերի մարմինները գերեզմաններից  
դուրս եկան և շատ ծանօթներին երկեցան. իսկ հարիւ-  
րապետը, պահապանները, ժողովուրդը այս բոլոր եղած-  
ները որ տեսան՝ վախեցան ու ասացին—ճշմարիտ որ  
Աստուծոյ Որդի էր սա. և կուրծքերին խփելով՝ վերա-  
դարձան տուն:

Յիսուսի խաչելութեան յիշատակը մեր Եկեղեցին  
կատարում է Աւագ Ուրբաթ ցերեկը. և ծունը դնելը ար-  
գելուած է. որոշուելու չըէաներից՝ որոնք ժաղրելով  
ծունը էին դնում Յիսուսի խաչի առաջ:

#### ՀԱ. ՇԱՐԱԿԱՆ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ

Ո՞վ պքանչելի կ տեսիլ ահաւոր.

զԱրարիչն երկնի և երկրի այսօր տեսաք ի խաչին:  
Տեսեալ զՏէրն ի խաչին՝ խաւարեցաւ արեգակն.

<sup>1)</sup> Քացատրել—ինչու քացախ ու լեզի տուին. որ ցաւերը  
չպայ. բայց Յիսուս չընդունեց. կամեցաւ զզալ—որ տանջւում  
է ինքը—անպարտը՝ մեղաւոր ու պարտական մարդկութեան  
համար:

Եւ վարագոյր տաճարին ցելոյը վերուստ մինչ  
ի վայր:

Մնարգաբար խաչեցաւ Տէրն ի մէջ անօրինաց.

Զի լցցի գիրն՝ որ ասէ թէ ընդ անօրէնսն հա-  
մարեցաւ:

Ո՞վ ահաւոր և սքանչելի տեսիլ—այս ինչ ահաւոր  
—սարսափելի, ինչ սքանչելի—զարմանալի ու շտեմնուած  
քան ենք տեսնում—

Երկնը և երկրի Արարիշ Աստուածը խաչի վերայ.

Արարիշ Տէրը խաչի վերայ տեսնելով արեգակը՝  
լինքն էլ խաւարեց. և Տաճարի վարագոյրը վերեկից մին-  
չև վայր պատռուեցաւ:

Անարգ և անպատիւ կերպով խաչուեցաւ Տէրը. այն  
էլ անօրէնների, չարագործների մէջ և նրանց հետ.

Ինչու.

Որպէս զի կատարուի մարգարէների գուշակութիւնը  
թէ անօրէնների շարքում դասուեցաւ:

#### ԼԲ. ԵՐԳ. ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ.

Ի մէջ երկուց անօրինաց՝ կայը մերկացեալ տւողն  
օրինաց.

Զօր ոչ տեսին ազգն կսւրաց՝ բաց ի միոյն աւա-  
զակաց:

Երկիր հիմամբը սասանեցաւ... վէմք ի յինքեանց  
պատառեցան:

Ետուն ըմպել բեզ զլեղին և զքացախն ի ծա-  
բաւին:

Ի յուրբաթու ժամ երրորդին՝ բևեռեցար Տէր  
ի խաչին:

Երանեալ աւազակին՝ բացեր զգուռն աղին  
դրախտին.

Հոտ հաւատոյ սրտի նորին՝ կատարեցեր զիսնդ-  
րելին:

Եւ վարագոյր հին օքինին՝ վերուստ ի վայր  
պատառէին:

Արեգական լոյս քողարկեալ՝ խաւարանայր միջ-  
օրէին.

Եւ գերեզմանիք բանային՝

Մարմինք սրբոցն յառնէին:

Երկու անօրէնների աւազակների մէջ մերկ խա-  
չուած էր օրէնքի տւողը.

Կոյր ազգը այդ շտեռաւ. աւազակը միայն այդ  
տեսաւ:

...Երկիրը հիմքից դողաց... քարերը իրանիք իրան-  
ցից պատռուեցան...:

«Ճարաւի եմ» ասած ժամանակի քեզ տուին քա-  
ցախ ու լեզի:

Ուրբաթ օրը, ժամը երեքին խաչի վերայ բևեռե-  
ցին—մեխեցին Քեզ, Տէր:

Երանելի—երջանիկ աւազակի առաջ բաց արիր  
աղինական դրախտի դուռը՝

Կատարելով հաւատով ու սրտով խնդրածը:

...Հին օրինաց կամ հին ուխտի վարագոյրը վե-  
րեից ի վայր պատառուեցաւ:

Արեգակի լոյսը կէսօրին խաւարում էր.

Դերեզմանները բացւում էին.

Եւ սրբոց մարմինները յարութիւն էին առնում:

ԼԳ. ՇԱՐԱԿԱՆ ԵՒ ՍԱՂՄՈՍ ԽԱԶԻ<sup>1)</sup>

Խաչի քո Քրիստոս երկիրազանեմք.

Եւ զթաղումն քո մեծացուցանեմք.

Եւ Սուրբ զՅարութիւնդ քո փառաւորեմք.

Եկայք հաւատացեալք՝ երկրպագեցուք Քրիստո-  
սի Աստուծոյ մերոյ.

Վասն զի եկն ի ձեռն Խաչին իւրոյ շնորհեաց  
պարզես աշխարհի:

Սուրբ Աստուծ. սուրբ և հզօր. սուրբ և անմահ.

Բացատրել—«Խաչի Քո Քրիստոս...». շարականի եր-  
գելու զառաւորութիւնը օրակարգի համեմատ. ալսպէս—  
Աւագ Ուրբաթ առաւօտը երգում է—զՍուրբ մատնութիւնդ  
քո մեծացուցանեմք. և զսուրբ զջարչարանսդ քո փառաւո-  
րեմք. Փառք Սուրբ Խաչիդ. ալէլուիս... սուրբ Մատնու-  
թեանդ. ալէլուիս. Զարչարանացդ. ալէլուիս. Նոյն օրը ցե-  
րեկը—զՍուրբ Զարչարանսդ քո մեծացուցանեմք. և զսուրբ  
Խաչելութիւնդ քո փառաւորեմք. Փառք Սուրբ Խաչիդ. ալէ.  
Զարչարանացդ. ալէ. Խաչելութիւնդ. ալէ.: Նոյն օրը երեկո-  
ւին—զՍուրբ Խաչելութիւնդ քո մեծացուցանեմք. և զՍուրբ  
Թաղումդ քո փառաւորեմք. Փառք Սուրբ Խաչիդ. ալէ. Խաչե-  
լութիւնդ. ալէ. Սրբոյ Թաղմանդ. ալէ: Աւագ-Նարաթ-նոյն  
պէս՝ ինչպէս Աւագ-Ուրբաթ երեկուին. անփոփոխ, որովհետեւ  
Աւագ-Ուրբաթ երեկուից մինչև Աւագ-Նարաթ զկնի ձաշու՝  
Թաղումն Տեառն է. Զատիկի Կիւրակէին—զՍուրբ Թաղումդ  
քո մեծացուցանեմք. և զՍուրբ զՅարութիւնդ քո փառաւո-  
րեմք. Փառք Սուրբ Խաչիդ. ալէ. Սրբոյ Թաղմանդ. ալէ. Սուրբ  
Յարութիւնդ. ալէ.: Որովհետեւ այնպիսի օրեր են՝ որ սաները  
առհասարակ լաճախում են Եկեղեցի, ուստի աւելորդ չէ մատ-  
չելի ձեռվ ծանօթացնել սաներին այս օրերի կարեորագոյն  
Աստուծպաշտութեան հետ.

—Որ մատնեցար, խաչեցար, թաղեցար, յարեար<sup>1)</sup> վասն մեր. ողորմեա մեզ:

Փառք սուրբ խաչիդ. ալէլուիա. սուրբ Մատնութեանդ, Զարշարանացդ, Խաչելութեանդ, սրբոյ Թաղմանդ, սուրբ Յարութեանդ<sup>2)</sup>. ալէլուիա:

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուրուրախութիւն սրտից մերոց:

Ի պտղոյ ցորենոյ, գինոյ և ձիթոյ իւրեանց լցուցեր զնոսա:

Խաչն կենարար որ եղե մեզ փրկութիւն. սովաւամենեքեան զքեղ բարեբանեմք:

Որ ի Հօրէ լուսոյ լոյս ճառագայթեալ ի յերկրի. և գաւազան գօրութեան հաւատացելոց. սովաւ....:

Փառք չօր և Որդւոյ և Հոգւոյն Սըբոյ: Այժմ և միշտ. և յաւիտեանս յաւիտենից:

Որ լուսափայլ ծագմամբ հրաշափառապէս մեզ ցուցաւ. ի յօգնութիւն ընդդէմ թշնամւոյն. սովաւ:

Քո խաչին, ով Քրիստոս, երկրպագութիւն ենք տալիս.

Եւ քո թաղումը բարձրացնում, գովում, փառաբանում ենք:

Եւ սուրբ Յարութիւնդ փառաւորում ենք:

Եկէք, ով հաւատացեաներ, երկրպագութիւն տանք մեր Քրիստոս Սստուն:

<sup>1)</sup> Բացարել—որ աւստեղ ևս ըստ աւուր պատշաճի պիտի երգուի—Աւագ-Ռուբաթ առաւօտուն—որ մատնեցար. նոյն օրը՝ ցերեկը—որ խաչեցար. նոյն օրը՝ երեկոյեան ժամերգութեանը—որ թաղեցար. Աւագ-Շաբաթ առաւօտը—որ թաղեցար. Զատիկի Կիւրակէ—որ յարեար ի մեռելոց:

<sup>2)</sup> Բացարել—որ աւս ևս ըստ աւուր պատշաճի է երգուում:

Որովհետեւ նա եկաւ և իւր խաչի չնորհիւ աշխարհին շատ բարիքներ պարզեց:

Սուրբ ես, ով Աստուած. Սուրբ ես, ով Հզօր. Սուրբ ես, ով Անմահ:

— Որ մատնուեցար, խաչուեցար, թաղուեցար և յարութիւն առար մեզ համար. ողորմիր մեզ:

Սուրբ խաչիդ փառք ենք տալիս. ալէլուիա—օրհնեցէք Աստուծուն. փառք սուրբը Մատնութեանդ, Զարշարանացդ, Խաչելութեանդ, սուրբ Թաղմանդ, սուրբ Յարութեանդ. ալելուիա:

Նշան զբուեցաւ, տպաւորուեցաւ մեզ վերայ Քօ երեսի լոյսը. և մեր սրտերին ուրախութիւն տուիր կամ սըրտերը ուրախացրիր:

Իրենց տուած ցորենի, գինու, ձէթի պտուղից—տասանորդից՝ իրենց լիացրիր, կշտացրիր:

Վինարար խաչը որ փրկութիւն եղաւ մեզ՝ սորանով մենք ամենքս Քեղ բարեբանում—փառաբանում ենք:

Հօրից ծագած լոյսից՝ լոյս ճառագայթեցաւ երկրի վերայ. և խաչը զօրութեան գաւազան եղաւ հաւատացեաների համար:

Փառք տանք Հօրը և Որդուն և Սուրբ Հոգուն: Այժմ և միշտ և յաւիտեան:

Սուրբ խաչը լուսափայլ ծագեցաւ և հրաշափառ կերպով երկեցաւ. և օգնութիւն եղաւ մեզ մեր Հոգու թշնամու դէմ պատերազմելու:

31. ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ ԵՒ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԿԵՐԵԼԸ. Մասթ. Եկ. 55—66. Մարկ. ԺԵ. 42—47. Ղուկ. ԻԳ. 50—56. Յով. ՃԹ. 31—41.

Յիսուսի մահուանից յետոյ Հրէաները, իրենց սուրբութեամբ, խաչի վերայ չպիտի թողնէին խաչուածների մարմինները, որովհետեւ ուրբաթից յետոյ գալիս եր-

իրենց մեծ տօնը—Զաբաթը։ Ուստի խնդրեցին Պիղատոսին որ խորտակին խաշուածների բարձերը—ջարդեն խաշուածների ազգիները։ որովհետև տօնի օրը չէր կարելի խաշուածների մարմինները խաշի վերայ թուղնել։ Եկան զինւորները և երկու աւազակների, որոնք դեռ կենդանի էին, ազգերքը ջարդեցին։ իսկ երբ մօտեցան Յիսուսին, որ նոյնը անեն, տեսան՝ որ արդէն մեռած է։ Զինւորներից մէկը տէգով-զեղարդով խոցեց կողը, որ խմանայ մեռած է իրօք՝ թէ ոչ, և խսկոյն գուրս եկաւ արին և ջուր<sup>1)</sup>։ բայց Յիսուս անշարժ էր։ Դրանից իմացան—որ Յիսուս մեռած է, և չարդեցին նորա աղդերը։

Կային այնտեղ շատ կանայք, որոնք հեռուից նայում էին. դոքա Գալիլիայից եկել էին և Յիսուսին հետեւմ էին ու պաշտում։ Դրանց մէջ էին—Մարիամ Մադդաղենացին, Մարիամ Յակովայ մայրը, Յօնեայ մայրը և Զերեղիայի որդուց մայրը Սաղովմէ։ Սոքա եկել

<sup>1)</sup> Եթէ կալ հնարաւորութիւն և ներումէ սաների զարդացումը՝ բացատրել արիւնի և ջրի խորհուրդը. ջուրը—խորհուրդ Մկրտութեան. արիւնը—խորհուրդ Հաղորդութեան. Եւ իբրև վկալութիւն բացատրութեան՝ սորվեցնել Շնորհաւուիրով

կը կը ավտակ կողին աղբերքք Եկեղեցի իւր հասաւուի.

Զրովն մաքրի։

Զարիւնն ըմպէս...

Յիսուսի կողիցը կրկնավտակ—ջրի և արիւնի հոսած աղբիւրներով Եկեղեցին հաստատուեցաւ։

Զրովը սկզբնական կամ Աղամակին մեղքից ենք սրբում. դա է Մկրտութիւնը։

Արիւնովը՝ ներգործական մեղքից ենք աղատում. դա է Հաղորդութիւնը։

Էին Երուսաղէմ, տեսնելու այն ամենը՝ ինչ որ կատարուելու էր։

Ուրբաթ գիշերը, որ Զաբաթ էր լուսանում, Յիսուսի ծածուկ աշակերտներից երկուսը՝ Յովսէփ Ալեմաթացին—որ Նախարար և բարեգործ մարդ էր և միաբան չէր չրէաների խորհրդին և գործին, և Նիկողիմոսը՝ խորհուրդ արին—իջեցնել խաչից Յիսուսի մարմինը և թաղել։ Յովսէփը զիմեց Պիղատոսին և իրաւոնք վերցրեց։ Յովսէփն ու Նիկողիմոսը բերին կտաւ՝ որ պատանեն մարմինը և հարիւր լիտրի չափ զմուռ, հալուէի խունկի հետ խառը։ Իջեցրին խաչից Յիսուսի սուրբ և անապական մարմինը<sup>1)</sup>), կտաւներով և խունկերով պատեցին, ինչպէս որ Հրէից օրէնքին էր։ Եւ որովհետեւ Հրէից ուրբաթն էր և այնտեղ խաչի մօտ եղած պարտիզի մէջ նոր փորած, պատրաստ գերեզման կար, որի մէջ ոչ ոք դեռ չէր զրուած՝ այնտեղ զրին Յիսուսի մարմինը և մի մեծ քար գէմ տուին գերեզմանին և զնացին։

Յիսուսի թաղման ժամանակ գերեզմանի հանդէպնըստած էին Մարիամ Մագդաղենացին, Մարիամ Յակոբայն և Յօնեայն. նայում էին—թէ որտեղ զրին մարմինը, որ հետեւեալ օրը զան և օծեն մարմինը. բայց որովհետև հետեւեալ օրը շաբաթ էր՝ հանդստացան ինչպէս օրէն-

<sup>1)</sup> Թէ բարմար կհամարէ ուսուցիչը՝ թող սորվեցնէ սաներին—թէ ըստ աւանդական պատմութեան՝ Յովսէփ Ալեմաթացին Յիսուսի մարմինը խաչից իջեցնելուց առաջ՝ ծունկ է չոքել խաչի պատուանդանի առաջ և երեք անգամ «Սուրբ Աստուած, Սուրբ և Հզօր, Սուրբ և Անմահ որ խաչեցար վասն մեր. ողորմեա մեզ». ասելուց ինայի միան՝ սանդուխ է դրել և բարձրացել են վերև, ճեռքերի ու ոտքերի բեկոները հանել են ու ցած են իջեցրել. Այդ է պատճառը, որ Աւագ Ուրբաթ երեկոյեան ժամերգութեանը ծնկաչոք ենք երգում «Սուրբ Աստուածը», որովհետև Յիսուս խաչի վերալ չէ ալ ևս.

քով պատուիրուած էր. թողնելով միաշաբաթին:

Ճարաթ օրը, շատ վազ, քահանայապետներն ու փարիսեցիները ժողովեցան Պիղատոսի մօտ և ասացին.— տէր, յիշեցինք, որ այն մոլորեցնողը, երբ դեռ կենդանի էր, ասում էր—երեք օրից յետոյ յարութիւն պիտի առնեմ: Արդ՝ հրամայիր որ երեք օր զգուշութեամբ հրակին գերեզմանին. զուցէ աշակերտները գան, զողանան մարմինը և ասեն ժողովրդին՝ թէ յարութիւն է առել: Այն ժամանակ վերջին մոլորութիւնը աւելի շար կլինի քան առաջինը:

Պիղատոսը պատասխանում է նրանց—դուք զօրականներ ունիք. գնացէք, զգուշացէք ինչպէս որ գիտէք: Եւ նորա գնացին. և զգուշութեան համար զինոր պահապաններ զրին գերեզմանի մօտ և գերեզմանի քարը իլենց մատանիքով կնքեցին:

#### ԼԳ. ՇԱՐԱԿԱՆ ԹԱՂՄԱՆ ՅԻՍՈՒՍԻ ԵՒ ԿՆՔԵՑՄԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ.

Պարզեատուն ամենեցուն, այսօր խնդրի պարզեած ի Պիղատոսէ.

Եւ արկողն զլոյս որպէս զօթոյ՝ հաւանի պատիլ ի Յովսէփայ:

Կենդանատուն ամենեցուն, այսօր դնի ի նոր գերեզմանի.

Եւ գանձն անմահութեան կնքի մատանեաւ քահանայիցն:

Արարածոց փրկութիւն Քրիստոս, այսօր եղաւ ի նորափոր վիմի.

Զոր օրնեն զօրք երկնից երգով պահպանի զինորացն:

Ամենքին պարզեատրողը, պարզի բաշխողը՝ այսօր իրրի պարզե է խնդրւում Պիղատոսից.

Լոյսը իրրի վերարկու, իրրի ծածկոց իւր վերայ ձգողը՝ համաձայնուում է Յովսէփից ծածկոց առնել ու ծածկուել:

Ամենքին կեանք և կենդանութիւն տւողը՝ այսօր նոր գերեզմանի մէջ է դրւում, իրրի կեանք չունեցող, իրրի մեռեալ.

Նա՝ որ գանձ է անմահութեան՝ քահանաների մատանիով է կնքուում.

Արարած աշխարհի փրկութիւն ու փրկիչ Քրիստոսը՝ այսօր նոր փորած քարի մէջ է դրւում.

Նա՝ որին երգով են օրհնուում երկնային զօրութիւնները՝ այսօր երկրաւոր զինորների հսկողութեան ու պահպանութեանն է յանձնեւում:

#### 32. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ. Մատթ. ի. 1—15.

Ճարաթ երեկոյ՝ լոյս Միաշաբաթ, Մարիամ Մագդաղենացին, Մարիամ Յակոբայն և Սաղովմէն եկան Յիսուսի մարմինը օծելու: Եւ ահա մեծ շարժում եղաւ. որովհետեւ Աստուծոյ հրեշտակը երկնքից իջաւ, մօտեցաւ գերեզմանին, դէն ձգեց քարը և նստեց վերան: Նորա տեսիլը—կերպարանքը՝ փայլակի էր նման. շուրբը սպիտակ էին իրրի ձիւն: Պահպան զիւրները այդ որ տեսան՝ վախեցան, շփոթուեցան և մեռածի նման էին:

Հրեշտակն ասաց կանանց—Մի վախենաք դուք. գիտեմ խաշելեալ Յիսուսին էք որոնում. այստեղ չէ. որովհետեւ յարեաւ. ինչպէս և ասաց. եկէք, տեսէք տեղը՝ ուր զրուած էք մարմինը: Ճտապեցէք, գնացէք, ասէք

աշակերտներին՝ թէ յարութիւն է առել և ձեզանից առաջ կլինի Գալիլիայում. այնտեղ կտեսնէք նորան. անա ասացի ձեզ:

Նորա շտապեցին, հեռացան գերեզմանից և վախով և ուրախ ուրախ գնում էին աշակերտներին պատմելու: Գնալու ժամանակ պատահեցաւ նոցա Յիսուս և ասում է նոր էք. և նորա մօտեցան, երկրպագեցին նորան: Ասում է Յիսուս—Մի վախենաք. գնացէք, ասացէք իմ եղբայրներին, որ Գալիլեա գնան և այնանդ տեսնեն ինձ:

Երբ նորա գնացին, զօրականներից ոմանք եկան քաղաք և պատմեցին քահանայապետներին բոլոր եղածները: Նորա ծերերի հետ ժողովուեցան, խորհուրդ արին —զօրականներին շատ փոք տուին և այսպէս պատուիրեցին—կերթաք և ամենքին կասէք՝ թէ երբ մենք քնած էինք նորա աշակերտները եկան և նորամն գողացան: Եւ եթէ արդ լուրը գատաւորի ականջը համնէ, մենք նորա սիրտը կառնենք և ձեզ հոգս անելու ոչինչ չի մնայ: Արծաթներն առան և այնպէս արին՝ ինչպէս սորվեցրել էին նրանց: Այս համբաւը չըէաներից է դուրս եկել և հասել է մինչև այսօր:

Յիսուսի Յարութեան յիշատակը մեր եկեղեցին տօնում է Մեծ Պատից յետոյ առաջին Կիւրակին, որ ասում է Զատիկի. որ չըէից Պատէքին՝ և՛ նման է և՛ տարբեր<sup>1)</sup>:

<sup>1)</sup> Բացատրել սաներին—Պատէքի և Զատիկի նմանութիւնը և տարբերութիւնը—այնտեղ գառը. ալսուել՝ Յիսուս. այնտեղ գառան արիւնով՝ ազատութիւն սատակիչ հրեշտակից, ալսուել՝ Յիսուսի Արիւնով՝ փրկութիւն մեղքի իշխանութիւնից. այնտեղ լուսեղէն ամպով նգիպտուսից—Փարաւոնի ծառալութիւնից աղատութիւն և դէպի նախկին հալրենիքը ճանապարհորդութիւն. ալսուել՝ Յիսուսիւ աղատութիւն Մեղաց իշխանութիւնից և վերեւք դէպի նախնական վիճակը—անմահութեան դրախտը:

Առաքեաները ի յիշատակ Յիսուսի սքանչելահրաշ Յարութեան՝ Միաշաբաթ օրը՝ նշանակեցին օր հանգստի. և անուանեցին Կիւրակէ. ինչպէս և պահում է այսօր Քրիստոնեայ աշխարհը:

Զատիկի օրը կատարում է Ցնօրհնէքի սովորութիւնը<sup>1)</sup>. որ սահմանել են Առաքեալները և նոցա յաջորդող Հայրապետները. որպէս զի Յիսուսի ծննդեան—Մըկրտութեան կամ Յայտնութեան և Զատիկին կամ Յարութեան տօներին հոգեորականները շրջեն հաւատացեալնիրի տները, աւետեն նոցա այդ տօները. որպէս զի տպաւորուի ժողովրդի մէջ<sup>2)</sup>:

#### ԼԵ. ՇԱՐԱԿԱՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ:

Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անման և երկնաւոր. Քեզ աւետիք խնդութեան հարսն ի յերկը եկեղեցի. Օրհնեալ ի ձայն ցնծութեան զԱստուած քո, Սիօն:

Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զման-կունս քո.

Լուսաւորեան երուսաղէմ. քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս.

Օրհնեալ....

Այսօր խաւարն անդիտութեան հալածեցաւ երեակ լուսվն.

<sup>2)</sup> Բացատրել—սաներին Ցնօրհնէքը և Ախառը, Օգտուել ա. տարի. Ձեռնարկիցս:

<sup>3)</sup> Բացատրել սաներին—ձւով Զատիկի շնորհաւորելու. պատճառը. և մանաւանդ՝ կարմիր ձւով. Ձեռնարկիս ա. տարի.

Եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան յարուցեալն ի մեռելոց Քրիստոս Օքննեա...<sup>1)</sup>:

Անմահ և Երկնաւոր փեսայն Քրիստոս մեռած տեղից այսօր յարեաւ.

Ով եկեղեցի, որ այս երկրից հարս ընծայուեցար Քրիստոսի՝ թող քեզ խնդութեան աւետիս լինի:

Ցնծաղին ձայներով օքնիր Աստուծուդ, ով Սիօն.

Եյսօր լուսաւորեց Քո մանուկներին Լոյսից ծընուած անճառելի լոյսը.

Լուսաւորուիր, ով Երուսաղէմ. որովհետև յարութիւն առաւ Քո Լոյսը—Քրիստոս:

Սուրբ Երրորդութեան լուսովը հալածուեցաւ այսօր անգիտութեան խաւարը.

Եւ մեռած տեղից յարութիւն առած Քրիստոսը՝ Քեզ գիտութեան լոյս ծագեց<sup>2)</sup>:

#### Լ.Զ. ԺԱՄԱՄՈՒՏ ԹԱՐՈՒԹԵԱՆ.

Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Մահուամբ զմահ կոխեաց:

Եւ Յարութեամբ իւրով մեղ զկեանս պարզեեաց:

Նմա փառք յաւիտեանս ամին:

Քրիստոսը յարութիւն առաւ մեռած տեղից կամ վերկացաւ մեռածների միջից:

<sup>1)</sup> Այս շաբականը անշուշտ պիտի սովորեն սաները. որպէս զի Զատկի Տնօրհնէքին մասնակից լինեն իրենց տան քահանալի օքնութեանը:

<sup>2)</sup> Բացատրել սահներին անհամար ալիս շաբականալի մտքերը. արդպէս վարուել առհասարակ և միւս շաբունակների դասաւանդման ժամանակ:

Ինքը թէն մեռաւ՝ բայց իւր այդ մահով մահը չնշեց—մահ պատճառով մեղքի իշխանութեան գլուխը ջախչախեց:

Եւ իւր Յարութիւն առնելով՝ մեզ կեանք պարզեց. որովհետև զրաւական տուաւ մեզ ոչ միայն Ղազարոսի յարութիւնը՝ այլ և իւրը—թէ ինչպէս Ղազարոսը մեռաւ և յարութիւն առաւ՝ և ինչպէս ինքը՝ այնպէս էլ մենք—թէն կմեռնենք՝ բայց յարութիւն կառնենք. որովհետև մահը խափանուել է. էլ մահ չկայ. Յիսուս ջնշեց այդ մահը<sup>4)</sup>:

Փառք տանք նորան յաւիտեանս:

#### Լ.Յ. ԱԽԵՏԱՐԱՆ ՅԵՏ ՅԱՐՈՒԹԵԱՆ:

Իսկ մետասան աշակերտքն գնացին ի Գալիլեայ, ի լեանն՝ ուր ժամադիր եղն նոցա Յիսուս:

Իբրև տեսին զնա՝ Երկրպագին նմա. և ոմանք Երկուացան:

Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա և ասէ:

Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկը. որպէս առաքեաց զիս հայր, և ես առաքեմ զձեզ:

Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս:

Մկրտեցէք զնոսա յանուն չօր և Որդւոյ՝ և չողւոյն Սըրոյ:

Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատուիրեցի ձեզ.

<sup>1)</sup> Բացատրել սահներին զիւրըմբոնելի ձեռվ—թէ արդար մարդը—ողորմածը, ընկերի բարիքի համար խաչակիրը՝ չէ մեռնուամ, մահից իւտոյ էլ նա կենդանի է. իսկ մնդաւորը՝ կենդանի ժամանակն էլ մեռած է. Ընդարձակել, տպաւորել.

Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝  
մինչև ի կատարած աշխարհի <sup>1)</sup>:

Իսկ տասն և մէկ աշակերտները գնացին Գալիլեա,  
այն լեռը՝ որտեղ ժամադիր էր եղել—նշանակել էր  
նոցա Յիսուս:

Երբ աշակերտները նորան տեսան՝ երկրպագու-  
թիւն տուին. բայց ոմանք տարակուսեցան, կասկածեցին:

Մօտենալով նոցա Յիսուս՝ խօսեցաւ նոցա հետ ու  
ասաց.

Տուած է ինձ իշխանութիւն երկնքի և երկրի վերայ,  
ինչպէս սւզարկեց ինձ չայրը՝ նոյնպէս և ես ուզարկում  
եմ ձեզ:

Գնացէք այսուհետեւ, քարոզեցէք Աւետարանս բո-  
լոր հեթանոսների մէջ. Ճնդ նոքա աշակերտին ձեզ.

Հաւատացողներին կմկրտէք Ամենասուրբ Երորդու-  
թեան—չօր, Որդւոյ և Սուրբ Հոգւոյ անունով:

Կուտուցանէք—կսորվեցնէք նորանց, պահել կամ  
կատարել այն ամենը՝ ինչ որ պատուիրել եմ ձեզ.

Իսկ ես միշտ ձեզ հետ կլինեմ—մինչեւ աշխարհի  
վերջը:

ՅԱՐՈՒԹԻՒՆԻՑ ՅԵՏՈՅ ՅԵՍՈՒՍԻ ՅԱՅՏՆՈՒԽԻ Ը ԻՐ ԱՇԱ-  
ԿԵՐՆԵՐԻՆ. ԵՒ ՊԵՏՐՈՍԻ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ՈՒՐԱՅՈՒԹԵԱՆ  
ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ՆԵՐՈՒՄԸ. Մատթ. ԺԶ. 9—14. Ղուկ. ԻԳ.  
13—46. Յով. Ի. 19—29. ԻԱ. 1—17.

Յիսուս իւր Յարութիւնից յետոյ քառասուն օր  
մնաց երկրիս երեսին. Երեսում էր իւր աշակերտներին,  
բացատրում էր նոցա իւր մեռնելուց առաջ ասած խօս-

<sup>1)</sup> Այս աւետարանն ես անշուշտ պիտի սովորեն սա-  
ները. Դարձեալ տնօրհնէքի մասնակցութեան համար.

քերը, մեկնում էր իւր վարդապետութիւնները և ճաշա-  
կից էր վիսում նոցա երբեմն երբեմն:

Յարութեան հինգ առաջին օրը յայտնուեցաւ Մա-  
րիամ Մագդաղենացուն: Յետոյ ուրիշ կերպարանքով  
երեսցաւ աշակերտներից երկուսին, որոնք արտն էին  
գնում: Սրանք իրար յայտնում էին Յիսուսի իրանց  
երեալը կամ յայտնուիլը. բայց չէին հաւատում: Յետոյ  
տասն և մէկ աշակերտներին միանգամից յայտնուեցաւ և  
յանդիմանեց նոցա անհաւատութիւնը: Եւ պատուէր  
տուեց—գնալ ամին աշխարհ և Աւետարանը քարոզել,  
հաւատացողներին մկրտել: Յայտնուեցաւ էմմաւուս  
գիւղը զնացող իւր երկու աշակերտներին, որոնք իսկոյն  
յետ դարձան կրկին Երուսաղէմ, մտան վերնատունը և  
պատմեցին բոլորին: Մի անգամ երբ աշակերտները  
միաշաբաթի—կիւրակէ երեկոյին, չըէաների ահիցը,  
գոները փակել էին ու նստել՝ յանկարծ երեսցաւ նոցա  
մէջ Յիսուս, ողջունեց նոցա. ցոյց տուեց ձեռքերն  
ու խոցուած կողը. աշակերտներն ուրախացան. և ա-  
սաց—ինչպէս ուզարկել է ինձ չայրը՝ նոյնպէս և ես  
ուզարկում եմ ձեզ. և փշելով նոցա վերայ՝ ասաց—  
Առէք Սուրբ Հոգին: Եթէ մէկի մեղքը կթողնէք—կնե-  
րէք՝ թողնուած կլինի. իսկ եթէ մէկինը կկապէք՝ կա-  
պուած կլինի <sup>1)</sup>:

Այդ ժամանակ Թովմասը բացակայ էր. Երբ նա  
եկաւ և պատմեցին նորան—թէ տեսել են Յիսուսին՝  
նա պատասխանեց—մինչեւ շտեսնեմ նորա ձեռքերի վե-  
րայ բեկոների նշանը և մատներով էլ շշոշափեմ բիեռ-

<sup>1)</sup> Բացատրել սաներին եթէ հնարաւորութիւն կամ—  
թէ ալդ խօսքերով հաստատեց Յիսուս Զեռնաղբութեան կամ  
կարգի խորհուրդը՝ կապելու և արձակելու իրաւունքով:

Ների տեղերը և մինչև ձեռքս շխրեմ խոցուած կողը՝  
շեմ հաւատալ:

Ութ օրից յետոյ դարձեալ հաւաքուած էին Վեր-  
նատանը փակ դաներով: Յանկարծ երեցաւ նոցա մէջ  
Յիսուս և ասաց—Ողջն ձեզ: Դառնալով դէպի Թով-  
մասը՝ ասաց—բեր մատներդ և դիր խոցերիս վերայ.  
տես ձեռքերս. բեր ձեռքդ և խրէ կողս. և մի լինիր  
անհաւատ՝ այլ հաւատացեալ: Պատասխան տուեց Թով-  
մասը—Տէր իմ և Աստուած իմ: Ասում է նորան Յիսուս  
—Դու այժմ տեսալ՝ և նրա համար հաւատացիր. բայց  
երանի նրանց՝ որոնք ինձ շտեսած կհաւատան:

Մի անգամ էլ յայտնուեցաւ Յիսուս իւր աշակերտ-  
ներին Տիբերական ծովի ափին. երբ աշակերտները  
գնացել էին ձուկ որսալու: Նոքա նկատեցին Յիսուսին:  
Յիսուս հարցրեց—ունի՞ն ուտելու ձուկ: Դուրս եկան  
ափը, կրակի տեղ կար. կրակ արին, խորովեցին ձիներն  
ու կերան: Երբ ճաշեցին Յիսուս ասաց Պետրոսին—Սի-  
մոն Յօնանու, այսինքն Յօնանու որդի Սիմոն, սիրում  
ես ինձ դրանցից աւելի: Պատասխանում է—Այն. Տէր.  
և Դու գիտես, որ սիրում եմ Քեզ: Ասում է Յիսուս—  
Արածիր ոչխարիներս <sup>1)</sup>:

Եյս խօսքերից յետոյ՝ դարձեալ ասաց Յիսուս—ճշ-  
մարիտ եմ ասում քեզ, Սիմոն. Երբ դու մանուկ էիր,  
ինքդ էիր գոտէպնդում—ամրացնում մէջքդ գոտիով,

<sup>1)</sup> Բացարել—որովհետեւ երեք անգամ ուրացաւ Պետ-  
րոսը՝ ուստի երեք անգամ է հարցնում Յիսուսը, որ լիշեցնէ  
երեք անգամ ուրացութիւնը. իսկ որ երեք անգամ նորա պա-  
տասխանը առնում է՝ ալդ նշանակում է—որ ինչպէս երեք  
անգամ ուրացաւ՝ նոյնպէս և զջում է երեք անգամ. աբնժա-  
մանակ միաւն Յիսուս ընդունում է նորան իւր աշակերտների  
թւում, առելով—Արածիր ոչխարիներս կհովտես բանաւոր  
հօտը Առաքելական պաշտօնով:

Ինքդ էիր զնում ուր որ կամենում էիր. բայց երբ  
կծերանաս՝ ձեռքերդ կբարձրացնես և ուրիշները կկապեն  
մէջքդ և կտանեն՝ ուր դու ինքդ չես կամենալ <sup>1)</sup>:

Յովհաննիսի մասին ասաց Յիսուս—Կամենում եմ  
որ դա մնայ. մինչև ես գամ <sup>2)</sup>). քեզ ինչ փոյթ՝ դու եկ  
իմ ետեից:

Ճարականներ և Երգեր Յարութիւնից յետոյ կատարուած  
անցըքերի:

Ա. ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՅՈՒԹԵԱՆ ՆԵՐՄԱՆ ԵՐԳ.

Ճնորհեալ վիմին եկեղեցւոյ՝ զոր պահեցեր ի հոռելոյ.  
և կանգնեցեր ի գլորելոյ՝ վասն սրտիւն արտասուե-  
լոյ: Ներսէս Ճնորհալ. Այսօր Անձառից:

Սիմոն Պետրոսին, որին շնորհեցիր—պարգևեցիր  
Եկեղեցւոյ վէմ—Տիմնաքար լինելու պատիւը, վայր ընկ-  
նելուց—սայթաքելուց պահեցիր և գլորուելուց կանգնա-  
ցիր. որովհետեւ սրտանց զզաց, սրտանց արտասուեց:

<sup>1)</sup> Բացարել սաներին—որ ի գէմս Պետրոսի՝ Յիսուս  
գուշակեց իւր աշակերտների նահատակական կեանքը, մար-  
տիրոսական վախճանը: Նրանք իրենց բնական մահով չպի-  
տի մեռնէին:

<sup>2)</sup> Բացարել—«կամենում եմ» որ դա մնայ. մինչև ես  
զաման Յիսուսի խօսքը—որ իւր սիրելի Յովհաննէս աշակերտի  
համար որոշեց բնական մահով մեռնել. և իրաւի նա ապրեց  
դրեթէ 110 տարի իսկ ըստ ոմանց՝ 100 և մեռաւ խաղաղու-  
թեամբ. մինչև անգամ ինքը նշանակելով իւր մահուան օրը:

լթ. 2. ՅԻՍՈՒՄԻ ՅԱՅՏՆՈՒԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՎԵՐՆԱՏԱՆ  
ՄԵԶ.

Դրօքն փակելովք երկեալ Յիսուս Աշակերտացն և  
առէր խաղաղութիւն ընդ ձեզ: Ճարական:

Վերնատան դռները փակուած էին թէկ՝ բայց Յիսուս  
երեցաւ աշակերտներին այնտեղ և ասաց—խաղաղու-  
թիւն լինի ձեզ:

Որ յերկրորդի լինելութեանս՝ յետ յարութեան քում  
էակցին: Մտեալ ի վերնատունն դրօքն փակելովք չնորհելով  
ըստ առաջին փշմանն զքեզ մետասանիցն:  
Առաքելոցն ասաց առէք Հոգին սուլբ:

Քո էակցի յարութիւնը, որ մեր երկրորդ լինելու-  
նրանից յետոյ մտաւ դռները փակած վերնատունը  
և առաջին փշմանն<sup>2)</sup> նման՝ չնորհեց քեզ իւր մե-  
տասան առաքեալներին:

Ասելով—առէք Սուլբ Հոգին:

<sup>1)</sup> Բացատրել սաներին՝ եթէ միայն ըմբռնելի կարելի է  
անել—որ առաջին լինելութիւնը՝ մեր ստեղծագործութիւնն էր,  
որ եղաւ. բայց Պատուիրանազանցութիւնից յետով՝ այդ լինե-  
լութիւնը մահացաւ, կեանքը մեռաւ, մահը լազմեց. յակ Յի-  
սուսի Յարութիւնովը՝ երկրորդ լինելութիւնը լառաջ եղաւ.  
որովհետեւ մահը խորտակուեց, չնջուեց և մեզ նորից առաջին  
լինելութեան կեանքը պարզեցաւ:

<sup>2)</sup> Բացատրել—առաջին փշումն է՝ որ Հոգեղէն զանգուա-  
ծին Աստուած փշեց իւր շունչը—իւր Հոգին. և Հոգեղին ձե-  
ռակերտը զարձաւ էակ բանական, գոյացութիւն իմացական—  
մարդ՝ Հոգւով և մարմնով, ահա այն առաջին փշման նման  
փշեց և ալժմ Յիսուս իւր առաքեալներին նոյն սուրբ Հոգին.  
որովհետեւ Պատուիրանազանցութիւնից յետով նոյն Աստուա-  
ծալին Հոգւով ազդեցութիւնը թուլացել էր մարդու մէջ. Յի-  
սուսի կրկին փշմամբը՝ վերականգնեցաւ. Եթէ լաւ բացա-  
տրուի՝ սաները կարող են հասկանալ. օրինակներով:

ԽԱ. 3. ԹՈՎՄԱՅԻ ԱՆՀԱՒՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱԻԱՏԱԼԸ:

Երեկոցար յարուցեալ՝ եկեղեցւոյ քո հիմանցն:  
Յորմէ Թովմաս հրաժարէր ոչ հաւատալ զքեզ տե-  
սողացն:

Որում ցուցեր այսօր փափաքողին զվէրս մարմնոյդ:  
Սարսելով Թովմայի՝ շօշափէր զխոցուած տիգին և  
բենացն.

Եւ գոշելով վերաձայնէր՝ Տէր և Աստուած դաւանելով  
զյարուցեալդ.

Որով առաք զերանին՝ որք ոչ տեսեալ՝ հաւատացաք:

Եկեղեցուկ համար իրեն հիմքեր համարուած առաքեալ-  
ներիդ՝ երեցար և յայտնուեցար յարութիւնիցդ յետոյ.

Քեզ Յարուցեալ տեսնողներին՝ առաքեալներիցդ Թով-  
մասը միայն չէր կամենում հաւատալ:

Գու ցոյց տուիր նորան այսօր մարմնոյդ վէրքերը, որ  
շատ էր փափագում տեսնել:

Սարսափով ու վախով էր շօշափում Թովմասը տէգի և  
բենաների խոցուած տեղերը.

Եւ ձայնը բարձրացնելով՝ Տէր և Աստուած էր անուա-  
նում ու գաւանում Յարուցեալիդ.

Եւ այդ առթիւ՝ մենք ևս առանք Քո երանին—որ շտե-  
սած՝ հաւատացինք Քեզ:

ԽԱ. 4. ԿԱՊԵԼՈՒ ԵՒ ԱՐՁԱԿԵԼՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱՄ  
ԻՐԱՒՈՒՆՔԸ

Որ տիրականդ իշխանութեան հաղորդս արարեր  
զսուրբ զտուաքեալմն. կապել և արձակել զորդիս  
մարդկան յերկինս և յերկը....

Քո Տիրական Աստուածային իշխանութեանը կամ՝ իրաւունքին մասնակից արիր սուրբ Առաքեալներիդ—մարդկանց գործած մեղքերը կապելու և արձակելու թէ երկընքումը՝ և թէ երկրիս վերայ:

## IV. ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Յիշեալ և դոցա նման շարականները, երգերը՝ և առհասարակ Զեռնարկիս մէջ գրուած դոյնալիսի սաղմուները, իմաստները, Աւետարանները պիտի դասաւանդուին ոչ իրրե անհրաժեշտ մասեր դասընթացի՝ այլ իրրե յօդակապեր դասընթացի համար նշանակուած պատմական յօդուածների և իրրե բացատրութիւններ յօդուածների մէջ եղած մտքերի, որպէս և՝ իրրե զարգացուցիչ միջոցներ. ուստի՝ եթէ ուսուցիչը նկատում է— թէ դասարանը ձեռնհասութիւն չունի ըմբռնելու և իւրացնելու այդ բացատրական յաւելումները՝ դրա հետ և դասական ժամերի թիւն էլ չէ ներում՝ այդպիսի հանգամանքներում այդ յաւելումները կարող է բաց թողնել և կամ ինքը, ուսուցիչը, հարևանցօրէն յիշէ ու անցնէ իրրե բացատրութիւն և ոչ իրրե հաշուատու դաս-

34. ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ ԵՒ ՄԱՏԱԹԻԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.  
Ղուկ. ԻՊ. 42—50. Գործք Ա. 10—15. 23—26.

Յիսուս իւր Յարութիւնից յետոյ վերջին անգամ հաց բեկանելով իւր աշակերտների հետ՝ վերջացրեց իւր խօսքը ասելով—Այս խօսքերն էին, որ խօսեցայ ձեղ հետ, երբ ձեղ մօտ էի. թէ օրէնքների, մարդարէութիւնների և սաղմունների մէջ բոլոր գրուածները իւր մասին պէտք է կատարուին։ Եյն ժամանակ բաց արեց

նոցա միտքը՝ սուրբ գրքերը և մանաւանդ իւր մասին գրուածները հասկանալու։ Եւ ասում է նրանց—Եյսպէս պէտք է շարշարուէր Քրիստոսը. երրորդ օրը յարութիւն առներ և նորա անունով ապաշխարութիւն և մեղաց թողութիւն քարոզել ամեն ազգերի մէջ, Երուսաղէմից սկսեալ։

Եւ դուք էք խօսքերիս վկանները։  
Եւ ահա ես կուղարկեմ ձեղ իմ չօր աւէտիրը. և դուք կնստէք Երուսաղէմ քաղաքում, մինչև զօրութիւն ստանաք վերեկից։ Հանեց նոցա մինչև Բեթանիա և ձեռքերը վեր բարձրացնելով ու նրանց վերայ տարածելով՝ օրհնեց նրանց։ Եւ երբ օրհնում էր նրանց՝ բաժանուեց նրանցից և երկինք էր համբառնում։

Ամպը ծածկեց Յիսուսին աշակերտների աշքերից։  
Եւ երբ նոքա ապշած ու սառած աշքերով նայում էին իրենց Ուսուցչի երկինք բարձրանալը՝ և ահա սպիտակ շորելով երկու մարդ են երևում առաքեալներին և ասում —Ո՛վ Գալիլեացի մարդիկ. ինչո՞ւ ապշած դէպի երկինք էք նայում. այս Յիսուս՝ որ վերացաւ դէպի երկինք, այնպէս էլ կգայ, ինչպէս որ տեսաք նորան երկինք զնալիս։

Եյն ժամանակ Զիթենեաց սարից իշան և զարձան Երուսաղէմ, որ մի շաբաթուայ ճանապարհ էր <sup>1)</sup>: Եւ երբ Վերնատուն մտան՝ բարձրացան Վանքը—իրենց ընակութեան տեղը. և էին—Պետրոս և Յովհաննէս, Յակոբոս և Անդրէաս, Փիլիպպոս և Թովմաս, Բարդուղիմէոս և Մատթէոս, Յակոբոս Ալփեայ և Յմաւոն նախանձայուղ և Յուղա Յակոբեան <sup>2)</sup>:

<sup>1)</sup> Հարցնել սաներին—ուրախ կլինէին առաքեալները Յիսուսի, իրանցից հեռանալովը, բաժանուելովը՝ թէ կտխրէին. ինչո՞ւ Տես Զեռնարկս Ա. տարի։

<sup>2)</sup> Գրել տալ սաներին իրենց տեսրերի մէջ Առաքեալների անունները, որ սովորեն, իսկ գիրք ունեցողներին կարիք չկար։

Սոքա ամենքը, Յիսուսի մօր, աշակերտուհի կանց և աշակերտների հետ՝ որ հարիւր քսան հոգի էին, միշտ և ամեն օր միասին էին և միաբան ազօթում էին:

Գետրոս առաքեալը առաջարկեց մատնիշ Յուդայի փոխանակ ընտրել եօթանասուն երկու աշակերտներից մէկին, որպէս զի լրանայ տասներկու թիւը<sup>1)</sup>: Աղօթեցին, վիճակ ձգեցին երկուսի մէջ՝ Յովսէփի, որ Բարսաբայ էին կոչում և յետոյ Յուսոսս աստեցաւ. և Մատաթիայի. վիճակը դուրս եկաւ Մատաթիային. և տասն և մէկ առաքեալների թուի մէջ մտաւ. լինելով երկուտասաններողը:

Համբարձման տօնը մեր Եկեղեցին կատարում է Զատկից քառասուն օր յետոյ. միշտ հիգշաբթի օրը:

#### ԽԲ. ՇԱԲԱԿԱՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ.

Համբարձաւ Տէրն մեր յերկինս՝ ասելով՝ աշակերտացն.

Նստարուք ի քաղաքիդ Երուսաղէմ.

Մինչև զգենուցուք զզօրութիւն ի քարձանց:

Համբարձաւ Տէրն մեր Քրիստոս օրհնութեամբ ընդ ամպս երկնից.

<sup>1)</sup> Բացատրել սաներին—որ տասներկու թիւը առնուած է Յակոբի որդուց թուից. Յակոբի որդուց անուններով կոչուեցան Խարաբէլեան ազդի տասներկու տոհմերը. Այդ տոհմերի թւով էին և Յիսուսի Առաքեալները. Լաւ կլինէր գրել տալ սաներին իրենց տետրերի մէջ տասներկու տոհմերի անունները—Ռուբէն, Շմաւոն, Դևի, Յուդա, Զաբուղոն, Խսաքար, Դան, Գագ, Սաեր, Նիփթաղիմ, Յովսէփ, Բէնիամին, Դևիթ և Յովսէփի փոխանակ՝ տոհմագլուխ նահապետներ կար: զեց Յակոբը Յովսէփի երկու որդուց—Եփրէմին և Մանսակինս-

Եւ առաքելոցն երկրպագեալ՝ դարձան յերուաղէմ.

Միաբանութեամբ վերառաքէին զաղօթս:

Մեր Տէրը երկինք համբարձաւ՝ ասելով իւր աշակերտներին.

Նստեցէք դուք Երուսաղէմ քաղաքում.

Մինչև զօրութիւն կառնէք վերկից:

Մեր Տէր Քրիստոսը աշակերտներին օրհնելով՝ ամպերի միջով երկինք համբարձաւ.

Եւ առաքեալները երկրպագութիւն տալով Նորան՝ դարձան Երուսաղէմ.

Եւ միաբանութեամբ աղօթք էին անում:

35. ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ: Գործք. Բ. 1—4: 12—15, 32—33,  
41: 44:

Պեհտեկոստէի<sup>1)</sup> օրերը երբ լրացան, նոքա ամենիը<sup>2)</sup> միասին էին և միաբան: Յանկարծ այն տան մէջ, ուր նոքա նստած էին, սաստիկ քամու նման հր-

<sup>1)</sup> Բացատրել Պեհտեկոստէն. Հրէից Պեհտեկոստէի և մեր Հոգէգալուսի նմանութիւնը և տարբերութիւնը—այն տեղ Սինա լեառը՝ այս տեղ վերնատուն. այն տեղ Խորակէլի ժողովուրդը՝ զարմանքի և երկիւղ մէջ՝ այստեղ՝ և Խորակէլացիք և օտար ազդիք հիացման մէջ. այն տեղ Սինան ծուխի ու բոցերի մէջ, շանթ, որոտ, կալծակ, փողերի հնչմունք և Աստուծութ ձախը, իօսքը, պատուիրաններ, այս տեղ՝ հողմ և հրեղէն լեզուներ, շնորհք լեզուադիտութեան. այն տեղ օրէնքը. այս տեղ՝ շնորհք. այն տեղ պատրաստութիւն՝ օրէնքները պաելու. այս տեղ պատրաստութիւն և սպառազինութիւն՝ Սուրբ Աւետարանի քարոզութեան և Առաքելութեան,

<sup>2)</sup> Հարցնել—ովքեր էին ամենքը.

շին լսուեցաւ՝ որ երկնքիցն էր դալիս։ Հրեղէն կամ կրակէ լեզուներ երևեցան։ և իւրաքանչիւրի զլխի վերայ մի մի լիզու իջաւ։ նոքա ամենքը Սուրբ Հոգւով լցուեցան։ և սկսան խօսել զանազան լեզուներ՝ ինչպէս Հոգին խօսացնում էր նրանց<sup>1)</sup>։

Սքանչանում—զարմանում էին վերնատան մօտ եղող և լսող ժողովուրդը. և միմեանց ասում էին—այս ի՞նչ պիտի լինի։ Ոմանք ես կատակի—հանարի ձեռվ կամ արհամարհանքով, ծագրելով ասում էին կերած—խմած կը լինին։ Վերկացաւ Պետրոսը՝ տասն և մէկ առաքեալների հետ առաջ եկաւ դէպի ժողովուրդ. բարձրացրեց ձայնը և ասաց—Ռ'վ Հրէաստանի ժողովուրդ, և զուր՝ որ Երուսաղէմումն էք բնակում՝ այս ձեղ թող յայտնի լինի և լսեցէք ինձ։ Ռ'չ թէ, ինչպէս դուք էք կարծում, ոսքա արրած են. ոչ, որովհետեւ գեռ երեք ժամն է։

Բայց այս է պատճառը—Եյն Յիսուսին, որին դուք սպանեցիք փայտից կախելով՝ նորան յարութիւն տուեց Սատուած, որին մենք ամենքս էլ վկայում ենք։ Աստուծոյ աջովը բարձրացաւ, Հոգւոյն աւետիքը Հօրից ստանալով, տուեց մեղ. որը դուք ահա և տիմնում էք և լը սում։ Եւ շատ այսպիսի խօսքերով ուսուցանում էք նրանց։

Նրանցից սմանք յօժարութեամբ ընդունելով՝ Պետրոսի քարոզութիւնը՝ մկրտուեցան նոյն օրը. որոց թիւն էք երեք հազար հոգի։ Բոլոր նոր հաւատացեաները միասին էին. նրանց ունեցածը հասարակաց էր<sup>2)</sup>։

<sup>1)</sup> Բացատրել սաներին մութ նախազասութիւններն ու բառերը—աղաւնի, ուղարկուած, անկէզ, զինեց, հողմերի—քամիների, զտար քո հանդիսաց.

<sup>2)</sup> Բացատրել հասարակաց էր խօսքը—իմն ու քոնը չկար. ինչ որ նուիրում էին նրանց՝ նրանք բոլորն էլ հաւատապէս վալելում էին իրրե մի տան, մի զերդաստան անբաժան անդամներ։

Հոգեգալստեան տօնը մեր Եկեղեցին կատարում է Զատկից՝ յիսուն օր յետոյ. իսկ Համբարձումից՝ տասն օր յետոյ։

#### ԽԳ. ՇԱՐԱԿԱՆ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ

Առաքելոյ աղաւնոյ իշանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց. ի նմանութիւն լուսոյ փայլման՝ Հրազդինեաց անկիզելի զաշակերտան։ Մինչզեռ նստէին ի սուրբ վերնատանն։ Որ գնաս ի վերայ թեոց հողմոց. Այսօր ի հրեղէն լեզուս բաժանեալ հանգեար յառաքեալսն սուրբ հոգի։

Ուղարկուած աղաւնին լուսոյ փայլի նմանութեամբ, մեծաձայն հնչումով երկնքից իշնելով՝

Անկէզ—չալրող կրակով զինեց—չնորհքով զարդարեց աշակերտներին այն ժամանակ՝ Երբ նոքա վերնատան մէջ էին։ Որվ սուրբ Հոգի, որ հողմերի—բամիների վերայ ես շրջում։

Այսօր կրակէ լեզուների բաժանուելով՝ առաքեալների մէջ զտար քո հանդիսաց<sup>1)</sup>։

<sup>1)</sup> Բացատրել սաներին մութ նախազասութիւններն ու բառերը—աղաւնի, ուղարկուած, անկէզ, զինեց, հողմերի—քամիների, զտար քո հանդիսաց.

Վ Բ Ի Պ Ա Կ

Էջ	Ս Խ Մ Լ	Ո ւ Ղ Ւ Ղ
6	դասախոսելո	դասախոսել
13	գիշերին	ի գիշերին
27	պատուիրանաչութիւն	պատուիրազանցութիւն
30	Աստուխոյ	Աստուծոյ
51	մկրտուի նորանից <sup>1)</sup>	մկրտուի նորանից <sup>2)</sup>
—	Յունվարի 6-ին <sup>2)</sup>	Յունվարի 6-ին <sup>2)</sup>
—	<sup>3)</sup> բացատրել —	<sup>2)</sup> բացատրել.
65	բարակ տեսակը — ծիրանի՝ բարակ տեսակը; ծիրանի՝	
67	<sup>1)</sup> <sup>2)</sup>	
76	բժշկութիւն Շարական,	բժշկութիւն, Շարտկան:
77	ալս խօսքերը	ալս խօսքը
79	ալն ժամանակ	ալնաղէս
86	զանձարանում	զանձանակում
89	նեղացներ.	նեղացնել.
94	երդւում:	երդւում:
95	կամ սրտերը	կամ մեր սրտերը
96	Զարիւնն ըմպէս...	Զարիւնն ըմպէ...
101	Բացատրել — սաներին	Բացատրել սաներին —
	Տնօրհնէքը.	Տնօրհնէքը.
102	շարունակների	շարտականների
106	Արածիր ոչխտրներս կհո— Արածիր ոչխարներս — կհո— վուես բանաւոր հօտը — վուես բանաւոր հօտը	

Գիշն է 40 Կ/ՎՊ.

Ճանապարհածախով 60 լ.

Վաճառում է բոլոր գրավաճառների մօտ. Եւ հեղինակի մօտ այս հասցեով՝ Տիֆլիս, Մարինսկո-Անանու-  
սկոյ ժանուար 15-20% զիջումն.



2 (075)  
K - 15